

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24090

Тюльп

Чиуџир



1925



24090

ԼԵԿՈՆ ՀԱՆԵԹ

# ԿԱՅԱՐ

ԹԱՑԵՐԱԿ ՌԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԴԱՐԵՐԵՆ

ԳԱՅԱՔԻՐԵ

ՏՊԱՐԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»

1926

891.99

Ը - 30

891.99

Ե - 30

ՄԱՏԵՆԱՇԱՐ "ՅՈՒՍԱԲԵՐԻ", ԹԻՒ 11

"Բարեկայութիւն" Ch. Ալեքսանդր

Լեռն ՀԱՆՑ

Կենացի 1926

Տիկեր

# ԿԱՅՍՐ

ԹՈՒՏՈՒՄ ԱՐՏՈՎԵԴՈՒՄ ԳՈՎԵՐԻ



"HOUSSAPER"  
JOURNAL ANNUEL  
IMPRIMERIE & LIBRAIRIE  
S. A. CO  
LE CERCLE

Գ. Ա. Հ Ի Ր Ե

Տպարան "ՅՈՒՍԱԲԵՐԻ",

1925

16031

# ՆԱԽԾՆԹԱՑ ԱՐԱՐ

## ՏԵՍԱՐԱՆ

ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՏԵՂԻ  
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՎՐԱՆԻՆ ՏԱԿ

Աշ կողմը յած ու լայն բազմոց մը, մեջտեղը յածլիք սեղան ու մեկ-երկու արուատիք Գլխաւոր մատչել հակատեն, ուրիշ անցք մը ձախճն կը տանի կից վրանք, ուր նեղարանն է։ Մուտքեաւ վարագոյթներ զոց են ու վրանին տակ կես-մուր մը կը տիր։

1

Հրամանատարը՝ 'Երկեթոր Ֆուկս' նասած է բազմոցին եզերք գլուխը կախ։ Բայց կամաց-կամաց կը օքակը ու դանդաղ կ'ելնէ ոտքի։

Կարնահասակ գիրուկ մարդ մըն է, յիսունք անց, դեմքը խիս բուխ, խիս ու երկար սեւ մազերով, կարն ու ցանցառ մօրուք, մանր ու անհանգիս աչեր։

Եհկեթոր ՅՈՒԿԱՄ. — (Մածկոս) Կա՛յոր. (Հեղին) Կա՛յոր... (Յանկարծ) Ինչո՞ւ ոչ Սակայն... (Ու կը մնայ նորէն անշարժ ու մտասոյզ),

59962-աի



2665-72

ՀԱՅՈՒԹԱՑ ԱՐԱՐ  
SAPEK  
"ՀԱՅՈՒԹԱՑ ԱՐԱՐ"  
IMPERIALE ARMÉE  
ARMÉE D'ARMÉE  
ARMÉE DE TERRE

Ննջաւանի վարագոյքն կը մտնէ սանու երեցը՝ ձեռ-  
քը աւետարան ու խաչ օղի մը մէջ փաքքած:

ԵՐԵՅԸ.— ՈՂՋՇԻՆ և օՐՀԱՌԻՆ մհծ ապարագի-  
տին:

ՆԻԿԵՑՈՒՐ.— Ա՛խ, արդէն աւարտե՞ր ևս ժամանա-  
ցութիւնը:

ԵՐԵՅԸ.— Շիսակ Աստծու սեղանէն է, որ կուզամ:  
Մեր Փրկչի աջն ու խաչը հովանի քեզի:

ՆԻԿԵՑՈՒՐ.— (Խոնարի ու ջերմեռանդ կը ծով ու կը  
համբուշ սբութիւնները):

ԵՐԵՅԸ.— Մասյ ննջարանդ, ըստ սովորութիւնն,  
բայց, ինչպէս կ'երեւայ, գուն չես պատկած այս զիշեր-  
աչքերդ ալ կը վասին ասարօրինակ: Կ'աղօթէի՞ր:

ՆԻԿԵՑՈՒՐ.— Պէտք էր, որ խօսէի Աստծուս հնա:  
Պէտք էր, որ փորէի, քրքրէի, հասնէի խորքը, խորքը...  
Ա՛, շա՛տ մութ վայր է այդ հոգի ըստածը, որ կը սո-  
տովին անկուշա ցանկութիւններ, կը ոստոսան ամբար-  
տաւան խորհուրդները, կը հրհսան բնազդները անժուժ-  
կալ եւ ուր կրքերը, միշտ արթուն, վազրի մը նման  
կծկուծ հն՝ սրան վրա ն'ուռելու:

ԵՐԵՅԸ.— Ճշմարի՛տ է, ապարագե՛տ, գծած պատկերդ,  
բայց խարս անյարի քո՛ւ շրթունքներուդ: Ո՞վ կա ամ-  
բողջ բանակիդ մէջ քեզմէ աւելի առնձ զրած իր մարմ-  
նին ու կրքերուն, քեզմէ աւելի պարզ ապրող ու ժուժ-  
կալ, քեզմէ աւելի աղօթքի, ժամի ու ծոմի հասեւադ:

ՆԻԿԵՑՈՒՐ.— Երե՛ց, մի՛ ծածկիր վէրքը շոյուղ պա-  
րասանուլ թո՛ղ որ կոհմա:

ԵՐԵՅԸ.— Մո՞ւտ է խօսածս: Շարաթւան չըրս օրը միս  
չես ուսեր: Կրէք ասարի է կնոջդ մահը, և գուն կին չես  
տեսեր: Հողիդ միշտ խոնարի է եղիր ու ողորմած: զէնքիդ

Բոլոր յաջողութիւնը վերագերը ևս ընկերներուդ, բոլոր  
յաղթանակները՝ քու զինուրներուդ, որոնք ատոր հա-  
մար ալ կը պաշտեն քեզի:

ՆԻԿԵՑՈՒՐ.— Այգաէ՛ս: Իսկ ես կ'ըսեմ քեզի՝ մո՛վթ  
է, մո՛ւթ, մարգու հոգին: Հերի՛ք է: Եթէ եկեր ևս զովքս  
ընելու, շատ ձախորդ օր ես ընարեր աւելի լու է՝ աղօ-  
թիս ինձի համար:

ԵՐԵՅԸ.— Աս է արգեն իմ ըրածս տիւ ևս զիշեր: ա-  
նարժան ազօթքս իմ սպարապւտիս համար, իր հոգիին,  
իր անձին, իր ցեղին, ինչպէս և իր բանակին համար,  
իր ձեռնարկին, արշաւանքին, իմ անարժան բերնովս,  
տիւ ևս զիշեր:

## 3

ԹԻԿԵՑԱԳԱՀ ՄԸԼ.— (Ճակակ վարագործերուն մէջէն)  
Խառնակ ծովկաս, կհսարական քաղաքէն:

ՆԻԿԵՑՈՒՐ.— Ա՛, զիրջապէ՛ս: Նի՛րս բեր: (Երեցը նամ-  
բելով) Աշ'ւ:

## 4

Կը մտնի նորեկը, այրւած, տուպջ ու խոռոր ալե-  
խառն մարդ մը: Նիկեթոր կը օտապէ գեմը ու կ'ողջա-  
զուրւին:

ԻՍԱՀԱԿ ՖՈԿԱՍ.— Խէ՛ր ըլլա, Նիկեֆո՛ր: Ի՞նչ կը  
դառնան:

ՆԻԿԵՑՈՒՐ ՖՈԿԱՍ.— Դարձածը... կ'իմանաս: (Յան-  
կարձ) Նախ ըսէ՛ ինձի՛ ահաս՞ր բանակու:

ԻՍԱՀԱԿ.— Ի՞նչ:

ՆԻԿԵՑՈՒՐ.— (Ճպարս) Զգիտեցի՛ր ճամբուռդ վրա ճեր-  
մակ վրաններուս անսահման ծովը, չնամրեցի՛ր անվերջ  
զնդիրուս խիզախ շարքերը, անվախ գօրքերուս զըւարթ

թէմքերը՝ Քեզի կը հարցնեմ՝ տեսա՞ր բանակաւ:  
ԻՍՍՀԱԿ.— Նո՞ր պիտի տեսնեմ ևս քու բանակդ:  
Ճիշտ է, որ ի հովուրէն քիչ դուրս կուզամ, բայց առաջն անգամը չէ, կարծեմ, որ բանակիդ մէջն եմ:

ՆԻԿԵՖՈՐ.— Հա՞: Իսկ ես երեսուն տարի է, որ այդ բանակին մէջն եմ, այդ բանակին հետն եմ, այդ բանակին տէրն եմ, այդ բանակը ես եմ ծններ, ես եմ կազմեր, ստեղծեր եմ ոչինչն, բայց ինձի կը թըւի, որ այդ բանակը ես նո՞ր կը տեսնեմ:

ԻՍՍՀԱԿ.— Զարմա՞նք: Ես մի՛շտ տեսեր եմ:

ՆԻԿԵՖՈՐ.— Երեսո՞ւն տարի. ճանկուտելով՝ ճանկուտով, քայլ-քայլ, ամենէն խոնարձ աստիճաններէն մինչեւ հոս. ինչպէ՞ս կուեր եմ, ինչպէ՞ս ջարդեր եմ արարներուն քիթն ու պատուզը, պաշտպանե՞ր եմ ու ետ-ետ եմ քշեր արեւելքի սահմանները, մաքրե՞ր եմ կրետէն ու ծովի եմ թափեր գարերով հոն բուն գրած սարակինոսները, և խոնարձեցուցէ՞ր եմ մահիկը բիւզանդակարան խաշին առջեւը: Բայց իմ բանակս ես գեռ տեսած չեմ եղիր, ես գեռ ըմբանած չե՞մ եղիր, թէ դա ինչ բացառիկ ուժ է, որ գրեր է Աստւած իմ ձեռքերուս մէջ: Ես գիտե՞ս ուր էր, որ ես տեսա սառջին անգամ իմ այդ սարակինի ուժը:

ԻՍՍՀԱԿ.— Ո՞ւր տեսար:

ՆԻԿԵՖՈՐ.— Պոլիս, պալատը, այն փոքրիկ սենակին մէջ, Յովսէփ Բրինկասի աշքերուն խորքը:

ԻՍՍՀԱԿ.— Ի՞նստակա՞լը:

ՆԻԿԵՖՈՐ.— (Դառն) Հա՛, Ռոմանոսի թողած փոքրիկներուն խնամակալը, այրի թագուհին կեղեքիչը, արքունիքի ու պաշտօնէութեան վզին հեծած բոնակալը, մեր երկրի այսօրւան միահեծան տէրը և իմ վատթար թշնամին:

ԻՍՍՀԱԿ.— Հա՛, լսեր եմ, որ կանչեր էին քեզի Պօ-

լիս, թէւ լուրիրը դժւար կը հասնին մեր լեռները:  
ՆԻԿԵՖՈՐ.— Երբ թէմս կեցած քընացընել կ'ուզէր ինձի շողոմ խօսքերով, իւ աշքերուն մէ՛ջը տեսա ես առաջին անգամ. տեսա այն անսահման վախը, որ ունէր ինձմէ ու իմ բանակէս Ա՛յն աստիճանն մեծ էր երկիւլը իր աշքերուն մէջ և ա՛յն աստիճանն իմ ոչնչացումն կը նիւթէր այդ հայւածքը, որ վայրկեան մը լախը մտաւ և ի՛մ մէջու ըսի՝ այս պալատէն ես այլ եւս ողջ դուրս չեմ գալու:

ԻՍՍՀԱԿ.— Ե՞տքը:

ՆԻԿԵՖՈՐ.— Ետքը... ա՛յ, կեցած եմ դէմդ ողջ ու առողջ. եւ իմ վրաս է հիմա բոլոր խելացի մարդոց վերջին յոյսը, միա՛կ յոյսը:

ԻՍՍՀԱԿ.— Երեւի և անոնք էին, որ կերպ մը պատեցին քեզի իր ճանկիրէն:

ՆԻԿԵՖՈՐ.— Լսէ՛: Յովսէփի Բրինկասը ո՛չ-մէկ ուժ չտւնի, որ հաւասար զա իմ գնդերուս, ո՛չ-մէկ լուրջ բանակ, որ փոել կարողանա գէմը ճերմակ վրաններուս: Բա՛ց է առջեւս: Շա՛տ դժւար բան է, իսա՛կ, երբ դէմդ բաց է, երբ դէմդ արգելք չկա, պատնէշ չկա, սահման չկա, և երբ ամէ՞ն ինչ, կը հասկնա՞ս՝ ինչ կ'ըսեմ, ամէ՞ն ինչ կախւած է քու կոմքէդ: Ես կը սարսափիմ հիմա ինքս ինձմէ:

ԻՍՍՀԱԿ.— Ի՞նչ է միտքդ, ՆԻԿԵՓՈՐ:

ՆԻԿԵՖՈՐ.— Ա՛յ, կանչեր եմ, որ խօսինք: Զէ՞ որ գուն ֆոկասներուս մէջ մէծն ես, մեր ընտանիքի տառքը: և ես ու գուն միշտ հասկցեր ենք իրար լեզու:

ԻՍՍՀԱԿ.— Հա՛, բայց պայմանով որ այդպէս հանելուկ չըլլան խօսքերդ: Հոզի հետ գործ ունեցողի ձեռքն ու զուխը քիչ մը կոչտ կ'ըլլա, մի՛ մոռնար:

ՆԻԿԵՖՈՐ.— Աղէ՛կ, ըսե՛մ հիմա քեզի բան մը սաստիկ պարզ ու յոտակ:

ԻՍՍՀԱԿ.— Լսէ՛ հայինք:

ՆիկեֆՈՐ. — Քիչ մը առաջ հսու էր իմ տանու երեցը՝  
ու կը գովեր ինձի, որ ևս երեք տարի է կնոջ հայ չեմ  
եղեր:

ԻՍԱՀԱԿ. — Գովելու բան չէ:

ՆիկեֆՈՐ. — Չպահեմ ձշմարխար սակայն այն է,  
որ ևս կը ցանկամ կնոջ մը:  
ԻՍԱՀԱԿ. — Վա՞:

ՆիկեֆՈՐ. — Այս չորս ամիս եղաւ, որ կը ցանկամ  
կնոջ մը, և գեղեցիկ կնոջ մը, շատ գեղեցիկ կնոջ մը:  
բիւզանդական պիտութեան ամենէն գեղեցիկ կնոջը:

ԻՍԱՀԱԿ. — Ի՞նչ կ'ըսիս Բաէ՛ առունը հարսնիքի  
պատրաստութիւն տեսնենք: Ա՞վ է որ կը ճանչա՞մ:

ՆիկեֆՈՐ. — Քեզի կ'ըսիմ՝ բացափկ կնոջ մը, բարձր  
գիրքի կնոջ մը, շատ բարձր գիրքի կնոջ մը...

ԻՍԱՀԱԿ. — Տէ՛ր Ասուուած:

ՆիկեֆՈՐ. — Բիւզանդական պիտութեան ամենէն  
բարձր գիրքի կնոջը:

ԻՍԱՀԱԿ. — Թէօփա՞նո:

ՆիկեֆՈՐ. — Այո՛:

ԻՍԱՀԱԿ. — Ոտեանոսի այրի՞ն:

ՆիկեֆՈՐ. — Այո՛:

ԻՍԱՀԱԿ. — Կայարուհի է, Նիկեփո՛ր չի գրգռե՞ս իր  
գժոհութիւնը:

ՆիկեֆՈՐ. — Բայց ինքն է որ կը կանչէ ինձի:

ԻՍԱՀԱԿ. — Հա՞ Հը՞...

ՆիկեֆՈՐ. — Անոր յայն ալ իմ վրաս է միտյն,  
ինչպէս բոլոր բարեկամներուա:

ԻՍԱՀԱԿ. — Այդ բոլոր ըսածներէդ այսքանը միայն  
խելքս հասաւ, որ գուն միտքդ գրեր են՝ դասնաս... (Լինդ-  
հանք ու կը նայի ըուրզը):

ՆիկեֆՈՐ. — Վախցա՞ր:

ԻՍԱՀԱԿ. — Այսինքն... ինչպէս ըսիմ... յանկարծա-

կի բերիր Եւ իրա՛ւ է, ինձի կը թըւի, քիչիկ մը յան-  
գուզն քայլ է: Վախնամ իշնաս սոսուերին ևսիւէն ու  
մեր բերնէն բաց թողնենք պատւարսն միար Դիբք,  
աղբեցութիւն, հողեր, կալւած բոլորը մէկ անգամէն կ'եւ-  
նէ մեր ձեռքէն և մերկ ու տկլոր կը նստինք սափին:  
իսկ գուն ուղղակի կը կոտրես վիզգ: Այսը, չսփազանց  
բարձր ցատկել կ'ուզիս:

ՆիկեֆՈՐ. — Բա՛րձր, այո՛: Ճիշտ այդ բասով ալ  
գուշակիր է իմ սուրբս գեռ տարիներ, տարիներ առաջ,  
երբ ևս տակաւին պարզ գնդապատ մըն էին:

ԻՍԱՀԱԿ. — Բու սո՞ւրբգ: Հա՛, աս քու վանահայրգ  
ի՞նչպէս եր իր վանքին անունը բղւիս ծալին է: գեռ  
կ'ապրի:

ՆիկեֆՈՐ. — (Ավելորութեամբ) Այո՛, Իսակ, կ'ապրի  
«Գուն պիտի կոխս այն բարձունքները, որոնց վրայ մի-  
այն Աստծու ընտրեալները կը դնեն իրենց տոքը»: Այս-  
պէս ըսին իր չբխունքները:

ԻՍԱՀԱԿ. — Գուն շատոնց կոխեր ևս այդ բարձունք-  
ները: Բացարձակ պիտոն ևս այս անազին բանակին, ամ-  
բովզ Անասուլի խական տէրը և ընդհանուր հրամանա-  
տար բոլոր արիւելիան անձմաններուն:

ՆիկեֆՈՐ. — (Յաձկոս) Մինչեւ հիմա ևս ալ այդ-  
պէս կը խորհէիր բայց հիմա կը զգամ, որ այդ սուրբ  
մարգուն գուշակութիւնը գեռ հսուն է, հսուն, գեռ  
պէտք է հսունին: Միայն...

5

Թիկնազմակ Մը. — (Ճակակ վարարյաներուն հետ-  
եւն) Զօրագար Օհան Գուրգէն:

Միւնինք միջոցին, առանց պատախանի պատելու,  
Օհան Գուրգէն մեկ կողմ կ'ընէ թիկնազմը ու կը մենք  
ներս:

Քառասունը անց, փոքր ու նուրբ, նկուն ու համաշափ մաք մըն է: Մազն ու մօրուքը աւելի չեկ: արտայալիշ ու գրաւիչ դիմագծեր, հարժումներ, կեցուածնն ու խոսք պարզ ու ազնբւական:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — (Ռւրախ առաջ գալով) Օ՛, այս ե՞րբ ես եկեր. անտես ընող զգակո՞վ: Եւ ի՞նչպէս է պատահեր, որ սիրու ես ըրեր, թողեր ես մինակ կալուածնեներդ, ծմակներդ: Բարի՛ ես եկեր, եւ ճիշտ ժամանակին: Ա՛յ, ձեռաց նատինք երեքով ընտանեկան խոռհրդի: Վերջապէս ես ալ ընտանիքն կը համարւիմ, թէև քիչիկ մը ծուռ ու մուռ գիծով: Բայց ըսեր են՝ ազգականի պորտին չեն նայիր, որտին կը նային:

**ԻՍՈՒՀԱԿ.** — Բ՛ը, քու պորտն ալ, քու սիրուն ալ: Եւ ի՞նչ ըսել կ'ուզէ, միշտ քէֆդ տեղը, միշտ բանի մը վրա և միշտ նոյն խննիթը: «Տարիք» ըսւած բանը ե՞րբ պիտի համկանա:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Ժամանակը որ դո, կ'անցնիմ ծմակներդ, որ հասկցնեմ: Գուն հիմտ ա՛յս մարդուն խոռք հասկցուր:

**ԻՍՈՒՀԱԿ.** — (Լուրջ) Ինձի նայէ՛, Օհան, ի՞նչ է քու կարծիքը:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Այս երկու շաբաթ է ամէն բանս թողած ինկեր ևմ ամենուն պոչէն, միծին ու պլոտիին, արին-քրտինք ևմ մտեր, որ բանամ աչքերնին, և հիմտ գուն ինձի կը հարցնէ՛: Ի՞նչ է իմ կարծիքը:

**ԻՍՈՒՀԱԿ.** — Իսկ բանակի՞ կարծիքը:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Թո՞ղ, եղբա՛լր, պարագ խօսքերը: Ո՞վ է որ հակառակ պիտի ըլլա իր առաջացմանը, եր բարձրացնանը: Ո՞վ պիտի ուզէ ձեռքէն փախցնէ այս տեսակ առիթը: Արդէն համոզւած են ամենքը: Ա՛յ, եթէ շնորհք ունիս, դուն այս մարդը տեղէն շարժէ: Իմ հո-

գիս հանեց: «գեռ կանուխ է», «գեռ սպասէ», «գեռ մտածենք» և «իրաւունք», «պատասխանատութիւն», չգիտեմ ինչ:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Դուն շատ թեթեւ կը նայիս ամեն ըանի վրայ: Լաւ չէ, Օհան՛ն, կիանքը լուրջ բան է: Ամեն ինչ նախ կշուկ պէտք է, նապա ի՞նչ զիտցար:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Կշուկ ենք արդէն նազար անգամ բոլոր թերն ու դէմը: Եւ կը կրկնամ քեղի՞ պէտք է անմիջապէս շարժը կինք, եթէ յաջողիլ կ'ուզենք: Խոկ եթէ յայլպէս միշտ ծոծոացնես, կը փախցնենք յաջող վայրկիանը ու բոլորս ալ կը նատինք յիմարներու աթոռնին:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Ես զիտեմ իմ ըրածու Հանգիստ ձգէ ինձի:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — (Զարացած) Աղէ՛կ, պինդ նատէ տեղդ ու նորէն ամէն ինչ ցորեն-ցորեն կշուկ: (Ծոցէն ծալլած քուզը մը հանելով կը նետէ սեղանին վրա) Խնդրե՛մ, ասիկա ալ ա՛ռ ու հետը միասին կշուկ:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Ի՞նչ բան է ատ:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Սիրալիր նամակ մը:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Գրո՞ղը ով է:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Գրո՞ղը Գրովի անունն է Յովենէփինկաս:

**ԻՍՈՒՀԱԿ.** — Ի՞նամակա՞լը:

**ՆԻԿԵՖՈՐ.** — (Ձեռքը ականայ նամակին երկարելով, սակայն առանց վեցցնելու) Բրինկա՞մ կը զրէ քեղի՞:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Այս՛, ինձի:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Ե՞րբ ես ստացեր:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Գիտես որ երէկ բանակը չէի:

**ՆԻԿԵՖՈՐ.** — Ա՛յ, ժամագրութի՞ւն:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Եւ շատ խորհրդաւոր բիրով մարդուն հետ:

ՆԻԿԵՖՈՐ. — Եւ ի՞նչ կ'ըսէ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ա՞վ.

ՆԻԿԵՖՈՐ. — Յովսէի Յըրինկառ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Խելք մարդու խօսք:

ՆԻԿԵՖՈՐ. — Քեզի կը հարցնեմ՝ ի՞նչ կ'ըսէ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ի՞նչ պիտի ըսէ. կը գովէ իմ զինւորական տաղմանգոր, հայկական վաշտերու մհծ համբաւը, իմ վայլած համալրանքու մայրաքաղաքին մէջ և իմ մասին եղած բա՛րձր համարումը բա՛րձր չըջանակներու մէջ: Կարգա՛, կարգա՛, որ տեսնեաւ շատ իմաստուն ու շատ նուրբ ոճով գրւած բան է:

ՆԻԿԵՖՈՐ. — Ե՞աքը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ետքը... կը բարեհաճի ինծի իրաւունք տալու, որ իմ յարմար գատած հզանակով մէջտեղէն վիրցնեմ քեզի, ինքզինքս հրատարակնեմ արեւելքի ընդհանուր հրամանատար, «Փութամ Պօլիս», «Աստղծու պահած քարարը», «Քանակներուս վլուխը»: Եւ այս բոլոր կողմնակի ծառայութիւններուս փոխարէն ներքինի Յովսէի Բրինկառը ինծի կը խոստանա ո՞չ աւելի, ո՞չ պակաս, քան բիւզանդական կայսրներու գանձ. վրան ալ, իբրև յաւելտած, հանգուցեալ Ռումանոս կայսեր այլքն:

ԻՄԱՀՈՒ. — Թէօփանո՞...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Հրամանք եաւ ի՞նչպէս կը տեսնէք՝ Պօլսի մարդիկը, մեզի պէս, մազին հաստին ու բարակը չեն փնտակը, և կը հասկնան, որ շատ ալ ժլատութիւն ընելու ժամանակիլ չէ: Ի՞նչէ՞ն զիտես, որ ուրիշներուն ալ չեն եղած նմանաօրինակ դիմումներ:

ՆԻԿԵՖՈՐ. — Իսկ դո՞ւն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ես ի՞նչ:

ՆԻԿԵՖՈՐ. — Տւի՞ր ես պատասխան:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ի հարկէ՛: Զէ՛, քեզի պէս, ոլիսի

Նոսէի օրեւորվ որոճալու:

ՆԻԿԵՖՈՐ. — Ի՞նչ է պատասխանդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ըսի, որ ներքինի Յովսէի Բրինկառը իմ թանկազին ըարհեկամս է, որ սարսափելի երջանկութիւն է ինձի համար կայսրներու գանին վրայ ծալապատիկ բաղմէիլ բաղմէիլ և տեսլի ևս սարսափելի երջանկութիւն Ռումանափառի անկողնին մէջ պատկիլլը: Ըսի, որ երկու շաբաթը չի լրացած կը լսնի իմ մասին, երբ բանակներու ըլլան Պօլսի համբուն վրա Այնպէս որ հիմա այս բոլոր սիրուն ծրագրին մէջ միակ խանզարիչը դուն եաւ Այս եկեր իմ միասին խորհուրդ ընենք, թէ ինչ ձեռով քեզի մէջտեղէն վերցնենք:

ԻՄԱՀՈՒ. — Այ Գուրզէն, զէ՛, մի լուրջ խօսէ, բան մը համինանք, է՛:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Լուրջը քու ծմակներուդ մէջն է: Հոս եղածը աս է, ինչ որ ըսի. կ'ուզիս հաւնէ, կ'ուզիս՝ ոչ: Ա՞վ էր, անցած օր կ'ըսէր, թէ Յովսէի Բրինկառը նոր ձեւի մարդ է: Զգիտի՛մ, յամենայն գէպս իր ընտրած զէսքը շատ է հին: «Բաժնէ՛ որ սիրեա»: Եւ ի՞նչ սքանչելի արլուրակախ, ես ու դուն գէմ գէմի: Մարդիկը ճաշակ ունին:

ՆԻԿԵՖՈՐ. — (Վերցնելով բուլը) Այս համակը թանկազին է, իբրև զրտուր վաստան Շատ շնորհակալ ես քեզի այս համակին համար Աւելի եսու շնորհակալ ես քու եղանական վարմունքիդ համար: Դու այս ուղղամիտ քայլդ ես այլեւ ամբողջ կեանքիս մէջ չեմ մոռնար: Շնորհակալ եմ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Յուսահատ օւրժումով) Ի՞նչե՛ր կը խօսի այս զարմանալի մարդը: Իս այդ նամակը չիմ բերիր քեզի քու յիմար շնորհակալութեանդ համար: Բերերի եմ, որ վիզուալիս հասկնառ չօշափես, թէ այլեւ կորանցնելու ժամանակ չկատ:

Նեկեցնո՞ւ - Աղէկ, աղէկ, գիտ կը տեսնենք: Այս ժմբակ թողէք որ քաշւիմ ահնակակա: (Վերբա իւ ննջարանի)

6.

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Ահա՛, հիմա տարի մըն ալ թուխս պիտի նստի այդ նամակին վրա:

ԻՍՈՂՈՒԿ - Անհանգարա մարդ ես, Օհա՛ն, Արդէն դուք հայերդ անհանգիստ մարդիկ էք:

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Իսկ գո՞ւք, ֆոկասներդ, ծա՞նր, ամէ՞ն բան կը բարդացնէք, կը գժւարացնէք: (Ննջարանի լաւանի) Բնը՝ ինչի՞ է նման: Եւ կ'ուզէ եւ չուզիր: տոտիկ մը առաջ, տոտիկ մը ես: գիտ հիմա փոխուժէ, այնքան զվասն գայլի աւետարան ենք կարդացեր: Հիմա գոնէ զիտամ, որ կ'ուզէ: առաջ ուզելէ ալ կը վախնալ:

ԻՍՈՂՈՒԿ - (Համոզելով) Կը տեսնե՞ս, սիրելի՛ս, ըսիւ է կամաց կամաց: Ես զիտամ, որ ան քու խօսքերուդ կարեւորութիւն կտւաս, բանակին մէջն ալ ուժեղ է ձայնու Միայն քիչիկ մը զբայչ: Քաշքանք այսպէս գիտ ամիս մը երկու, ահնենենք խնդիրը ինչ ձեւ կ'առնէ:

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Երկու ամիս (Ալ խնդիր) ես քիզի կ'ըսիմ՝ երկու շաբաթը չի լրացած մէնք պէտք է ըլլանք մայր քաղաքի պարիսպներուն տակը: Կը հասկը՞նա՞ս, երկու շաբաթը չանցած: Հոն կարգադրած են արդէն ամէն ինչ մեր բարեկամները բոլորի արամագրութիւնը՝ բարձր, գդալութիւնները՝ հասած իրենց զագաթնակէտին, բոլորի տայը՝ գէպի մեզ: Պէտք է խոկոյն օգարուինք այդ լարութէն: որ ուշանանք աղեղը կը թուշաւ իւ հոնա, կը կարծես, գիւրի՞ն բան է ամեն անզան այս ոգեւորութիւնը առաջ բերել բանակին մէջ:

ԻՍՈՂՈՒԿ - Միթէ՞ արդէն այդ առախճան...

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Պէտք է որ շարժը բինք արդէն է: Եւ հէնց ա՛յօր, ա՛յօր:

ԻՍՈՂՈՒԿ - Նա՛, այդ մէկը արդէն կը ներիս: Փա՛ռք Աստծու, Նիկիփորը ո՛չ այօր, ո՛չ ալ վաղը տեղէն շարժը չէ:

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Հա՞: կը կարծե՞ս Դէ, հիմա ան անկիստ այնպէս իր տեղէն շարժեսզը չէ ոչ միայն այօր ու վաղը, այլ մինչ շեւ բրիստուի երկորդ զալուստը: (Արուել) Դուն կեցիր հո՞ւ: (Դոււ նակտի վարագոյեն):

ԻՍՈՂՈՒԿ - Դո՞ւն: եւ այդ ինչպէ՞ս

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Իրեն որ թողնենք՝ ան իր տեղէն շարժը չէ ոչ միայն այօր ու վաղը, այլ մինչ շեւ բրիստուի երկորդ զալուստը: (Արուել) Դուն կեցիր հո՞ւ: (Դոււ նակտի վարագոյեն):

7

Ներս կուզան Գուրգինի նետ մօս եւկու տանեակ բարձրացափնան զօրականներ: Անսմբ մերօրեն, միւսները յարգալից կը բարեւեն խանակը:

ՄԵԿԸ - Հաս չէ՞ ինքը

ՄԻՒՄԸ - Երկուի, նի՛րը:

ԵՐՐՈՐԴԸ - Չահաս՞ր գիտ չե՞ս խօսած համը

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Խօսեցա՛:

ԵՐՐՈՐԴԸ - Արդիւ՞նքը

ՕՀՅՆ ԳՈՒՐԳԻԵՆ - Արդիւնքը, ա՛յ, գնաց ներս (Յանկած) Լսեցէք ինձի: այլեւս ուրիշ ձամբա չկա: արամած են բոլոր միջոցները: Կը մնա, որ իրազորենք մէր որոշումը Համաձա՞յն էք:

ՄԵԿԸ - Կարծեմ, որոշա՞ծ հարց է:

ՄԻՒՄԸ - Ի՞նքդ էիր ըսողը՝ «ըլլա» իր կամքով, ըլլա ակամաց:

ԶԱՅՆԵՐ - Այսո՛, այսո՛, այդպէս:

ՄԵԿԸ - Եւ արա՞գ

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Իսկ գուշաբ, պատրաստ է ա-  
մեն ինչ:

ԵՐԲՈՐԴԻԼ.— Ամենը կը սպասեն նշանին:

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Զօրավա՛ր Պոնդիս, մեր մէջ  
ամենէն տարէցը դուն ես: Դուրս կանչէ հրամանա-  
տարը:

ԻՍԱՀԱԿ.— (Առաջ նետուելով) Կեցէ՛ք, կեցէ՛ք, աս  
ի՞նչ բան է:

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Հանգիստ, հանգիստ, հիմա կ'ի-  
մանաս:

ԻՍԱՀԱԿ.— Ի՞նչպէս թէ: Հոս դաւ կա: Նիկեֆո՛ր,  
Նիկեփո՛ր...

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— (Նեղարանի դուռը ցոյց տալով  
ու հեզուս) Ա՛յս, գո՞ւն կ'ուզես հրամանատարը դուրս  
կանչա: Խնդրե՛մ:

8

ՆԻԿԵՖՈՐ.— (Դուրս կը նետուի ննջարաննեն, մէջքը  
կապած է կարճ սուր մը) Սա ի՞նչ աղմուկ է: Ի՞նչ բա-  
նի էք հոս ինչո՞ւ էք խոնիս վրանիս տակը:

ԶՈՐ. ՊՈՆԴԻՍ.— Հրամանատաստա՛ր, զօրավարներդ խօ-  
սիլ կ'ուզեն քեզի հետ:

ԻՍԱՀԱԿ.— Զի լսե՛ս, Նիկեֆո՛ր, անոնց ըստածին:

ՆԻԿԵՖՈՐ.— Դուն մի խառնըւիր: Ի՞նչն է որ այդ-  
պէս յուզեր է ձեզին ինչո՞ւ լուցիքը:

ՀԱՍԱԿՈՒՐԾՈՐ.— Թո՛ղ խօսի Գուրզէնը:

ԶԱՅՆԵՐ.— Գուրզէ՞նը... Գուրզէ՞նը...

ՆԻԿԵՖՈՐ.— (Զարմացած ու բնեական կը դառնա  
Օհան Դուրգենի կողմը):

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Բացէ՛ք մուտքին վարագոյր-  
ները:

ՆԻԿԵՖՈՐ.— Ինչո՞ւ:

9

Կը բանան արագ նակտի վարագոյրները նեռուն  
կ'երեւա վրաններու ծովը, իսկ մօժիկ՝ խոնիւած զօրին-  
ուն շարենքը: Խորին լոռուքիւն:

ՆԻԿԵՖՈՐ.— Սա ի՞նչ բան է, Օհա՞ն:

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Նայէ՛, հրամանատաստա՛ր, նայէ՛  
զօրավարներուդ, նայէ՛ քու զօրքիդ, նայէ՛ որ զգաս:  
Լեցւած է բաժակը. այլ եւս մեզմէ ո՛չ-ոք հանգաւրմել չի  
կրնար նենդաւոր ներքինիի մը անարդ լուծը:

ՆԻԿԵՖՈՐ.— Զօրավար Գուրզէ՞ն, պէտք է ընդհատեմ  
քեզի: քու խօսքերդ հակառակ են կարգապահութեան:

ԻՍԱՀԱԿ.— Եւ պատշաճութեան:

ՆԻԿԵՖՈՐ.— Այդ ուղղութեամբ ո՛չ-մէկ բառ. կ'ար-  
գիլմ' քեզի:

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Քեզի խօսովը, հրամանատաստա՛ր,  
Օհան Գուրզէնը չէ, որ խկոյն պիտի հնազանդէր ար-  
գելքիդ: Իմ շրթունքներովս ամբողջ բանակի է, որ հիմա  
կը խօսի քեզի, և դուն պէտք է լսես իր ձայնը: Երկ-  
րորդ տարբին է, որ թշւառական ներքինի մը հաւաքեր է  
իր ձեռքին մէջ պիտութեան բոլոր թիւերը, կասեցուցեր  
է ամէն շարժում, կապեր է ամէն ձգտում ու մեր բա-  
նակները գատապարտուր անգործութեան: Թշնամին կ'ամ-  
րանս մեր ասմաններուն վրա, իսկ մեզի թոյլ չեն տար,  
որ շարժըւինք. կը խանգարեն ամէն ձևներէցութիւն,  
չեն հասցներ ինչ պէտք է բանակին, կը կոտրեն մեր  
թափը: Անոր ուզածը մեր քայլքայումն է: (Զօրավարնե-  
րուն) Այգակէս չէ՞:

ՆԵՐՄԸ ԵՂՈՂՆԵՐԸ.— Այո՛, այո՛, այո՛:

ՕՀԱՆ. ԳՈՒԻՐԳԵՆ.— Քու գնդերդ այլ եւս չե՞ն ճանչ-  
նար այդ դաւաճան ներքինիին կառավարութիւնը: Քու  
բանակի կը ճանչնա և կ'ընդունի միայն ա՛յն կառա-

վարութիւնը, որը իրը ըլլա, իրեն գործակից, իրեն հասկցող, իրմէ ընտրըւած: (Զօրավարներուն) Այդպէս չէ:

ՆԵՐՍԼ ԵՎՈՂՆԵՐԸ.— Այս, այս, մե՛րը, մե՛րը

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— Կը լսե՞ս, հրամանատա՛ր Եւ ահա ևս քու զօրավարներուդ, քու զօրականներուդ և քու համօրէն բանակներուդ անունով կը յայտարարեմ քեզի...

ՆԻԿԵՖՈՐ.— (Առաջ նետելով ու կլրցրուկ) Կեցի՛ր, կեցի՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— Կը յայտարարեմ Աստծու առջեւ, աշխարհի առջեւ ու այս զինակիր բազմութեան առջեւ մեր միա՛կ արժանի կայսրը քեզի՛:

ՍԱՐՍՍԱՓԵԼԻ ԱՂՄՈՒԿ.— Քեզի՛, քեզի՛... դո՛ւն... դո՛ւն...

ՆԻԿԵՖՈՐ.— (Ականջները գոցած) Ո՛չ, ո՛չ, ես լսել անզամ չեմ ուզեր այդ տեսակ խօսքեր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— (Մերկացնելով սուրբ) Խոնարհցէք սուրերը մեր կայսեր առջեւ: Կեցցէ՛ կայսր Ֆոկաս:

ԲՈԼՈՐԸ.— (Դուրսն ու ներսը սուրերը բաւած) Կա՛յսր Ֆոկաս... կա՛յսր Ֆոկաս... Ֆոկաս... կեցցէ՛...

Դուրսը՝ միահամուռ բացականշուրիւններու ալիքը կը տարածուի վրանեն հեռու ու հեռու: Զենքերն ու դրականները կը խոնարհին ու կը բարձրանան. զանազան կողմերէ կը լսէի ժեփորներու հեռաւոր կանչը: Մինչ վրանին տակ ամենէք խառն ժխորով շրջապատած են ու կը ժնորհաւորեն կայսրը, որը դեռ յուսահատ նիգեր կ'ընէ դիմադրելու:

Օհան Գուրգէն կ'առնէ մօսի պատօնեային ձեռքէն հաս մը կարմիր կօժիկ, կը չոքի Նիկեֆորին առջեւը Ընկերները կը բռնեն կայսեր թեւերեն, մեկը կը բարձրացնէ անոր ձախ ոչքը եւ Գուրգէն կը հազցնէ կօժիկը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— (Ուրախ ու յաղթական՝ վեր ցատկելով) Ահա՛, Նիկեֆոր, հազցուցի ոտքիդ կայսերական կարմիրը:

ՕԳՆՈՂՆԵՐԸ, ՄԻԿԸ.— Միրանեզարդ նոր պաշտօնիդ այդ ծիրանի նշանը:

ՈՒՐԻՇ ՄԸ.— (Ոգեւորւած) Ո՛տքդ կարմիր, բա՛խտդ կարմիր. ամբողջ կեանքդ ըլլու կարմիր:

ՏԱՐԻԲՈՑ ԶՈՐԱՎԱՐ ՄԸ.— (Առաջ գալով ու սասիկ յուզւած) Ուղիղ քանալինդ տարի է, մոկա՛ս, իմ սուրս քու սուրին կից, իմ վրանս քու վրանիդ. ապրեր եմ քեզի հետ քու չարն ու բարին. և հիմա երջանիկ եմ, ֆոկաս: (Լալով) Շնորհաւո՛ր ծիրանիդ: (Կը փարքի ֆոկասի վիզը):

ԱՄԵՆ ԿՈՂՄԵ.— Շնորհաւո՛ր ծիրանիդ: Շնորհաւոր ծիրանիդ:

ԻՍՍԱՀԱԿ ՖՈԿԱՅ.— (Սօտենալով կայսեր եւ ինքն ալ յուզւած) Նիկեֆոր, ալ իզուր է լույս: Ամենքը կը սպասեն խօսքիդ:

Ֆոկաս ծանր ու գլխահակ առաջ կուզա: Խորին լուսւրիւն:

ՆԻԿԵՖՈՐ.— Քանի որ այսպէս է, թո՛ղ ըլլա Աստծու կամքը Դուք գիտէք, որ ես միշտ եղած եմ ձեզի հետ, ձեզի համար ու ձեզմով: Եւ հիմա ալ, բնական է, ուզեմ չուզեմ, պէտք է համակերպիմ այսպէս միահամուռ կերպվ արտայայտած ձեր կամքին, Աստծու կամքին, ինչպավ արտայայտած ձեր կամքին, Աստծու կամքին, ինչպավ ալ որ ձանր ըլլա ինձի համար այդ նոր բնուը, որ վրաս կը դնէք: Դուք ճիշդ էք, ե՛ս ալ խռոտովանիմ, ե՛ս ալ կը զգամ ձեզի պէս, որ պարտական եմ կուելու այս ամենահին ու ամենաքրիստոնեայ պետութեան ներքին քայլայիչներուն դէմն ալ, ինչպէս որ կուեր եմ մինչեւ հիմա անոր արտաքին թշնամիներուն դէմ Ներսինը յանախ աւելի վատթար է, քան դուրսինը: Եւ քանի որ

պատերազմը յայտարարեցիք արդէն, այլեւս իրաւունք չունինք ժամանակ կորսնցնելու։ Զօրավարներս հիմա իսկ կը կանչեմ խորհրդի բանակները պիտի շարժըւին։ Պէտք չէ, որ այսօրւան դէպքերուն լուրը մեր գնդերէն առաջ հասնի Պօլիս։

ԶԱՅՆԵՐ. — Պօլիս, Պօլիս...

ԶԱՅՆ ՄՀ. — Ա՛, վերջապէ՛ս, կը շարժըւինք։  
ԵՐԻԾԱԾԱՐԴ ԶՈՒԱԼԱՐ ՄՀ. — Վահանի վրա, վահանի վրա, մեր նոր կայսրը վահանի վրա։

ՈՒՐԻՇ ՄՀ. — Ու դէպի Պօլիս։

ԸՆԴՀԱՆՈՒԽԻ ԱՂՄՈՒԿ. — Պօլիս, Պօլիս...

Նորէն կը ցցապատեն կայսր, կը բարձրացնեն վահանի մը վրա իրենց ուսերուն եւ խինդ ու ցնծումով կ'ուղղւին վրանեն դուրս։ Մինչ՝

ԴՈՒՐՄՀ. — (Կը կրկնի հեռանալով ու տարածւելով ալիք-ալիք) Դէպի Պօլիս... Պօլիս... Պօլիս...

10

Վրանին տակ կը մնա միայն Օհան Գուրգէնը երկու ընկերով։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Քիչ մը ատեն լուր կը դիմէ հեռացող բափօրը, եւ յանկարծ կը սկսի սրանց ծիծառիլ) Տեսէ՛ք, է՛, տեսէ՛ք, է՛, խե՞ղճ ժոկաս։ Սա մէյ մը իր կեցւածքը նայեցէ՛ք, իր բոնըւածքը, քիթ ու բերանը, հա՛, հա՛, հա՛...

ԸՆԿԵՐԸ. — Հա՛, ըրիր, ըրիր, սարքեցիր, հիմա ալ կեցեր կը խնդաս։

ՄԻՒՄՀ. — Այդքան աշխատանքը որ դուն թափեցիր, ինքո կրնայիր բարձրանար գահը։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ե՞ս կը ներե՞ս ես կը նախընտրեմ կայսր շինելը քան կայսր լինելը։ Զուարձալի է գոնէ։ (Թորդ խնդուկով) Նայեցէ՛ք, մէյ մը նայեցէ՛ք այդ թշւառ

մարդուն, ինչպէս կառչեր է վահանի եզերքին։ հա՛, հա՛,  
հա՛...

ԸՆԿԵՐԸ. — Քալէ՛, քալէ՛։ առանց մեզի յանկարծ դուրսը բան մը չի ծովի

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Թո՛դ ԱԼ անիկա մեզի պէտք չունի. Չուրը ճամբան կը գտնէ՛ Ո՛ւ, վերջապէ՛ս Թէ չէ արդէն սկսեր էի ձանձրանալ այս անհամ խաղէն։ Տղա՛, Պօլիս հասնինք թէ չէ թափ տանք մեզի անզամ Ֆը մարդավարի Անոնք թող երթան պալատ իշխանութիւն խաղալու։ իսկ ես կը խոստանամ ձեզի գիշերային սքանչելիք քէփ մը երթառութիւնը մէջ։

ՄԻՒՄՀ ԸՆԿԵՐԸ. — Որուն նմանը դո՛ւն միայն սարշեւ գիտեա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Բիւզանդիոնի ամենէն ձկուն պարտէիները, որ ձեր սրաի թելերը ոլորեն, և ամենէն զեղեցիկ կնիկներուն շրթունքները, որ ձեր գինին ձեզի հետ կիսեն։

ԸՆԿԵՐԸ. — Արժէ՛, արժէ՛ երթալը Պօլիս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Յաղթողներուն մէջ պէտ է աւարը հաւասար բաժնըւի իշխանութիւնը անոնց...

ՄԻՒՄՀ ԸՆԿԵՐԸ. — Սէրն ու զինին մեզին

ԸՆԿԵՐԸ. — Արժէ՛, արժէ՛ երթալը Պօլիս։

ԴՈՒՐՄԻ ԱՂՄՈՒԿ. — Դէպի Պօլիս... Պօլիս... Պօլիս...

# Առաջին Արար

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

ԿԱՐՄԻՐ ՍՐԱՀԸ ՍՐԲԱՋԱՆ ՊԱԼՈՏԻՆ ՄԷջ

Ճակատը լայն կամարով մուտք մը, որուն վարագոյբները երբ բաց են՝ կ'երեւա խորբի երկար ու կամարակապ միջանցքը. Այդ մեծ մուտքի երկու բովը երկու փոքր ոսկի դռներ առանց վարագոյրի. կայսեր ու կայրութիւն մասնաւոր մուտքերը. Սովորական ելումուտք համար կողմնակի դուռ մը աշկն.

Մահին մէջ դեպի ձախ գամեն է պատւանդանին վրա. Հոս ու հոն գահաւորակ ու արոն. Բոլոր կահերը, վարագոյբները մուք-կարմիր բանձր բալիս է, վրան ցիս ու մանր ոսկի խաչազարդեռով. Պատերը նոյնպէս կարմիր են. տեղ-տեղ բուսած են եռաստեղ ու եօրնաստեղ ոսկի աշտանակներուն փունջերը:

1

Ճակտի վարագոյբները բաց են. Բարձրաստինան պատօնեաներու ու պալատականներու ստւար խումբ մը կեցած է մասամբ միջանցքին մէջ, մասամբ սրահը երկու շարքով. Այդ զոյգ շարքին մէջին է, որ կայսերական ա-

մոլը առաջ կուզա խորքեն ծանր ու ուլով. Բոլորը կը խոնարհին անոնց անցնելու ատենը.

Կայսրը՝ Նիկեֆոր Ֆոկաս, կայսրուհին՝ Թէօֆանո. Երկուսն ալ հազար են կայսերական պատօնական լրիւ հանդերձանցքը. ծիրանի մանրօ, ծիրանի կօժիկ, ոսկի բազ ու կայսիսն. Թէօֆանո շեղ ու սլացիկ կազմով, 26—27 տարու, դեմքը երկարաւուն, խոռոր նուռ աշեն, զորոզ նայեածք եւ առաս դեղձան մազեր. բացառիկ գեղեցկուհի:

Երբ կը հասնին զամին ոսքը՝ կայսր կանգ կ'առնեն ու կը դառնա գեպի Մեծ լոկորէդը, զանձի ու արտաքին զործերու վարիչը, որը խիս շարժուն ու սերեւեր մարդ մրեն է:

ԿԱՅՍԵՐԸ. — Կը մեծարե՛ս այդ ոռուսները, ինչպէս հարկն է. կ'ընծայի՛ս մէյ-մէկ հարուստ խալաթ, բայց աչքդ վրանին կը պահես

ՄԵԾ ՀՈԿՈԹԷԴԻԸ. — (Ժպտուն) Գ. Իսեհ'մ, տէ՛ր.

ԿԱՅՍԵՐԸ. — Ըստրէ՛ նաև քանի մը կտոր յարմար բան, որ տանին իրենց Մեծ-իշխաննին, Սա՛նկ, բա՛ն մը, որ մասնաւոր կերպով սիրելի ըստ իրենց բարբարոս ճաշակին:

ԿԱՅԵՒՈՐ ՊՍԼԱՏԱԿԱՆԸ. — Իրենց ամենէն աւելի սիրած բանը մէր բիւզանդական լիակչու ոսկին է, տէ՛ր. ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՎ. — Որը այսօր հրաշալի գործ տեսաւ արդէն:

ՄԵՆԱՏՈՐ ՊՈՆԴԻՍ. — (Ծեր, նախկին զօրավար) Ինչպէս միշտ:

ԿԱՅՍԵՐԸ. — Տեսա՞ր, թէօֆանո, գաշինքը ասոր կ'ը-անս:

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՎ. — Խորունկ է, տէ՛ր, քաղաքա-կանութեանդ խմաստոթիւնը:

ԿԱՅՍԵՐԸ. — (Գոհ) Դէ՛, թող այդ սկիւթը քէ հիմա

— 23 —

**ԵՐ ԽՈՌՄԱՆԸ ԳԵՎԻ ԲՈՆԿԱՐԻԱ:**

**ԿԱՅԻՑԻՈՒՐ ՊԱԼԱՏԱԿՈՒՆԻ. — Ազւոր անակընկալ մը  
ԲՈՆԿԱՐՆԿՐՈՒ մեծ ցարին:**

**ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻ. — Զատկի հրաշալի նէէր մը:**

**ԿԱՅՍՐԸ. — (Հեգես) Մեր ամենասիրելի աղջականին  
Բոլոր իր խնդան զավրած**

**ԿԱՅՍՐԸ. — (Լուրջ) Եւ ալ յոյս ունիմ՝ կը հան-  
գասանան վիրջապէս մեր հիւսիսի սահմանները Բոնկար  
սպառնալիքէն:**

**ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻ. — (Չարացած) Ինչպէս և մեր ա-  
փերը ուսւ նաւերու ելուզակ այցերէն:**

**ԿԱՅՍՐԸ. — Թշնամիներդ պիտի կուին, որ դուն  
հանգիստ քուն ըլլա:**

**ՄԵՆԱՏՈՐ ՊՈՆԴԻՍ. — Այդպէս է, տէ՛ր:**

**ԿԱՅՍՐԸ. — Ճնորհակալ եմ բոլորէդ, ձեր խորհուր-  
դէն, ու ողոյթէն:**

**Բոլորը խոր գլուխ կուտան ու կը բաւրին միջանց-  
քը. կը գոցին կամարին վարագոյները:**

2

**ԿԱՅՍՐԸ. — Կ'ուզե՞ս, թէօփա՞նօ, ինծի հետ ըլլա  
իրիկունը:**

**Թէօֆանօ. — Սիրով, տէ՛ր:**

**ԿԱՅՍՐԸ. — Այս օրւան աշխատանքէս իրաւունք  
ունիմ դոհ ըլլալու իսկ դուն պէտք է մօսս գտնւիս, որ  
գոհունակութիւնս լրիւ ըլլա:**

**Թէօֆանօ. — Դեռ միշտ նոյն կարծիքի՞ն ես:**

**ԿԱՅՍՐԸ. — Միշտ: (Քիչ մը խորհելեն եօք) Դուն  
ինծի համար ո՛չ միայն կինս ես, ո՛չ միայն գահիս թա-  
գուհին, այլ... ինչպէս ըսեմ, որ ճիշտ ըլլա. դուն... իմ  
բաղդս ես:**

**Թէօֆանօ. — (Ժպտուի) Բա՞զբ:**

**ԿԱՅՍՐԸ. — Կը յիշի՞ս այն առաջին օրը, երբ անու-  
շն անգամ ժապացար ինծի քու այն սուզի ձերմակ  
զգաւոններուդ մէջէն. դուն այրի թագուհին, ե՞ս քու զօ-  
րալարըդ. Այն օրէն, թէօփա՞նօ, անընդհատ յաջողեր է  
ինծի ամե՞ն բան, ինչ որ բաներ եմ, ինչ որ ըրեր եմ,  
և վարչութեանս մէջ և՛ կուի գաշտին վրա:**

**Թէօֆանօ. — Իրա՞ւ:**

**ԿԱՅՍՐԸ. — Ասոր համար է, որ ամեն անգամ, երբ  
նոր ու լուրջ, քայլ մը կ'առնեմ, ա՛յ, ինչպէս այսօր,  
կ'ուզիմ որ դուն քովս ըլլաս, կ'ուզիմ նայիմ, ա՛յ, այս-  
պէս քու այդ եզնիկի խոշոր աշքերուդ, որուն խորքէն  
բարձր միշտ ժապար է ինծի: Այօթքի պէս անհրաժեշտ  
բան մըն է ասուիկա հոգիին համար:**

**Թէօֆանօ. — Երջանիկ եմ:**

**ԿԱՅՍՐԸ. — Գումար փոխէ հազարաներուդ ու հիզուր:  
Վասիլ:**

3

**Թէօֆանօ կ'երա դեպի հակտի աջ ուկի դաճակը,  
կը հանս ծոյլ շարժումով մը, կը մտնէ ու կը գոցէ:  
Մինչ լողմանի ազէն կուզա Վասիլ Անդրադէն, բարձ-  
րահասակ ու բիլինել. Շերինի և իր անմազ դեմքին վրա  
մօսնակ ստուծ ժայիս մը: Կայսեր առաջին սենիկա-  
պիտի և ու անձնական խորհրդականը՝ պարզիմունկը**

**Կայսեր անոր կ'երկար ձեռքի կայխոննը, անոր օք-  
նութեամբ կը հանէ ծիրանին ու բաղը: Այդ միջոցին և,  
ու լը խօսուի:**

**ԿԱՅՍՐԸ. — Ի՞նչ նոր:**

**ՎԱՍԻԼ ԱՆԴՐԱԴԵՆ. — Կիսանքդ երկար, տէ՛ր: Յովսեփ  
Բրինկաս մեռեր է իր աքսորին մէջ:**

— 25 —

ԿԱՅՍՐԸ.— Նո՞ր է մեռեր: Անիկա ինծի համար մեռաւ ա'յն օրը, երբ ես յաղթական գնդերուս զլուխը անցած Ոսկի գոներէն ներս մտա կոռաւնտիանոսի այս աշխարհակալ քաղաքը ու բարձրացա այս գահը: (Կը բարձրանա, կը նսի):

ՎԱՅԻԼ ԼԵԿՈՂԻՆ.— Այն օրը մեռան քու բոլոր թշնամիներդ, տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ.— Ի՞նչ արագ կը թուչի ժամանակը:

ՎԱՅԻԼ ԼԵԿՈՂԻՆ.— Գուցէ, բայց ոչ ապարդիւն ինչքան գործ է տեսնւած այս մէկ-երկու տարւան մէջ՝ ԿԱՅՍՐԸ.— Իրա՛ւ է, շատ աշխատեցա:

ՎԱՅԻԼ ԼԵԿՈՂԻՆ.— Եւ ի՞նչ գործ: Պէտք է մենք ես երթանք գարեր ու գարեր, մինչև Յուստինիանոս, ո՛ գտնենք վերջապէս մէկը՝ արժանի քեզի հետ համեմատ մլու:

ԿԱՅՍՐԸ.— Յուստինիանոս: Իսկ ուրիշ ոչո՞ք:

ՎԱՅԻԼ ԼԵԿՈՂԻՆ.— Ուրիշ:

ԿԱՅՍՐԸ.— Թո՛ղ հինգ բայց, այս, այնքան դէմքեր կան չուրջտ պալատիս մէջ, դուրսը բանակիս մէջ. միթէ անոնց մէջ չ'ս գուներ նոյնիսկ մէկը:

ՎԱՅԻԼ ԼԵԿՈՂԻՆ.— Տէ՛ր, մեծ պիտիերուն մեծ ծառաներ, անշո՛ւշտ. բայց այդ բոլոր բազմութեան մէջ ո՞վ կա, որուն փառքը՝ հաւասար զա քու փառքիդ, որուն տաղանդը մրցի քու տաղանդիդ և ո՞ր անունն է, որ կընա հնչեր հոս քու անունիդ գէմ:

4

ԱԻԱԴ ԱՐԱՐՈՂԱՂԵՏԻ.— (Բարձրացնելով նակշի վարագոյր կը լայտարակ բարձր ու պատօնական, հասկի-հասքի) Օհա՛ն Գուրգէն, արևելիան բանակներուն վերին հրամանառա՛րը, կո՛մս, պատրիկ ու մակի՛ստրոս:

ԿԱՅՍՐԸ.— (Կը ցնցը ի, ու խոժոն) Թող գա՛:  
Արարողապետը աւելի կը բարձրացընէ վարագոյրը  
եւ նեռուն կ'երեւա Օհան Գուրգէն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— (Հազիւ ներս մտած՝ արարողապետին) Բայց, բարեկա՛մս, կարծեմ կարիք չկա այսպէս ամիսն անգամ իմ բոլոր տիտղոսներս շարելու: Զենք մոռնար, մի՛ վախնար:

ԱԻԱԴ ԱՐԱՐՈՂԱՂԵՏԻ.— (Խոնարհ) Պալատական հնաւանդ սովորութիւն մը միայն, ինչպէս որ լաւ գիտէ մեծ հրամանառարը: (Կը բաւի գուրա):

5

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— (Կ'երքա շիտակ կայսեր դեմք ու կը կենա աջ ձեռքը վեր) Առողջութի՛ւն կայսեր:

ԿԱՅՍՐԸ.— Ողջո՞յն, հրամանատա՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Որը սակայն արդէն սկսեր է մոռնալ, թէ ինքն է զլուխը այն հնաւառ գնդերուն:

ԿԱՅՍՐԸ.— Ի՞նչ ընեմ, վասի՛ւ, որ այս մարդը գգոռն չըսա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— (Խուրբ նեզնութեամբ) Դժգո՞հ. այսքան պատիւներուն, մեծարանքին ու այն բացառիկ ուշադրութեան հանդէպ, որ քու խելքդ լիներդ է, արաբական սահմաններդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Ներող պիտի ըլլա կայսրը. հին զինւորի մը արմատացած նախասիրութիւն:

ԿԱՅՍՐԸ.— Իսկ ե՞ս կը կարծես իմ հաճոյքիս համա՞ր է, որ նստեր եմ այս ոսկեզօծ պատերուն ետին:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Դուն կայսր եա:

— 27 —

ԿԱՅՍՐԸ.— Նախ զինւո՞ր Բայց զինւորը պիտի ըլլա հոն, ուր պարտականութիւնը կը կանչէ և ոչ թէ հոն, ուր իր նախասիրութիւնները կը քաշեն: Հոս պէտք ես դուն ինծի:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Բայց...

ԿԱՅՍՐԸ.— Նորէ՞ն բայց Բայց... զուն մարդը համբերութիւնէ կը հանիս:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Վիրաւորւած) Բու խոնարի ծառադ:

ԿԱՅՍՐԸ.— Թո՛ղ յիմարութիւնը: Ես ալ քեզի պէս ժամ մը առաջ արշաւանքս կ'երազեմ ու Ամանոսի բարձունքը: Թող որ աւարտիմ պատրաստութիւնո: Այնպէս չէ, վասի՞լ:

ՎԱՅԻԼ ԼԵԿԱՊԵՏ. — Կայսրը իրաւունք ունի, հրամանաւո՞ր, պէտք է համբերս զիշ մըն ար

6

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ. — (Կողմանի աջեկ) Վա՛յ, կո՛մս, այս ի՞նչ բազ, ի՞նչ երջանկութիւն, ի՞նչ հազւագէպ պատիւ պալատին մէջ հանդպիւը քեզին եւ, ճշմարի՛տ, խելօքը դուն ես, զուրաը եղողներդ: Հոս պալատին մէջ ո՛չ զիշերն է յայտնի, ո՛չ ցորեկը զլուխ քորելու ժամանակ չկա Ա՛յ, հիմա ալ թէն անչափ կը ցաւիմ, բայց ստիպւած եմ ընդհատելու մէր այս հմայիչ տեսակցութիւնը: (Կայսեր) Պէտք է ստորագրուի, տէ ր:

ԿԱՅՍՐԸ.— Իսկո՞՞ն: (Մօժիխալով Գուրգենին) Մեր դաշինքն է Սվեադուլաւի հետ: Ի՞նչ կ'ըսես: Հը լո՞ւն ես:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Կարծես ակամա) Ինչո՞ւ կը կանչես այդ վանճաւոր զաղանը Բուլիկարիս:

ԿԱՅՍՐԸ.— Ե՞ս պիտի բացատրեմ քեզին Այդ անհած ուռւները առաջին օրէն աչքերնին տնկեր են մէր

յակապ քաղաքին վրա Զշնդէի՞ ուրիշ կորմ իրենց առժակը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Մինչև հիմա ծովուն ճամբան ետէին: հիմա սորվեցուցիր և ցամաքի ճամբան: Դա ուր, Բալքան, Սոգորիանուզօլիս, վաղը կ'ըլլան մէր արիսաներուն առկը:

ԿԱՅՍՐԸ.— (Ծիծաղելով) Ի՞նչ վա՞զը... Էը, Էը, ը, Էը: (Ծեծելով անու ուսը) Մի՞ վախնար: Քեզի ուկս օրավար ունիմ ու քեզի պէս քաղաքագէտ, թող զան: Լուգ դրւս-աջեկն:

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ. Կորին յարզանքներուս մշտան հաւասարքը, կո՞մս Նախանձելի մարզ էք, ճշմարիմ: Կայսեր վարչայանքն էք զուք, ժողովուրդի սիսլին, կանանց պաշտամունքը Բնդունիցէ՞ք և իմ երազագութիւնս: (Խուրս կայսեր ենեւնի):

7

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Իսկ այս կաշաղակի՞ սրչը ինչու ը պահէք պալատին մէջ, ով պարողիմումէն:

ՎԱՅԻԼ ԼԵԿԱՊԵՏ. — (Ծիծաղը զայելու զանեով ու անարի) Կայսեր կամքը, հրամանաւուր: Անիկա անշուշտ փուկ իր ընտրածը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Բարի վայելում: Թող պահէ՛ այց ինծի՞ ինծի ինչու կը պահէ:

ՎԱՅԻԼ ԼԵԿԱՊԵՏ. — (Խոնարի) Կայսեր կամքը, հրամանաւուր: (Ընդգծելով) Զօրքէն ու ժողովուրդէն սիրուղը այս պատերուն մէջ չի սիրուիր: (Ծեօթ վոխելով) Յայց դուն, ահա՛ կը տեսնես, որ բացառութիւն մըն ես, աղդաւոր բացառութիւն մը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Այդպէ՞ա:

ՎԱՅԻԼ ԼԵԿԱՊԵՏ. — (Խորհրդաւոր) Քւ ՞ ու խելօք

միջակ մարդիկ շատ կան գուցէ մեր շուրջը, բայց յան դուզն ու կարող... (դժւար արտասանելով) ո՛չ ամենքը Յաջողութիւն կը ցանկամ քեզի, հրամանատար՝ կը ցան կամ միշտ յաջողութիւն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Գիտե՞մ, Վասիլ Լեկապէն, ո՞ր բարեկամներ ունիմ պալատին մէջ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Ցտեսութիւն, հրամանատար՝ Կը ներհս, որ երթամ տիրոջը ետևէն: (Դուրս):

## 8

Օհան Գուրգէն կեցած է պահ մը մտածկոս, ամսար ու սիսակ: Զգուծ կը բացւի նակի աջ ոսկի դռնակը ու կ'երեւ Թեօֆանօ: Հագրած է քերեւ, բափանցիկ մետասկ: մազերուն մարգարտայեռ վարսակալ, վրայէն ալ երկար ըլար մինչեւ ոտերը: Մածուկ ու անձայտուն կը մօտենա Գուրգէնին, հայլ մը նեռու կանգ կ'առնե:

ԹէօֆԱՆՕ. — (Յանկարձ) Զօրավա՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Կը ցնցըլի, կը դառնա ու ակամա հայլ մը ես) Թագուհի՞ն:

ԹէօֆԱՆՕ. — Ի՞նքը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ինչպէ՞ս եկար և ուրկէ՞:

ԹէօֆԱՆՕ. — Ինչպէ՞ս կու զա բաղդը և ուրկէ՞:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Բա՞զդը:

ԹէօֆԱՆՕ. — Այսօր ինծի ըսին, որ ես եմ բաղդը՝ ԶՔիր սպասեր իր գալուն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Ակնքարը մը կը խորհի) Կ'ըսպասէի:

ԹէօֆԱՆՕ. — Այսո՞...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Այսո՞ թագուհի՞: բու նայւածք պատմեր էր ինծի այդ երջանիկ հեքիաթը:

ԹէօֆԱՆՕ. — Ասո՞ր համար է, որ մատ չես ուզեր

ու կը փախչի սիրոտ հեքիաթներու այս քաղաքէն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ա՛խ, լսե՛ր ես մեր խօսածը:

ԹէօֆԱՆՕ. — Ես կը լսեմ ամեն խօսւած զգո՞ւշ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կը տեսնեմ, թագուհի՞, կը խոնարհիմ:

ԹէօֆԱՆՕ. — Ես կը սիրեմ հպարտներուն խոնարհիւ: Ես կը սիրեմ կարիքներուն հնազանդիլը: (Կորուկ)

Դուն կը մնաս հո՛ս մեր երջանիկ քաղաքը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Քանի որ այդպէս կը վճռէ բաղդու:

ԹէօֆԱՆՕ. — Հաճո է ինծի քու լեզուդ, հաճո է ինծի քու արխութիւնդ, հաճո է ինծի քու առնութիւնդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Ծունց իջնելով) Ահա՛ ես՝ քու սպառուկէ՝ քու ոտքերուդ տակը:

ԹէօֆԱՆՕ. — (Կրելարէ ձեռքը) Բունէ՛ ու ևլի՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Կը համբուրէ ըրունիին ծալրով կ'ելնէ ոտի) Հրամայէ՛, թագուհի՞: ինչ որ կ'ուզես:

ԹէօֆԱՆՕ. — Խռոք զիստի ըլլա հրամանու:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Իրա՛ւ ես: Բու զալդ արդէն հրաման է:

ԹէօֆԱՆՕ. — (Բարեհան ժպիտով մը կը հաւուի ես-ես իր դունալիր) Ուրիշն...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Պահ մը մինակ, սիսակ ու հպարտ յանկարձ կը նետի նակի վարագոյրէն դուրս):

## 9

Քիչ մը ետք ազէն կը մնե կայսր յարգանեով բնած ալեւոր հոգեւորականի մը բեւեն, որ իր սուրբն է, կորսամակ ու գողգոջուն: Կը բերէ, կը նսեցըն բազկարոռին, ինքն ալ կը հաւուի ես դեսի գահը:

ԻՐ ՍՈՒՐԳԻԾ. — (Ծունչը կանոնաւորել շանալով)

Նիկիֆոր կայսր, կանչեր էիր ինծի:

ԿԱՅՍՈՐԸ.— Բայց հանգստացի՛ր, գեռ հանգստացի՛ր:

ՍՈՒՐԲԸ.— Հանգիստը այս աշխարհի համար չէ:  
Շուտո՛վ, շուտո՛վ, մօտ է, կուզա և իմ հանգիստը:

ԿԱՅՍՈՐԸ.— Ներէ, որ նեղութիւն կուտամ քու այդ  
յոպնամ տարիքիդ: Բայց վարժըսեր եմ, կարուն ունիմ  
քու սուրբ տեսքիդ, խմատուն խօս շիդ:

ՍՈՒՐԲԸ.— Նիկիֆոր կայսր, սուրբն ու իմաստունը  
Աստւած է միայն ես մեղաւոր մարդ մըն եմ, ապահ-  
նամ իր անսահման ողորմութեանը ու կը բաղասեմ հազի  
կանչին: Դուն խօսէ քեզմէ:

ԿԱՅՍՈՐԸ.— (Քիշ մը լուս) Յու շրմաւնքներգ էիս,  
որ առաջին անգամ այսանցին ինծի Աստծու անհնա  
անօրինութիւնը, թէ հասնիմ պիսի այսաքան բարձրերը:

ՍՈՒՐԲԸ.— Այս, Նիկիֆոր կայսր, ինչո՞ւ կը կրկ-  
նեմ եւ կատարեցաւ Աստծու կամքը:

ԿԱՅՍՈՐԸ.— Անա, Եւ ես հիմա կը մատանի, լուսի որ  
այլպէս է Աստծու կամքը, ալ ուրիշ ոչոք չի պիտի սլա-  
խնծի հաւասար:

ՍՈՒՐԲԸ.— Ո՞վ է քեզի հաւասար աշխարհիս երկ-  
սին կայսր ես գուն:

ԿԱՅՍՈՐԸ.— Ոչոք աշխարհիս երկսին, ոչոք աշ-  
խարհի դիմաց: Բայց առ ներիք չէ: Ես չեմ կրնար հան-  
գուրժեր, որ ուրիշ մը քսվա կեցած իր հոգիին մէջէն  
յանդգիւի շափիւ: Իր բազուկը իմինիս, իր արւետը իւ-  
մինիս ու հապատանա իր սորքը: Ո՞չ, չի պիտի  
հաբատանա ո՞չ իր խելքովը, ո՞չ շնորհքովը, ո՞չ իր զին-  
քովը, քանի որ այլպէս է Աստծու կամքը:

ՍՈՒՐԲԸ.— Իսկ ո՞վ է ան, որ կը հպարտանա:

ԿԱՅՍՈՐԸ.— (Քիշ մը լուս) Կայ մէկը, որուն գոռոզ  
աչքերը վերէն կը նային աչքերուն խորքը:

ՍՈՒՐԲԸ.— Ո՞վ է այդ մէկը:

ԿԱՅՍՈՐԸ.— Այդ մէկը... այդ մէկը... (Կը լուկ):

ՍՈՒՐԲԸ.— Քու ազգականդ է, քու զէնընկերդ, քու  
կին ընկերդ:

ԿԱՅՍՈՐԸ.— Ուրկէ զիտես գուն:

ՍՈՒՐԲԸ.— Ուրկի ո՞վ կրնա մրցիր քեզի հետ թէ  
իր խելքովը, թէ շնորհքովը, թէ իր զէնքովը:

ԿԱՅՍՈՐԸ.— (Մոալլ) Ուրեմն կըզգաս և գուն:

ՍՈՒՐԲԸ.— Բայց անիկա քեզի հետ է եղեր միշտ,  
կուեր է քեզի համար, իր կեանքը զրեր է յաջողութեանդ:

ԿԱՅՍՈՐԸ.— Իր ծառայութիւնը ես վարձատրեր եմ  
միշտ:

ՍՈՒՐԲԸ.— Եւ այնքան ջանք է թափեր, որ գառ-  
նաս կայսր: Իր ձեռքովն ալ ամբողջ բանակիդ առջելը  
կապեր է ոտքեղ այդ կարմիր կօշիկները:

ԿԱՅՍՈՐԸ.— Մն որ չկապէր, պիտի կապէր ուրիշ մը:

ՍՈՒՐԲԸ.— Խօսքերդ կը պատմեն, որ հանգիստ չէ  
հոգիդ: Նիկիֆոր կայսր, մի՛ փաթթեր խոզիդ կայէնը:

ԿԱՅՍՈՐԸ.— Հապա ինչո՞ւ իր ամբարտաւան հոգին  
խոնարհել չուզեր առջեւ:

ՍՈՒՐԲԸ.— Ամբողջ աշխարհը մըն է քու առջելդ  
խոնարհեր և բիւր բիւրաւորներ են քեզի երկրագոււ:

ԿԱՅՍՈՐԸ.— Ինչի՞ս է պէտք բիւր բիւրաւորներու  
երկրագումը, եթէ այդ մէկը պիտի ըլլա անոնց ամբո-  
խին մէջ, Տե՛ս, ես կեցած եմ հոս, գագա՛թը, հասեր եմ հոս  
իմ յամառ աշխատանքովս ու արիներու երկար պայ-  
քարով: Հիմա իմս է այս զաթաթը, իմ իրաւո՛ւնքս և  
միա՛յն իմ: Միւս ամենքը պէտք է խոնարհին: և այն  
գլուխը, որ շիտակ կը մնա իմ գէմս, պէտք է թաւալի:

ՍՈՒՐԲԸ.— Մի՛ սպառնար, ինչ որ ընելու չե՛ս հա-  
մարձակիր:

ԿԱՅՍՈՐԸ.— Բայց չէ որ Աստւած իմ ձեռքս է գրեր  
սուրբը, չէ որ իմ կամքս է օրէնքը:

**ՍՈՒՐԲԸՆ.** — Այդպէս իսկ ի՞նչ կ'ուզես հիմա ինձմէ:

**ԿԱՅՄԱՐԸՆ.** — Օրհնութիւնդ, ինչպէս միշտ

**ՍՈՒՐԲԸՆ.** — Օրհնութիւնս, որ սպանննեաւ

**ԿՈՅՄԱՐԸՆ.** — ի՞նչ ըսել է: Այնքա՞ն-այնքան արիւն  
եմ թափեր ևս՝ դուն քու օրհնութիւնդ չե՛ս զլացեր ինձի-  
այնքա՞ն-այնքան արիւն են թափեր ինձի համար՝ դուն  
քու օրհնութիւնդ չե՛ս զլացեր ինձի:

**ՍՈՒՐԲԸՆ.** — Նիկեֆոր կայսր, նախանձը գէշ խոր-  
հրդական է և անարժան ընկեր մը՝ կայսր հոգիներու-  
վոնուն ականջիղ ետևէն:

**ԿՈՅՄԱՐԸՆ.** — Մարդ, դուն ապրեր ես աշխարհէ քաշ-  
ւած, դուն չես ճանչցած կեանքը. դուն չե՞ս եղած այն  
բարձունքներուն վրա, որը ինքդ ես զուշակեր ինձի հա-  
մար: Երկու հոգիի տեղ չկա՛ այսքան բարձրերը...

**ՍՈՒՐԲԸՆ.** — (Կելնե ոսքի, ձեռքը կը բարձրացրեն վեր  
ու կ'ըսէ հատիկ-հատիկ դողդոցուն ձայնով) Լա՛, Նիկե-  
ֆոր կայսր, այն մարդուն ձայնը, որը չէ եղեր երեք  
այդքան բարձրերը: (Լուռ): Նիկեֆոր կայսր, եթէ դուն  
ձեռք բարձրացընես քու եղբօրդ վրա, որը հասցուց քեզի  
այսքան բարձրերը, եթէ դուն ձեռք բարձրացընես ընկե-  
րոջդ վրան, որ կապից ոտքիդ այդ կարմիր կօշիկները,  
զիտցիր, չե՞ս մնար ինքդ այդ բարձրութեանը, զիտցիր,  
չե՞ս մնար ոտքիդ այդ կարմիր կօշիկները:

**ԿՈՅՄԱՐԸՆ.** — (Սեղմելով իր գահին) Հա՛յր-սուրբ...  
Հա՛յր-սուրբ...

**ՍՈՒՐԲԸՆ.** — (Վար կ'առնե ձեռքը ու դեպի դուռը):

**ԿՈՅՄԱՐԸՆ.** — (Կը ցատկէ ոսքի, առանց գահի բռնե-  
լու) Կ'երթա՞ս, հա՛յր-սուրբ արդէն երթա՞լ կ'ուզես:

**ՍՈՒՐԲԸՆ.** — Կ'երթա՞մ: Կերթամ, որ աղօթեմ: Կ'եր-  
թամ, որ աղօթեմ Նիկեֆոր կայսեր համար, որուն ձեռքն  
է զրեր Աստւած սուրբ, որուն կամքն է օրէնքը...

## Բ ՏԵՍԱՐԱՆ

ԱՐՔՈՒՆԻ ՊԱՐՏԷԶ. ԴԱՎԵՋԻ

Ծառերով, գալարուկներով ու հայտեր բոյսերով  
մեկուսացած հովասուն անկիւն մը Խորք ծայրեր են,  
որ ծովու փոքրի խորտ մը կը կազմեն: Աւելի հեռուն  
բաց ծովն է, որ արեւի կեսօրւան ուլերուն տակ կը  
ցոլցլա ակնախարդ:

Դեմ-դեմի երկու բարե նասաւան, մանրկաձեւ ու  
բիկուսերով, որոնցուն մեկուն վրա նասած է քազունին:  
բարձեր մեջքին, թեւերան ու ուներուն տակ: Երկու աղ-  
ջիկներ կեցած են ենեւը ու արմաւենի հովանաւներով  
հով կու տան մեջէմէջ. մօք կեցած է երրորդ մը՝ ձեռքը  
ունի հայելի: Աւրիշ պալատական տիկիններ ու օրիորդ-  
ներ ցրւած են հոս ու հոն, նասած, կայսած, յեսած ծա-  
սին: մեկ-երկու նոգի ալ գետինը, բագունին ոսերուն  
մօքի:

1

Մեջեղը կեցած է Կուզ պատար, կարնահասակ,  
խիս բուխ դեմքով, մազեր ցանցի մէջ, վրային բունդ  
կարմիր ժապաւեն մը, ականջներուն երկար օղեր:

Երբ տեսարանը կը բացի, բոլոր բարձրածայն կը  
խնդան: Թագունին ընկողմանած է ու կը ժպտի:

**ԴՐՍՈՒՀԻՒՆ.** — (Մուռ տալով) Հը՛ւ, գրող քեզի: Իսկ  
դուն զո՞ղ ես, զո՞վ զո՞ւ

**ԿՈՒԶ ՊԱՄԱԽԻՆ.** — Հա՛: բայց ինչքան ալ կ'աշխա-

տիմ՝ չեմ հասնիր մարդուր:

ԴՅՍՈՒԽՀԻՆ.— Ի՞նչ ըսիր:

ԿՈՒԶԸ.— Ես կը զոլնամ երկու մատով իր կնկանը ծակ զբանէն, ան կը պողնա լիքը ըռոռով կայսեր լուցուն զանձարանէն:

ԴՅՍՈՒԽՀԻՆ.— (Կը նետի պատափն վրա, բայց իլլ զայէ ինքը ինքը ու կը դառնա բազունին) Բազիլի՛սա, իրաւո՛ւնք առւր, իրաւունք առւր՝ վետամ այդ անամօթին մազեր:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ իՇԽՆԵՐ.— Մազեր պիտի ըլլան, որ փետակ:

ԿՈՒԶԸ.— (Մատնանիծ իրինան) իրա՛ւ կ'ըսէ իշխանուհիս Ես ու ինքը սովորութիւն չունինք մազ պահելու կմ զծ են երկուքն ար:

ՄԵԿԸ.— (Իրինային) կերա՞ր.

ԹԷՇԽԱՆԵՐ.— Ո՛չ գքուհի՛, ձեռք բարձրացընել կարելի չէ պառաւիս վրան: Լեզով խեղդէ՛, եթէ կրնառաւեր եմ բացարձակ ազատութիւն:

ԴՅՍՈՒԽՀԻՆ.— Մի, պիտի չըլլար թագուհին արգելքը, որ ևս ատոր կուզը տափակցընէի:

ԵՐԻՑԱՆԱՐԴԻ կին ՄԸ.— Հա՛, քրքրէինք քիչ մը կուզը տեսնէինք ի՞նչ կա մէջը, որ այդպէս գիշեր-ցերեկ շալակը առած կը պարացընէ:

ԿՈՒԶԸ.— Մի՛ վախնար, պարտիզանին տղան չէ մէջինը: որովհետեւ ան ցերեկները ծաղիկներուն ծոցը կ'ըլլա, գիշերները՝ քո՛ւ:

ԵՐԻՑԱՆԱՐԴԻ կինը.— Աստծու կրակի՛ն զաս զռւն: Ընդհանուր ծիծալ

ԿՈՒԶԸ.— Եւ վերջապէս իմ կուզիկս շատ էք տեսեր: Հետաքրքիրը ձեր կուզերն են, ա՛յ, ասո՛րը, անո՛րը...

ՏԱՐԻԲՈՏ կին ՄԸ.— Ե՞ս կուզ չունիմ:

ԿՈՒԶԸ.— Ունիմ: Զեզմէ ամե՛ն մէկը ունի իր կու-

զը, որ զիշեր-ցերեկ շալակը առած կը պատացընէ: Միայն այսպէս է աշխարհիս բանը՝ կուզիկի կուզը կը տեսնէ անկուզը, անկուզի կուզը կը տեսնէ կուզը կ'ուզին բանմ քու կուզը:

ԶՈՅՆԵՐ.— (Խնդալով) Բա՛ց, բա՛ց, տեսնե՞նք: ԿՈՒԶԸ.— Ե՛, շատ բան չէ մէջինը: ազօթք ու բարեբասանք:

ՏԱՐԻԲՈՏ կինը.— Տեսա՛ք կերած ապուրը: ԶՈՅՆԵՐ.— Յաջո՛րդը... յաջո՛րդը... իշխանուհի կա՛զիան:

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ կԱԶԻՍ.— (Երիտասարդ աղջիկ մըն է, բաւելով) Ո՛չ ո՛չ ինձի, թո՛ղ ինձի, թող ԿՈՒԶԸ.— ինչո՞ւ, իմ սիրունիկս, քու կուզիկիդ մէջինը աղնիւ ապրանց է:

ԶՈՅՆԵՐ.— Ի՞նչ է... ի՞նչ է... ըսէ ... ըսէ ... կՈՒԶԸ.— (Չինուրա ան բարեւի կենալով) Արևելան բանակներուն քաջարի հրամանատարը...

ՄԵԿԸ.— Օ՛ո... Օհան Գուրգէնը: ԻՇԽԱՆՈՒՀԻՆ կԱԶԻՍ.— (Շիկնած) Առ'ւս է, սո՛ւս է: ԴՔՍՈՒԽՀԻՆ.— (Ընդգծելով) Յաջո՛րդը:

ԿՈՒԶԸ.— (Վարանո) Ա՛ պատրիկուհի Ապամբաս... ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ ԱՊԱՄԲԱՍ.— (Խորիս) Անդի՛ն: ԿՈՒԶԸ.— (Միւսներուն) Կը վախնամ բանալու ԴՔՍՈՒԽՀԻՆ.— Վա՞յ: Զէ՞ որ խալ մըն է աս, թագուհին գլարճութիւնը: ինչէ՞ն կը վախնաս:

ԿՈՒԶԸ.— Կը վախնամ, որ փաթորիկ բարձրանա, որովհետեւ անոր կուզին մէջինը փուք է, մէծամտութիւն, ուսեցք ու քամի Եւո՛լոս... Ծիծալ ու ծիծալը զայելու ջանի:

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ ԱՊԱՄԲԱՍ.— Բայց ինձի կը թւի, որ այդ միմոսի լեզուն չափը անցնիւ սկսաւ: ԹԷՇԽԱՆԵՐ.— (Խոժոռ) Կը լսի՞ս, Անասդասի՞ս, պատ-

բիկուհին կը գտնէ, որ իմ թոյլտւութիւնս չափը անցնիլ  
է սկսեր:

ԿՈՒԶԵԼ.— Որ ըսի՞ փոթորի՛կ պիտի բարձրանա:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Հերի՛ք է: Անցի՛ր ներս: Անցէ՛ք և դուք:  
Կոմուհի Արկիրան կը բաւէ ինծի:

Կոմուհին, խորամանկ դիմագծերով եւկար ու չոր  
կին մը, նոր է ներս մտած ու լուռ կեցած է մեկդի՝  
ձեռքերը ծալլած կրծքին: Այդպէս ալ անժար կը մնա,  
մինչ միւս բոլորը կ'ելնին իրենց տեղերեն, խոր զլուխ  
կու տան ու կը նեռանան ձախի ծառերուն մեջին: Պատ-  
րիկուհին վերջիններեն է, կ'ուզէ նետելի անոնց: Թագու-  
հին կ'արգիլ է ձեռքի քերեւ շարժումով մը:

2

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— (Ծանր կ'ելնէ տեղին ու բայլ մը կ'ընէ  
դեպի պատրիկուհին) Այսպէ՞ս ուրեմն, լողի չափը սիրող  
Պատրիկուհի Ապամբաս, դուն յունական ամենահին ըն-  
տանիքի մը աղնուական զարմն ես, իսկ ես գուհիկ գինե-  
պանի մը աղջիկը:

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ.— (Սարսափահար ես-ես կ'երքա)  
Ի՞՞նչ...

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Մի՞ կեղծեր: Չէ՞ որ այդպէս ես ըսեր:  
ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ.— Ե՞ս

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Դո՞ւն:

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ.— Սարկա քեզի ըսովը իմ կորուստու  
կը նիւթէ: Սոււտ է, Բաղիլիսա:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Սո՞ւտ է: (Քնիծաղ) Ինչո՞ւ է սուտ:  
Դուն զեղեցիկ ես, շատ ես զեղեցիկ, բայց ես զեղեցիկ եմ  
քեղմէ՛ ալ աւելի: Ա՞ս ալ սուտ է:

ՊԱՏՐԻԿՈՒՀԻՆ.— Բայց, Բաղիլիսա...

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Գնա՞։ պէտք չէ՛ ինծի քու արգարա-

ցումէ: միայն նայէ՛, որ քիչ երկաս աչքիս:  
Պատրիկուհին կը նեռանա ալլալած:

3

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— ԱՐԿԻՐԻԱՆ:— Սատւա՛ծ իմ, այդ տեսակ  
ալ խօսք: Ո՛չ, թագուհի՛, ան չի՛ համարձակիր: Ո՞վ ըստ  
քեզի:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Ո՛չ ոք:

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— Ուրի՞մն:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Հապա իր հասաքրքիր աչքի՞րը, շա-  
րունակ հառեկո ու առջեկո: Ուտքերուս գէմը քար չի պի-  
տի իյնա, Մելա՞նիս:

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— Քարը իյնա թշնամիներուդ զիխուն:  
Ո՞վ կրնա ըլլար քու կամքիդ արգելք: Ամե՞նքը, թա-  
գուհի՛, ու ամե՞ն ինչ սանդւած է քու վայելքիդ համար,  
քու վայելքութեանդ:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— (Երազինս) Ես պէ՛տք է մնամ զեղեցիկ,  
իս պէ՛տք է մնամ թագուհի:

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— Թող արեդ երկար ըլլա: Դուն կը  
մնաս միշտ ան, ինչ որ ես

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Ո՛չ այզպէտ ես կը ցանկամ նորէ՞ն ու  
նորէն զեղեցիկ, միշտ նո՛ր զեղեցիկ: Ես կը ցանկամ նո-  
րէ՞ն ու նորէն թագուհի, միշտ նո՛ր թագուհի: Պէտք է  
լոցընս կիանքիդ բաժտկը միշտ նոր ու նոր, որ չցամքի:

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— (Ժայռուն) Ուրիշ խօսքով՝ տամ նշա-  
նը, որ նաւակը մօտենա:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— (Յուզւած կը ցանկի ոտքի) Նաւա՞կը:  
ԿՈՄՍՈՒՀԻՆ.— Այս՛, թագուհի՛, հրւանդանի ետին:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Ինչո՞ւ չէիր ըսկը:

ԿՈՄՍՈՒՀԻՆ.— Թողի որ ասոնք քաշւին: և դուն կը  
խօսէիր: Կանչե՞մ:

ԹԷՅՅԱՆՈՒՅՈՒՆ.— Կեցի՛ր: Պէտք է հանգիստ, բուրբուլն

հանգիստ էրիկ-մարդու սանձը պէտք է ձիգ պահեստ  
ԿՈՄՍՈՒՀԻՀԻՆ. — Անսնց սանձը միշտ է եղիր բուսիդ  
մէջը, թագուհի։ Բացառութիւն չէ և այս մէկը

ԹէՕՖԱՆՈ. — (Կը լու պահ մը աշխերը գոյ, եսքը  
կը բանա կամաց ու կ'բան հանգիստ) Թռղ զա։

4

Կայսրուհին նսած է իր տեղը մինակ ու հպատ։  
Ժայռեռուն մէջեն պղտիկ նաւակ մը կը մտնէ խորօք։  
Օհան Գուրգէն ահազին լայնեղր գլխարք մը գլխուն կը  
ցատկէ ցամաք, գլխարքը կը հանէ, կը մետք նաւակին  
մէջ ու ինքն ալ կու գա ժիտակ դեպի կայսրուհին։

ԹէՕՖԱՆՈ. — (Ժպտուն, բայց կտրուկ ու հանգիստ  
շարժումով մը) ԱՇ, ԱՇ, կեցիր հոտ, մի մօտենար։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — (Կը բարձրացնէ գլուխը) Ի՞նչպէ՞ս։  
ԹէՕՖԱՆՈ. — Հեռուէ՞ն, հեռուէ՞ն

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — Ի՞նչո՞ւ։

ԹէՕՖԱՆՈ. — Իմ կամքս չէ։ Այդպէս կ'ուզեմ ես։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — Նոր սահմաններ։

ԹէՕՖԱՆՈ. — Դիցո՞ւք։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — Բայց ևս ատեր եմ միշտ բոլոր  
սահմանները, թէ՛ հին, թէ՛ նոր (Պերքա դեպի կինը)։

ԹէՕՖԱՆՈ. — (Ուժի կ'ելնէ ձեռքի արգիլով շարժու-  
մով մը) ԱՇ՝ ըսի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — (Բանելով ձեռքը) Նայէ՛ ինձի։

Վայրիկան մը լուռ ու յանառ կեցած են աշխաշի,  
ձեռք-ձեռքի, կարծես պատրաստ կռւելու։ Յանկարծ կայս-  
րուհին կը բառէ ձեռքը ես ու թեւեռուն բոլոր ուժովը կը  
գալարի անոր վիզը։ Կը գրկիին։

ԹէՕՖԱՆՈ. — Միայն չերեակայիս, թէ կը սիրիմ  
քեզին ես ոչ-մէկը չեմ սիրած կիանքիս մէջ, ո՛չ-մէկը։ և

Կրիպէք ալ սիրելու չեմ. կը հասկընա՞ս, երբե՛ք ո՛չ-մէկը  
Աս, ա՛յսպէս, խաղ մըն է, այդպէ՞ս կ'ուզէ հաճոյքս,  
քմահաճոյքս։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — Լսէ՛, թէօփա՞նօ. ամիսէ մը  
անցնի պիտի զօրքը արաբական սահմանը երկու օրէն  
կը մեկնիմ ես՝ բանակները շարժման մէջ դնելու։

ԹէՕՖԱՆՈ. — (Ծալրով) ԱՇ, վերջապէս. կ'ազատիս  
բանակէդ, սակի վանդակէդ։ (Լուրջ) ԱՇ, չե՛ս ազատիր։  
Ամբողջ ամսուր քեզի, կորիւներուդ, արաբներուդ, ինչի  
որ կ'ուզես։ Բայց աշունը գալուն պէս գարձող զօրքին  
հետ պէտք է ըլլաս հօտ կանցի՞ր։ Զմեռն ու գարունը  
գուն իմա ետ

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — ԱՇ, թադուհի՛, ես վճռած եմ  
այլես սաք չգնեն այս քաղաքը... իբրև մուրացիկ։

ԹէՕՖԱՆՈ. — Մուրացիկ։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — Ամեն գալուս նոյն յաղթական  
տափակ ընդունելութիւնը Ոսկի գուներէն մինչև կրկէսը.  
վրայէն ալ արքունի զանձէն նւէր մը խոշոր, ողորմու-  
թիւն չէ, հապա ի՞նչ է, որ մուրացկանի մը առջեր կար-  
ծես կը նստեն եւ վերջապէս գուն, ի՞նչ է այս քու  
սէրդ, թէօփանօ։ Գուն ի՞նքը զինք կու տաս ինձի, ինչ-  
պէս ողորմութիւն մը, որ կը հանին մուրացկանին։

ԹէՕՖԱՆՈ. — (Խորխան) Զօրավա՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — ԱՇ, «զօրավար» կը նետես ե-  
րեսիս, որովհնուկ զօրավար ըսածդ սուր մըն է միայն  
ուրիշի ձեռքին իսկ ես այլ ես չեմ ուզեր ըլլամ սուր մը  
ուրիշի ձեռքին։ կ'ուզեմ ըլլամ իմ սուրս իմ ձեռքիս։

ԹէՕՖԱՆՈ. — Կ'ըմբանե՞ս զուն ի՞նչ որ լեզուդ կը  
խօսի։

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՀԻՆ. — կ'ուզի՞ս թարգմանեմ։ Այս քա-  
ղաքը ազատ սոտք գնել ուզողը իր բանակներովը պիտի  
զա։

**ԹէօֆԱնօ.** — (Կեցած է լուր ու խոժոն):

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Լոհցի՞ր:

**ԹէօֆԱնօ.** — Յանդուցն է խօսքդ. կը վայլէ՛ գէմքիդ:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Իսկ քու կա՞չքդ:

**ԹէօֆԱնօ.** — Խօսքդ լսեցի. չտեսա՛ գործդ:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Լա՛ւ. ուրին կրնանք բաժնուիր:

(Զեռքը կ'երկարէ երաժետի):

**ԹէօֆԱնօ.** — (Առանց ձեռքը տալու եւ երգիծանելով) Երբ գալու ըլլաս քու բանակներովդ, այն ատեն վճիռները կու տաս գուն. հիմա դեռ քիչիկ մը կանուխ է կարծեմ. գեռ ի՞մս է հրամանը:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Հրամայէ՛:

**ԹէօֆԱնօ.** — Այսպէս, պարտէզի մը չորս ճամբուն վրա չենք կրնար բաժնուիր իրարմէ. Վաղը կու գաս ինչի, հրամեցտի. Կու գաս նո՞յն ժամուն, նո՞յն ճամբով, որ գիտես. միայն խնդրեմ ո՛չ այդ լուրջ գէմքդ, ո՛չ ալ այդ ճնշաւորի տրամադրութիւնդ:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — (Աշխուժ) Ո՛չ Թէօփանօ, վաղը գիշեր լրջութիւնն ու ճգնութիւնը, ինչպէս և բոլոր քրիստոնէութիւնն կը հանեմ, կը թողնեմ տունը ու կը մտնեմ նաւակս քու այն գողորիկ ամարանոցդ գալու, ինչպէս հին հեթանոս յոյնը, երբ կը նստէր իր նաւը Աֆրոնտիսէի կղզին սիրու տաճարը երթալու. ինչպէս հին հեթանոս յոյնը կու գամ վաղը գիշեր, վերջին անգամ մը քու երկնային գեղեցկութիւնդ փառաբաննելու ու պաշտիւր քու աստածային մերկութիւնդ:

**ԹէօֆԱնօ.** — (Զեռքովը կը գոցէ բերանը) Լոէ՛:

Հրամանաւորը կը համբուրէ կնօշ զոյգ ձեռքերը, կը ցատկէ նաւակը, կը դնէ զլխարկը ու բիավարելով կ'ելնէ խորեն դուրս. Թագուհին կեցած է վայելքի ժայիր երեսին ու կը հետեւի հեռացող նաւակին. Կլխու բերեւ

շարժումով մը վերջին անգամ բարեւելին եսքը, վես ու յաղբական կը շարժուի առաջ դեպի ձախի ելքը:

5

**ՎԱՄԻԼ ԼԵԿԱՊԵՏ.** — (Նոյն միջոցին կը մտնէ աջին, երկու բայլ կու զայ դեպի բագուհին եւ լուր ու խորը կը խոնարիի):

**ԹէօֆԱնօ.** — (Նախ կանգ կ'առնէ այլայլած, բայց իսկոյն կը զայ ինքը ինքը ու կ'ըսկի խնդուանոնդ ծիծաղով մը) Մեծ պարողիմումէնը ելեր է պառյատի. կարօտեր է ծովաւ հեքին, ծովուն բացին, անց ու դարձին... Հա՛, հա՛, հա՛, հա՛:

**ՎԱՄԻԼ ԼԵԿԱՊԵՏ.** — Զգիտէի, որ այս կողմն է թագուհին: Կը թափառէի աննպատակ:

**ԹէօֆԱնօ.** — Ո՞վ կը կասկածի: Ու կը փնտուէիր հետք մը միայն. է՛, գո՞հ ևս հիմա. զո՞նէ ճանչցա՞ր. Ըսէ՛ նայիմ՝ ի՞նչ տեսար:

**ՎԱՄԻԼ ԼԵԿԱՊԵՏ.** — Ես ոչինչ չտեսա՛, կայսրուէի՛, ԹէօֆԱնօ. — Դարձի՛ր դարձիր կրունկներուդ վրա ու վաղէ՛ ինկի՛ր տիրոջդ սովերը, ինչպէս որ կը վայելէ հաւատասրիմ շանը վաղէ՛, ան կը վարձատրէ քեզի, կու տա ոսկի, կու տա պաշտօն. Գնա՛, չո՛ւտ, ինկիր սովը ու պատմէ՛ ինչ որ տեսար:

**ՎԱՄԻԼ ԼԵԿԱՊԵՏ.** — Ես ոչինչ չտեսա, կայսրուէի՛:

**ԹէօֆԱնօ.** — Հա՛. պահել կ'ուզես ձեռքդ այդ նոր ու սուր զէնքը, որ խաղընես աչքերուս դէմը արևուն տակ ու շինս ինծի ալ գործիք մը քեզի: Բայց չե՞ս վախնար, որ յանկարծ խլեմ ձեռքէդ նոր զէնքդ ու նոյն զէնքով թափել տամ աչքերուդ լոյսը, որով գուն տեսար:

**ՎԱՄԻԼ ԼԵԿԱՊԵՏ.** — Ես ոչինչ չտեսա, կայսրուէի՛:

**ԹէօֆԱնօ.** — (Կտրուկ) Այո՛, գուն ոչինչ չտեսար:

իրաւ է: Գաղտնիք մը չէ, վա՛սիլ Լեկապէն, ո՛չ քեզի և  
ո՛չ ինծի, որ մենք միշտ կեցած են և եղեր իրար դէմ  
ահա՝ այսպէս, իբրև երկու թշնամին:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Ինչպէս կը համարձակի քու  
սոքի փոշին:

ԹԷՅՅԱՅՆՈ. — Դուն չես կրնար ներեր ինծի, որ ես  
կին եմ ու կը տիրեմ. ես չեմ կրնար ներեր քեզի, որ  
քեզի դէմ անզօր եմ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — (Խոնարհ) կայսրուհի...

ԹԷՅՅԱՅՆՈ. — Այս պալատը հարս եկած օրէս հնժար-  
կեր եմ ինծի ամենքը, վարեր եմ ամենքը, ինչպէս ուղեր  
եմ, անզօր եմ եղած միայն քու հանգէսր:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Ինչպէս, կայսրուհի ինծի պէս  
չնչին խորհըրդական մը, հասարակ պալատական մը...

ԹԷՅՅԱՅՆՈ. — Դուն հասարակ պալատական մը չես.  
Դուն միակ պալատականն ես այս պալատին մէջ. դուն  
պալատը ինքն ես. քու ռւսերսւդ են յինած այս պատիը:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Շատ մեծ պատիւ կ'ընէ ինծի  
կայսրուհիս իր շռայլ կարծիքով:

ԹԷՅՅԱՅՆՈ. — Ի՞նչ կարիք ծեքծեքումի. չէ՞ որ մենք  
իրար հասկըցեր ենք միշտ, միւնոյն է, խօսինք թէ  
լրենք: Վասիլ Լեկապէն, մենք ենք այս պալատի հո-  
գին, ես ու գուն, միշտ բաժնւած ու միշտ կապւած  
իրարու, միշտ թշնամի ու միշտ յինած իրարու: Կապ-  
ւած ենք, որովհետեւ կ'ատենք իրար, կ'ատենք որով-  
հետեւ պէտք է հաշւի առնենք իրար: Ես զիտեմ, որ դուն  
իիմա չես յայտնելու ոչ-սքին ինչ որ տեսար Խօսէ՛, ո՞րն  
է այն փրկանքը, որ դուն կը պահանջես ինծմէ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Քա՛ւ, կայսրուհի. ի՞նչ փրկանք:

ԹԷՅՅԱՅՆՈ. — Խօսէ՛, ի՞նչ է քու պահանջդդ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Ինդի՞րքա. ըլլալ քու խոնարհ  
ծառադ, ըլլալ արժանի վատահութեանդ, ըդիդի, ծրագրիդ:

ԹԷՅՅԱՅՆՈ. — (Փայտուն) Տեղեա՛կ ըլլալ կ'ուզես. կ'ու-  
զես իմանաս ինչ որ կը դառնա, ինչ որ ես կ'ուզես:  
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Եթէ իմ կայսրուհիս արժանի  
համարէ ինծի այդ գերազոյն բաղդին:

ԹԷՅՅԱՅՆՈ. — Խակ ո՞ւրիշ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — Ողջութիւնդ, կայսրուհի:

ԹԷՅՅԱՅՆՈ. — (Հպարտ) Աղէ՛կ: Կ'ըլլա՛ ուզածդ: յան-  
կարծակիի չես գար: Կ'երգնում քեզի... զեղեցկութեանս  
վրաւ (Դուրս):

6

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԷՆ. — (Քիչ մը ատեն կը մես իր խո-  
նարհ դիրելը, վերջը կամաց-կամաց կը բարձրանա, կը  
տևկը, կը նայի անոր ետեւեն հիացումի ու շարութեան  
խառն արտայայտութեամբ ու կը խօսի հետզիետ: անող  
դառնութեամբ) Թող գա՛, թող գա ա՛ս ալ, թող գա ա-  
մէ՛կն ալ և ամեն եկող թող գա ու անցնի քու վրայէդ.  
Ես կ'ուզեմ, որ բոլորը, բոլորը զան ու անցնին քու  
վրայէդ: և բոլոր անոնք որ եկեր ու անցեր են բու  
վրայէդ, կոխեմ ես ոտքերուս տակը ու քալեմ անցնիմ  
իրենց վրայէն: Մինչեւ որ... մինչեւ որ օր մըն ալ նետեմ  
քեզի քայլերուս տակը, կոխեմ ու անցնիմ և քու վրա-  
յէդ, քու այդ զոռոզութեանդ, քու այդ զեղեցկութեանդ  
վրայէն: քո՛ւ... քո՛ւ... է՛զ:

# Երկրորդ Արար

## Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՀԱՇՏԵՌԻ ԱԿՐԵԲԻՆ ՏԻԳՐԻՄԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՆ ՄՈՏԻԿ  
ՑԱՌ ԱՌԱՍՏԱՂՈՎ ՍԵՆԵԱԿ ՄԸ

Միակ մուտքը ճակտեն է, որ բաց է միշտ ու կը<sup>1</sup>  
հանել պայծառ լուսաւորւած սրահը:

1

Արխոնի Դուկաս' խոժոռ արտայայտութեամբ, ճաւ-  
ղաս ու տարիքոս մարդ մը: Արխոնի Թոռնիկ՝ ներմրկած,  
բայց բարմ ու կենաւորախ:

ԱՐԽՈՆԻ ԹՈՌՆԻԿ. — ՏԻՇՆ է, թող այդ ֆոկասը  
հոգիդ ալ հանէ. քեզի պէս կծծիին այդպէս ալ պէտք է:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — Զի՞ մարտիր:

ԱՐԽՈՆԻ ԹՈՌՆԻԿ. — (Դուռը ցոյց տալով) Իսկ այս  
մէկը: Տեսա՞ր դուն կայսր ըլլալու մարդը:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — Հա՞ ախորժակը տեղն է:

ԱՐԽՈՆԻ ԹՈՌՆԻԿ. — (Խեր) Զի հաւնեցա՞ր:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — (Մատներուն վրա համելով)  
Ֆոկասները, գուրգէնները, Սկլերոսները. ահա՛ այս ե-  
րեք տունը չէ. բաներ են Անատոլիի լաւագոյն թիմերը,

լաւագոյն հողերը, ամեն պաշտօն ամեն գիրք. այս ա-  
հազին բանակն ալ գրեր են մէջտեղը, հեծեր են վրան,  
գէ՛ իհա՛րկէ, որ կ'ուզեն կայսր դատնան: Ֆոկասը հաստ  
իր մուրազին, հիմա հերթը Գուրգէնինն է. վաղն ալ  
անշուշտ կու գան Սկլերոսները:

ԱՐԽՈՆԻ ԴՈՌՆԻԿ. — Իսկ միւս օրն ալ... Դուկաս-  
ները: Զէ՞ որ դուք ալ մեծ տուն էք, ընդարձակ հողեր,  
ինչքան ալ որ ֆոկասը չորս ծայրերէն կը խուզէ: Հըմ...  
ճաղատ զլիսուդ մէջ գուցէ դուն ալ երազ կը տեսնես,  
հէ... բիւզանդական զահին վրա, սա՞նկ, ոտքերդ փա-  
ռաւոր երկնցուցած:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — Մի ինդար, լաւ չէ, լաւ չէ:

ԱՐԽՈՆԻ ԴՈՌՆԻԿ. — (Ծաղրական) Ի՞նչը, ա՛յ քաւ-  
թառ:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — Հօն ոիրող կայսերական տուն  
կա, օրինաւոր ժառանգներ կան: Սուրբ բան է ժառան-  
գական իրաւունքը:

ԱՐԽՈՆԻ ԴՈՌՆԻԿ. — Ա՛, առերբ, իհա՛րկէ... ախոռ-  
ներէն դուրս եկած:

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — (Ապուս շետքով) Հը:

ԱՐԽՈՆԻ ԴՈՌՆԻԿ. — (Դրգուած) Այդ քու սուրբ  
կայսերական տան հիմնադիրը ասկէ ուզիղ հարիւր տարի  
առաջ պալատի ախոռներուն վիրակացուն էր ու ինծի  
պէս ալ պարզ ու անսուրբ հայ մը. բայց խելքը տեղը,  
ձարպիկ, տափկա արդէն ուրիշ բան է: Հիմա իր լակու-  
ները գարձեր են մէյմէկ «ծիրաննեծին», «ժառանգական»,  
«առերբ»: (Հրելով) Հը, գո՞ւն, իշո՞ւ սուրբ

ԱՐԽՈՆԻ ԴՈՒԿԱՍ. — Եղա՛յր, խօսէ՛ առանց հայ-  
հոյելու:

ԱՐԽՈՆԻ ԴՈՌՆԻԿ. — Կարելի՞ է քեզի հաս առանց  
հայոյելու եւ վիրջապէս հաբցնոտ ըլլա՞ քու ինչո՞ւդ է  
պէտք այդ բոլոր սուրբ ու նուրբ օրէնոգիառթիւնը:

Հողերդ ետ ստանալ կ'ուզե՞ս, թէ ոչ եւ զէ՞ւ կ'ըլլա, որ  
աղադ նորէն ռաք գնէ պալատը:

ԱՐԻՈՒԴԻ ԴՐՈՒԿԱՄ.— (Խնդալով) ինչո՞ւ պիտի զէ՞ւ  
ըլլա՝ շատ ալ աղէկ կ'ըլլա:

ԱՐԻՈՒԴԻ ԹՈՌԵՒԿԻ. — Քանի որ զեռ այդչափ խելք  
ունիս խելապատակիդ մէջ, դէ՛, զո՞ց պահէ թերանդ ու  
(Ներս մտնողները մատնանիշը ընելով) բա՛ց պահէ աչքերդ:

2

Մրանեն կ'երւան չորս նոգի, որ խօսելով առաջ  
կու գան Խօսան Անդո՛յ Հաւսենի գաւառի Տէր՝ բարի  
ու վիրաւի մարդ մք Կոմս Սկլերոս՝ հասուն տարիի,  
խելացի դէմով, Գնդապես Վանրամ՝ տու երիտա-  
սարդ՝ Չորրորդը՝ Օհան Գուրգեն:

ԿՈՄՄ ՍԿԼԵՐՈՍ.— ...Ճամբար չիտար ոչ-ոքի, ամեն  
տեղ ինքը... ո՞ր մէկը ըսեմ Դժգոն են ամենքը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Ամենքը Ո՞վ է այդ ամենքը:  
ԿՈՄՄ ՍԿԼԵՐՈՍ.— Միթէ չ՞ս զգար բանակին  
մէջի խոռվ տրտունջը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Սարուկներու տրտունջը, զի-  
տեմ: Բաւական է իր գահին բարձունքին պոտա անզամ  
մը, որ բոլորն ալ մտնեն իրենց ծակերը:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐՈԿ. — Իրաւ է հրամանատարը! Այլովէ սէ:  
ԳՆԴԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ. — Ա՛, ո՛չ ամենքը, իշխան  
Անդոկ, ո՛չ ամենքը:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐՈԿ. — Այդովէս որ չըլլար, հիմա պատ-  
կերը ուրիշ կ'ըլլար:

ԱՐԻՈՒԴԻ ԹՈՌԵՒԿԻ. — Ամեն բանակ կ'արժէ իր  
կայսրը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Եւ ամեն կայսր կ'արժէ իր  
բանակը:

ԱՐԻՈՒԴԻ ԴՐՈՒԿԱՄ.— Հրամանատար, իզուր կը մե-  
ղադրես: Կամաց-կամաց: Դուն ալ ձիդ շատ շուտ թամբող  
մարդ եմ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Իսկ ժամանակը, կը կարծե՞ս,  
որ սպասէ քեզի ու քու ձիուդ: Պէտք է օրսալ պատեհ  
ժամը: Զի՞ս տեսներ, ինչպէս խարիսխած, ինչպէս քայ-  
քայւած են ներքուստ մեր շուրջի արաք իշխանութիւն-  
ները և ինչպէս թեմափ. է Մահմետի ոգեսրութիւնը  
Պէտք է խորտակել արագ, հուժիու զարկով մը այդ փառած  
չէնքերը և քչել մահմետականութիւնը գէպի իր անա-  
պատը, ուրկէ ան գուրս է եկեր:

ԱՐԻՈՒԴԻ ԴՐՈՒԿԱՄ.— Հա՛, եթէ կարողանայինք...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Եւ միայն ա՞սու Հապա բուլ-  
կաբները, ուսւաները և բոլոր միւս ջարբարուները. ասոնց  
բոլորի մազէն պէտք է բանել ու քաղաքակրթութեան  
տակ պէտք է քաշել Պէտք է վերցնել մէջտեղէն միւս  
մանր-մուճը անկախութիւնները մեր պետութեան ահ-  
մաններուն վրայէն ու ահմաններուն հուեէն: Եւ այդ  
բոլորի աւելակներուն վրա կատուցանել նո՞ր չէնք մը,  
նոր ու ամուր միաձոյլ պետութիւն մը կովկասի ձիւնե-  
րէն մինչեւ հարաւի ծովը, պարսիկ ու արաբիկ անա-  
պատներէն մինչեւ սկիւթ տափերը:

ԳԵՂԱՊԵՏ ՎԱՀՐԱՄ. — (Յափէտակւած) Տա՛ր մեզի,  
հրամանատար, տա՛ր մեզի: Մենք քեզի հետ ենք, քու  
հուեէդ: բոլոր զնդերդ քու սուերիդ պէս քու հուեէդ:  
տա՛ր մեզի:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔԻ. — Պետութիւն մը, որուն կեդրո-  
նը, սիրան ու զլուխը ըլլա մեր ա՛յս երկիրը, մեր այս  
սիրուն ու հարուստ Անասուլին: Պետութիւն մը, որուն  
ստեղծուը ըլլանք մենք, բարձրացնողը ըլլանք մենք.  
մեր պետութիւնը մե՛ծ և նոր անասուլիկ պետութիւն  
մը, նո՞ր Անասոսլի մը:

ԳՆԴԱԳԵՏ ՎԱՀՐԱՄ.— Ե՞ր, նո՞ր Սահատովի մը:  
ԱՐԻՈՒՆԴ ԹՈՌՆԻԿ.— (Գուրգենին, կատակելով) Իսկ  
կա՞յսրը, հարցուցե՞ր ես իր կարծիքը:

ԳՆԴԱԳԵՏ ՎԱՀՐԱՄ.— Կա՞յսրը: Թող ջարդե՞նք իր  
հաւատարիմ գնդերուն քիթը. անկէ եաքը կը հարցւնենք  
իր կարծիքը:

ԱՐԻՈՒՆԴ ԹՈՌՆԻԿ.— (Խնդալով) Ա՛ շուն, քու պոչդ  
ալ կախիր է, հա՞, այդ կապադովկացի արջը:

ԿՈՄՄ ՍԿԼԵՐՈՍ.— Լսէ՛, Գաւրզէ՛ն. այս պետութեան  
բաղդը արդէն մի՛շտ է եղեր մեր ձեռքը. ի՞նչի՞ կը նմա-  
նէր Բիւզանդիան առանց Անատոլիի. ի՞նչ հող, ի՞նչ ուժ,  
ի՞նչ բանակ: Մե՞նք ենք տէրը, մե՞րը պիտի ըլլա իշխա-  
նութիւնը. դուն ալ մեր կայարը:

ԳՆԴԱԳԵՏ ՎԱՀՐԱՄ.— (Հրեանենով) Ա՛խ, երբ պի-  
տի բարձրացընենք քեզի վահանի վրա, ամբողջ բանակին  
դիմացը: Կեցցէ՛ մեր կայարը:

ԱՐԻՈՒՆԴ ԹՈՌՆԻԿ.— Կամաց, ա' տղաւ Այդ անսակ  
բաները կ'ընեն, չ'ն պուար:

ԱՐԻՈՒՆԴ ԴՈՒԿԱՄ.— Ա՛յ, այդ մէկը իրաւ է. լու-  
լո՛վ, լուլով:

ԻՇԽԱՆ. ԱՆԴՈԿ.— Մեր ըանակները արդէն քու  
ձեռքդ են: Անունիդ հմայքը մեծ է և միւս գնդերուն  
մէջ պէտք է միայն քիչ մը աւելի շահագործել առա-  
ջիկա արշաւանքը: Մնացածը քու զիանալիք բանդ է:  
Հրամանը կուտաս, երբ որ յարմար կը գտնեմ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— (Կարծես հեզնոս) Շնորհակա՛  
ևմ. լոեցի:

ԳՆԴԱԳԵՏ ՎԱՀՐԱՄ.— Բայց դուն կարծես վստան  
չես և մեղի՛: Կ'ուզէ՛ս երգում ուտենք քու մերկ սուրիդ  
վրան:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Երգումն ի՞նչ բան է, աղա՛:  
Մարդիկը իրար կապովը յափշտակութիւնն է, եթէ մար-

դիկ սիրու ունին:  
ԱՐԻՈՒՆԴ ԹՈՌՆԻԿ.— Այդպէ՛ս է, հրամանատամը:  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Մարդիկը իրար կապովը հաշիւն  
է, եթէ մարդիկ լսելը ունին:  
ԱՐԻՈՒՆԴ ԴՈՒԿԱՄ.— Այդպէ՛ս է, հրամանատամը:  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Ես զիանմ, որ զուք կուզա՛ք  
ինձի հետ, եթէ կա մէջս այն բոցը որ կը վառէ, եթէ կա  
մէջս այն ուժը, որ կը վարէ: Ես զիանմ, որ մենք կապ-  
ւած ենք իրարու: Ելէ՛ք և ամեն մարդ իր դունդը  
ԿՈՄՄ ՍԿԼԵՐՈՍ.— Ուրիմն կը հանդըպինք Հալէպի  
տակ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Աստուծմո՛վ:  
ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ.— (Սլլերովին) Ես հրամանատարի  
համ Եփրատէն, գուն Տաւրուէն, կայսրը Ամանոսէն:  
ԱՐԻՈՒՆԴ ԹՈՌՆԻԿ.— (Գուրգենին) Իսկ հոս դեռ կը  
միա՞ս:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Խօսելիք ունիմ իշխանին հետ:  
ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ.— Հրամանատարը այսօր իմ հիւրս է:

3

Կը մնա Օհան Գուրգեն, որ կ'երբեւելի սենեակին  
մէջ մտածիոս: Շուտով կը վերպանեա եւ ան տերը:  
ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ.— Գիտե՞ս, Գուրզէ՛ն, քու զծածը  
սքանչելի ծրագիր է:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Իմ նոր Անատոլիօս: Հաւնեցա՞ր:  
ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ.— Գլուխ բեր, զլուխ բեր, Գուր-  
զէ՛ն, ստեղծէ՛ այդ մեծ ու հզօր պետութիւնը, այդ նոր  
Հռոմը ու դուն կը գտնեա անման:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Անմա՞ն:  
ԻՇԽԱՆ ԱՆԴՈԿ.— Այո՛: Պարեր ու դարեր, որքան  
ատեն որ այս աշխարհքը կա, որքան ատեն որ պատ-

մութիւնը կա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Իրա՞ւ, Անդո՞կ, քեզի այդպէս  
կը հետաքրքրի՞ն այդ գարերը, այդ պատմութիւնը, այդ  
հեռաւոր աշխարհը:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Քեզի ո՞չ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Ինձի համար վաղը չկա: Վաղը  
իմ չէ:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Այո՛, նեղ մոքով Բայց դահը,  
փառքը, զործը, ատիկա կա ու կը մնա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Ո՞վ ըստ քեզի ամեն փառք  
ու ամեն զործ ստեղծւած է միայն օրւան մը համար: Եւ  
վերջապէս ինչի ինչ մնացիր թէ ոչ:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Բայց... այն ատեն ալ ո՞ւր կը  
ձգուի: Ինչո՞ւ այդ նոր պիտութիւնը, որ ստեղծել կ'ու-  
զես, որուն վրա ամբողջ բաղդդ ու ամբողջ կեանքդ  
կրնաս վատանգեր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Գուցէ և ճիշդ ատոր համար:  
Գրաւիչ են միայն ա՛յն խաղերը, որուն վրա մարդ իր  
կեանքն ու մահը կը դնէ:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Ուրեմն միայն խաղի՞ն համար:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Հապա ի՞նչ կ'ուզէիր: Ըսէ՛,  
խողիս, ի՞նչ հրապայր, ի՞նչ իմաստ կը մնա կեանքին  
մէջ, եթէ հանես մէջտեղէն այդ խաղը, եթէ հանես կեան-  
քին մէջէն կեանքին, բաղդին ու աշխարհին հետ խա-  
ղալը: Ըսէ՛, աեսնիմ, ապրած-տեսած մարդ ես գուն, ի՞նչ  
կը մնա տակը:

4

Դուներուն մէջ կ'երեւա իշխան Անդոկի աղջիկը  
Հանես, խանի ուրեց, նուրբ կազմով, յատի դիմագծե-  
րով, մեծ ու խուռ աշեր, առաս հուսք մը բիկունին:

— 52 —

Հագած է թեւուոր սովա, որուն ծալերը կը ծածկեն  
ոսերը:

Հրամանաւար կը կտէ խօսէր, կելնէ ոսի ու կը  
մնա անօւրժ, մինչ աղջիկը աշերը անու դէմ-  
քին յառած հանգիս կը մօտեն ու կը կենա դէմք:

ՀԱՆԱՄ.— (Զախ ձեռքը կրծին, աշը վեր բարձր-  
ցնելով) Գալգ բարի, զօրակա՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— (Բարեւի նոյն զիրենի) Բարին  
արեդ, օրիո՛րդ: (Վայրէեան մը լուս ու յամա կը նա-  
յին իւսա): Ինչքա՞ն փախեր ես այս մէկ տարւան մէջ:  
Կա՛զմդ, գէմքդ, արտայայտութիւնդ:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Մեծցե՞ր է, չէ: Ահա՛, հրամա-  
նաւար, ինչ որ կը մնա կեանքին տակը, երբ բոլոր փո-  
թորիկները կ'անցնին: Ինչի՞ն նման պիտի ըլլար իմ ծի-  
րութիւնս, եթէ ուրախութեան այս շողը տած ըլլար  
ինձի Աստած, իր մօրը թողած այս միտկ արև յիշա-  
տակը, երիտասարդութեանս այս վաս ու ոսկի յուշիկը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Կը տեսնեմ:

ԻՇԽԱՆ ԱՆԴՐԻԿ.— Հա՛, քեզի պիտի զգուշացընեմ՝  
աղջիկս նշանաւոր տարատեկ է: ամբողջ ձմեռը իմ ու  
քու կոփեներէդ է պատմել տեհր ինձի: Իմ նոգիս  
հանեց, հիմա կարգը քուկինդ: (Աղջկանի) Ահա հրամա-  
նաւարս կը յանձնեմ քեզի, հարցո՛ւր ինչքա՞ն կ'ուզիս  
(Դուրգէնին) Զեմ ուշանար, հրամանաւար: (Դուրս):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Ա՛, կրնա՞ս և ուշանար, երբ հոս  
այսպէս ընկեր տեիր ինձին:

5

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Ըսէ՛: կ'ուզէի լսեմ առաջին  
խօսքդ:

ՀԱՆԱՄ.— Ուրա՛խ եմ, որ նորէն եկար:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.— Ուրախ եմ և ես, որ նորէն կը

— 53 —

տեսնեմ քեզի, քու այդ խրոխո ու ազնիւ կերպարանքդ, իմ այս հայրենի լեռներուս նման, քու բիւրեղ ու անըիծ հոգիդ, մեր այս սարերու ձիւներուն նման:

ՀԱՆՆԱ. — Ոչ, զօրավա՛ր, մի հեզներ ինծի: Դուն պէտք չէ, որ ծաղրես ինծի:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Ծաղրեմ:

ՀԱՆՆԱ. — Ես զիտեմ: Դուն ապրած ես լայն ու թափով տեսած, վայլած ու տիրած ես կհանքը. քու ուստքերուդ տակն են ամենէն գեղեցիկները, ամենէն բարձր գիրք ունեցողները. քեզի կ'երազեն ամենէն շքեղ, ամենէն հմայիչ հոգիները:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Զգէ՛. մի՛ յիշեցըներ ինծի վարի աշխարհը, հո՞ն, այն ցածի կեանքը: Ես հիմա իմ ձիւնոտ լեռներուս զիրկն եմ, իմ պատանեկութեանս թարմ ու մաքուր ուրարտին մէջ, ուր ես հիւսեր եմ երբեմն ամենէն միամիտ, ամենէն աղւոր ու ամենէն աւելի վեր խոյացող իմ երազներա:

ՀԱՆՆԱ. — (Ձերձ) Հո՞ս... այս լեռներուն վրա...

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Այո՛, իմ այս անըիծ, վես լեռներուս, որոնց թափիծը այնքան աւելի յամառ կ'ընկերանա միշտ ինծի, որքան աւելի ցած իջնեմ, որքան աւելի հեռուն: Եւ զիտե՞ս, մեր անցած տարւան հանդիպումէն իվեր, երբ մեղմ կարօւ մը կը քաշէ ինծի դէպի մեր սարերուն ճերմակ բարձուն չները, այդ կարօւը քու ազնիւ կերպարանքիդ հետ զուգորդ կը ներկայանա աշքերուտ ջմեռը յաճախ յիշե՛ր եմ ես քեզի:

ՀԱՆՆԱ. — (Դլուխը կախելով) Գիտեմ:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Գիտե՞ս...

ՀԱՆՆԱ. — Եւ ատոր համար է, որ վատահ էի վերստին զալուդ:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Ուրեմն կ'ըսպասէիր:

ՀԱՆՆԱ. — Ամբո՛ղջ տարին: Իսկ երբ իմացա, որ

բանակներդ այս կողմէն պիտի անցնին Եփրատը՝ կ'ըսպասէի ամեն օր: Եւ, այց, եկա՞ր: Կը տեսնի՞ս, որ այնքան ալ միամիտ չեմ, ինչպէս որ կը կարծես, և քու հոգիիդ մուտքը բոլորովին զոց չէ ինծի:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — (Ալլինբարը մը լուռ եւ յանկարծ ջերմ շետով): Եկա՞ր, եկուր նատէ՛: Եւ պատմէ՛ ինծի: Ինչ որ կ'ապրիս հաս, ինչ որ կ'ընես, ինչ որ կը մտածես այս սարերուն մէջ:

ՀԱՆՆԱ. — Ո՛չ, մի՛ հարցըներ:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Անպատճէր է քեզին:

ՀԱՆՆԱ. — Բնգհակառակը. միայն ատ է, որ սիրասպուալ կ'ուզէ, քանի եկեր ես, բայց կը վախնամ, որ բեռ գնեմ խղճիդ վրա:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Բհ՞ո, ի՞մ խղճիս: Դի՛ր, գի՞ր այդ բնուը, մի՛ վախնար:

ՀԱՆՆԱ. — (Դլուխը կախելով) Ո՛չ, չվլար...

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — Խօսէ՛, օրիո՛րդ: Իսկ կ'ուզե՞մ, որ ըսիս:

ՀԱՆՆԱ. — Կ'ուզե՞մ՝ զիտցի՛ր: (Կ'ելնի ոտքի) Ես... ես... ամբողջ ժամանակը մտածեր եմ միայն քեզի. ապրեր եմ քու ըստած բառերովդ, քու փառքովդ, քու հպարտութեամբդ: Ես ապրեր եմ քեզմով: Իմ ամբողջ հոգիս կ'ապրի միայն քեզմով:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — (Դնեն ալ կ'ելնի ոտքի ու մածելով): Դուն գետ չե՞ս ճանչնար կեանքը: Ամբողջ հոգին կարելի չէ տալ ուրիշն: Եւ կեանքի մէջ, զիտցի՛ր, ո՛չ մէկը չարժեր քու այդ նւէրին:

ՀԱՆՆԱ. — Այս ատեն կեանքը ի՞նչ կ'արժէ ի՞նքը առանց այդ նւէրին:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻՔՆ. — (Ենօտ ու լուռ դիտելն ենքը) Իսկ ինծմէ՞՞: ի՞նչ կ'ըսպասես հիմա ինծմէ՞:

ՀԱՆՆԱ. — Ոչի՞նչ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Սակայն ըստը՝ կ'ըսպասէիր իմ  
գալուս:

ՀԱՅԱՍՏ. — Թու աեւք, ձա՛յնդ, խօ՛սք. զուցէ շատ  
կը գանհս և ատիկա: Ա՛ռ, ատ ալ հ'տ առ, եթէ հարկ  
կ'ըղգատ Ահա՛ դուռը, ուրկէ ներս մտա ես. կ'ուզի՞ս  
քաշիմ ու ալ չտանես երես, բնաւ, վահա անունաւ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Ժայռուն) Ո՛չ մնացի՞ր ու մի՛  
սպանար:

ՀԱՅԱՍՏ. — Սպառնա՞մ, քեզի՞:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Թո՛ղ Բսէ՛ ինծի՞ ո՞ր ժամանաւ  
կէն է, որ ես կ'ապրիմ քու հոգիիդ մէջ:

ՀԱՅԱՍՏ. — Այն վայրկեանէն, երբ աչքերա տեսան  
քեզի:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ե՞րբ էր առ. լաւ չեմ յիշեր:

ՀԱՅԱՍՏ. — Դուն չե՞ս գիտեր. թանակները կը գտու-  
նային վերջին կիլիկեան արշաւէն ու կայսրը իր յաղ-  
թական մուտքը կ'ընէր Կեսարիա ես հիւր էի հոն: Ան-  
ցաւ կայսրը անազին բազմութեան, բոլորի փառաբանու-  
թեան ու սաղմոսերգութեան մէջէն: Հազիւ էր անցեր,  
շուրջս կանանց մէջ փախուք մը ինկաւ. քու անունդ  
կ'անցնէր շրջունքէ շրթունք: Հետաքրքիր աչքերս դար-  
ձուցի ու իսկոյն տեսա քեզի: (Մանր ու երազուն) Ճեր-  
մակ ու հապարտ ձիուդ վրա... յոզնած ժայիս մը շրթուն-  
քիբ... և ինծի այնպէս թւեցաւ, թէ դուն կը խղճայիր  
այդ եռացող բազմութիւնը, որ իրարու վրա կը մազլցէր  
իր կայսրը տեսնելու. ինծի այնպէս թւեցաւ, թէ դուն  
կը խղճայիր նաև կայսրը, որ ոսկենու լայն ու երկար  
հագուստներուն տակ կորած՝ կեցեր էր անշարժ ոսկի  
կառքին վրա իր փառաբանութեանը ունկընդիր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Օրիո՞րդ...

ՀԱՅԱՍՏ. — Բոլոր ձեռքերը յանկարծ բարձրացան  
գէպի քեզի, թնդաց անունդ հապարտուր բերաներէ,

կին ու աղջիկ իրենց ձեռքի, իրենց կրծքի ծաղիկները կը  
նեսէին ձիուդ ոտքերուն տակը. ժայիս ու սէր կ'անձրե-  
ւէր վրադ, երբ թեթև բարեավ մը անցար մեր առջեէն: Այս  
կ'անպէ՛ս մոլոր էր նայւածքդ ու այնպէ՛ս տխուր: Այդ  
աղմկող բազմութեան ծովուն վրա հետո՛ւ, հետո՛ւ էր քու  
հազիդ, տխո՛ւր ու մինա՛կ. մի՛ս-մինակ: (Կը լոե):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կեցեր եմ դէմդ, կը լահմ քեզի,  
կը նայիմ քեզի ու չեմ հաւտար ո՛չ ականջիս, ո՛չ աչքե-  
րուս: Ո՞վ ես գուն, զարմանալի՛ աղջիկ. և ո՞ւրկէ յայտ-  
նըւեցար ինծիի:

ՀԱՅԱՍՏ. — Բսէ՛ ինծի, զօրավա՛ր, ինչո՞ւ էիր այն  
օրը այնպէս տխուր ու մինակ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Մինա՞կ. ի՞նչ ըսել է մինակ.  
ո՞վ չէ մինակ. մարդս ե՞րբ չէ մինակ:

ՀԱՅԱՍՏ. — Այդպէ՞ս իսկ տխո՞ւր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Մածելով) Ուրախութիւն ու-  
նի կուր երթա՛լը, ուրախութիւն ունի կուր տա՛լը, ես  
չեմ սիրեր կուէ դառնա՛լը:

ՀԱՅԱՍՏ. — Բայց այնպէս փառքո՞վ ու յաղթակա՞ն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Յաղթանակը ակընթա՛րթ մըն է,  
խակոյն կը ցնդի ու կ'իյնա աչքէդ հմայքին կապը: իսկ  
բաց աչքերը կը տեսնեն միայն մեր խեղճութիւնը: կը  
տեսնեն՝ թէ ինչքա՞ն ողո՞րմելի ու չնչին բան է եղեր,  
որուն համար գուն կուեր ես, կը տեսնեն՝ թէ ինչքա՞ն  
գունիկ ու թշւառ բան է եղեր հէնց ինքը կուրը, որ գուն  
կուեր ես:

ՀԱՅԱՍՏ. — (Մեծ կարեկցութեալի) Զօրավա՛ր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Չեմ կրնար մառնալը Պետքար  
լեռան զագաթը:

ՀԱՅԱՍՏ. — Պետքար լիուան քու փառաւոր կուր,  
զիսո՞մ. կ'երգեն բերնէ բերան:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ցից ու վիթիւարի ապառաժ մըն

Է այդ լեռը մենք կը մազլցէինք ու կը կուէին շահագար ու արիւնալի զրոհ մըն էր և արաբները կը պաշտպանւէին արփեծի պէտ վճռեր էի, որ առնեմ պիտի լեռը մինչև արեւի մայր մտնելը եւ իրաւ ձիշդ այն վայրկեանին, երբ արեւ կը քաւէր դիմացի սարերուն ևս կեցած էի այդ անառիկ ապառաժին գազաթը Շուրջս կ'ոռնար զօրքը յաղթանակի արբեցումէն, հեռուներէն կը պատասխանէր ուրախ արձագանզը վայրի կանչերով ու ամենքը հիացումով կը չնորհաւորէին իմ այդ անօրինակ ու յանդուզն յաղթութիւնն... ես կեցած էի ժայռին գազաթը, ժայռ մըն ալ իմ մէջս ու ոտքերուս տակ այն անթիւ թարմ ու խիզախ քաշերը, թէ՛ իմ, թէ՛ թշնամի, որոնց դիակները փումբ, զորդ էին հիւսեր ամբողջ սարին վերելքը... Ու կը խորհէի՛ ի՞նչը, ի՞նչը կրնար փոխարինէր այդչափ առոյզ, այդչափ կարմիր կեանքերը... Յանկարծ տեսա, որ շատ վայրագ, շատ խայտառակ, շատ ցած բան էր իմ այդ ամբողջ յաղթանակս եւ ի՞նչ պէտք կար, ինչո՞ւ համար, ինչո՞ւ համար...

ՀԱՆՆԱ. — (Կամաց կը տանի ձեռքը դէմիին, կ'ըսկսի լալ):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Տիտուր ժպիտով) կու լա՞ս Անպէտք է և առ ինչո՞ւ կու լաս:

ՀԱՆՆԱ. — Զգիտե՛մ: Այդ ինկածնե՛րը... և գուն... և եսս...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Մեղք է, մի՛ թափեր անգին աղամանդներդ քու այդ խոշոր ծով աչքերէդ: Եւ իզո՞ւր: Պետքարէն ետքը ևս ինչքա՞ն-ինչքա՞ն կոխներ ևմ վարեր նորէն, ինչքա՞ն արշաւ, աւեր ու յափշտակութիւնն Ոչ թէ լալ, խնդալ է պէտք այդ ամենուն վրա, և՛ ինկածներուն, և՛ ապրողներուն: Ժապէ՛: և նայածքիդ մէջ այդ շաղին ետևէն սիրուդ ոսկի արեւ թող նորէն շողա-ժպտէ՛: Այդպէ՛ս, իմ լեռներուս չքնաղ ողի՞ն, այդպէ՛ս:

6

Ներսէն կ'երեւա իշխան Անդովի:  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Նայէ՛, Անդո՞ւ, սարատեկ աղ-ջիկդ կու լա:

ԻՇԽԱՆ ԱՆԴՈՎ. — Կու լա՞ս:  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կու լա, որ մարդիկ կը մորթեն իրար ու կը խլեն իրար ձեռքէ իրարու ինչքը, հողն ու առիքը, ձակախն քրտինքը, բաղդն ու կնիկը... Լաւ չէ՛: Հասկըցո՞ւր իրեն որ մարդիկ կթէ ատիկա չընեն, ուրի ի՞նչ կը մնա իրենց ընկլու:

ԻՇԽԱՆ ԱՆԴՈՎ. — Զգէ՛ հանգիստ: Շատ դժւար մօ-տենալու բան է աղջկան սիրուը, աղջկան լացը: Երթանք, սիրելի՞ս: եկո՞ւր ու պատէ՛ իմ աղն ու հացը:



## Բ ՏԵՍԱՐԱՆ

ԲԱՆԱԿ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՎՐԱՆԻՆ ՏԱԿ.

Պատերը եւ նետքնետէ դեպի կենդրոնը բերեով ա-ռասալը դեղին մետախ է: Գետինը բաւ գորգեր: Ճա-կար եպենոսէ զանը բարձր բիկունիվ, Գահին մօտիկ կար եպենոսէ զանը բարձր բիկունիվ, Գահին մօտիկ կար ու բարակ ոսերու վրա ոսկի խնկաման մը, որ կը մնա: Մուտքեր աջէն ու ձախէն:

1

Լայն բաց են մուտքերուն փետեր եւ վրանը լեցուն ահազին սպառազէն բազմութեամբ: Բոլորը բարձ-րասինան զօրականներ են՝ կեցած ուշադիր:

— 59 —

**ԿԱՅՍԵՐԸ.** — Այս առաջին անգամը չէ անշուշտ, որ մենք հրաժեշտ կու տանք իրարու Սիրիա տանող այս ճամբաներուն վրա, մեր յաղթական արշաւներէն ետքը: Բայց ո՞չ-մէկ անգամ գուցէ մենք իրաւունք չենք ունեցեր այսպէս հպարտ ըլլալու ու այսպէս գոհ ինչպէս այս անգամ: Ահա՝ խորտակւած է թշնամին, իր երկիրը աւեր ու աւար, իր բոլոր հարստութիւնը մեր ջորիներու մէջ-քին: Մնաց միայն խղճուկ միջնաբերդ մը այն գոսող Հալէպէն, որը խնայեցի, որովհետեւ յանձն առաւ հարկ տալու ու ճանչնալու տիրութիւնս կը մնա Անտիոքը դեռ՝ ապաւինած իր ամրակուռ պարիսպներուն: Ես պահմ պիտի անիկա ամբողջ ձմեռը պաշարւած ու սովալը-լուկ: Ու զալ տարի կու գանք ան ալ վերցընելու: Այս ապաւան համար այսչափը բաւ է: Դէ՛, յաջող ճամբա բոլորիս, բաղդաւոր դարձ մեր տները և հանգիստ ձմեռ Բերէք բաժակը:

Կը մտնէ շատ բարմ մանկլաւիկ մը՝ փոքրիկ ոսկի ափսէի մը մեջ երկու ոսկի բաժակ բռնած եւ կ'երա կը կենա կայսեր պատւանդանին ոսքը:

**ԾԵՐՈՒՆԻ ԶՕՐԱՎԱՐ ՄԸ.** — (Առաջ գալով) Տէ՛ր, թոյլ կու տա՞ս, որ անարժան շրթունքներովս համարձակիմ մեր այս անջատման բաժակը քու պայծառ արեւիդ շատութեանը խմելու:

**ԿԱՅՍԵՐԸ.** — Իյօսէ՛, սիրելի Բարդա՛ս, կը խնդրեմ բարի մաղթանքդ:

**ԾԵՐՈՒՆԻ ԶՕՐԱՎԱՐԸ.** — (Բաժակը վերցընելով) Ո՛վ գուն առաքելանմանդ, աննւազ ըլլա մեր վրայէն քու առաքինի անունդ տարիներու հոլովումին մէջ, որովհետեւ անսահման է քու երախտիքդ մեր այս ամենաքրիստոնեա կայսրութեան վրա: Տէ՛ր, երկար կեանք քեզ և առողջութիւն:

**ԲՈԼՈՐԸ.** — (Ազ ձեռքերնին վեր բարձրացընելով)

Երկար կեանք քեզի ու առողջութիւն:

ԵՐԻՑԱՍՍՐԴ ԶՕՐԱՎԱՐ ՄԸ. — (Յանկարծ ու ոգեւորւած) Քաջեց պատեանէն Նիկեֆոր կայսրը իր անյալթ սուրբ, արև ծագեցաւ մեր սուրբ պետութեան ու քրիստոնեա աշխարհին: Գուն դալուկ մահն ես սարակինոսներուն, ո՞վ անմահդ Նիկեֆոր: Գուն անմահ ես, Նիկեֆոր:

**ԲՈԼՈՐԸ.** — Գուն անմահ ես, Նիկեֆոր:

**ԾԵՐՈՒՆԻ ԶՕՐԱՎԱՐԸ.** — Շիջաւ Հալէպի աստղը, շիջաւ արաբներու աստղը:

ԵՐԻՑԱՍՍՐԴ ԶՕՐԱՎԱՐԸ. — Քանի կը փայլի Նիկեֆոր Ֆոկասի բազգաւոր աստղը Փա՛ռք քեզի, աստեածայինդ բազիւս:

**ԲՈԼՈՐԸ.** — Փա՛ռք քեզի, աստեածայինդ բազիւս:

**ԿԱՅՍԵՐԸ.** — Փառք և ձեզի, իմ քաջերս: Ամենքդ ալ աշխատեցաք: Հնորհակալ եմ բոլորէդ ու չեմ մոռնար՝ ինչ որ իմ պարտքս է ձեր հանդէպ: Բանակը կրնա ցրւիր Աստած ձեզի հետ:

**ԲՈԼՈՐԸ.** — Աստած քեզի հետ: (Արագ կը բաւեին դուրս):

## 2

Կը գոցին մուտքերուն փետերը, վրանը կիսովին կը մինե: Ներսը կը մնա Մեծ լոկորեդը ձախի դռան մօս:

**ԿԱՅՍԵՐԸ.** — (Յանկարծ կ'իջնէ գանձն ու բայլ մը լինելով դեպի լոկորեդը) Մա՛լր կը թւի ինծի, ծա՛լր, այն բոլորը ինչ որ կ'ըսեն, այն բոլորը ինչ որ կ'ըսէք: ծա՛լր, կը հասկընա՞ս, ծա՛լր...

**ՄԵԾ ԼՈԿՈՐԵԴԸ.** — Ինչպէ՞ս, տէ՛ր:

**ԿԱՅՍԵՐԸ.** — Չեր արտասահմած բառերուն տակէն ուրեւ բառեր կը լսեմ ես: Իմ անունիս գովքը կը կարդա ինծի ձեր բոլորիդ լեզուն, բայց ձեր բոլորիդ լեզուն:

տակը ուրիշ անուն կը կարդամ ես

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ.— Ուրիշ անուն

ԿԱՅՍՐԸ.— Մի՛ ստեր, Ա՛յ, իր անունը շրթունքներուդ վրա. ա՛յ, իր կերպարանքը աչքերուդ մէջը, կը նայի ինծի աչքերուդ մէջէն. կրնա՞ս ուրանար:

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ.— Թո՛ղ, տէ՛ր, թող որ լեզուս աշղատ խօսի առջևդ ինչ որ ծանրացած է հոգիիս վրա. իւրաւ է. շատ բարձրացաւ իր դիրքն ալ, իր հոչակն ալ բանակներուդ մէջ, բայց դուն ի՞նքդ ըրիր, տէ՛ր: Դուն երես ես տեսր անոր արդէն միշտ. իսկ այս վերջին արշաւանքը կարծես յատուկ անոր համար էր ձեռնարկւած. ինչո՞ւ յանձնեցիր անոր ամենէն աչքի ինող յարձակումները... ինչո՞ւ զրկեցիր անիկա կուի ամենէն տաք, ամենէն կարևոր տեղերը...

ԿԱՅՍՐԸ.— (Խոժոռ) Հերիք է, Զի հարցուցի՛ քեզիքու կարծիքդ:

ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ.— Ներէ՛, տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ.— Եղի՛ր նե՛րսը ու սպասէ՛ հրամանիս:

3

ԿԱՅՍՐԸ.— (Երբ կը մնա մինակ, ծանր ու մոայլ կ'երբա, ձեռքը կը դնէ գահի բազուկին ու կ կորացած, աշխերը յառած գետինը կեսի մը):

ԶԱՅՆԸ.— (Գետնին տակին) Ինչո՞ւ յանձնեցիր անոր ամենէն ծանր կունեները, Նիկեֆոր կա՛յսր:

ԿԱՅՍՐԸ.— Զա՛յնը... իր ձա՛յնը:

ԶԱՅՆԸ.— Ինչո՞ւ զրկեցիր ամենէն տաք, ամենէն արիւնոտ կուները, Նիկեֆոր կա՛յսր:

ԿԱՅՍՐԸ.— Ի՞նչ կ'ուզես կուի ատեն ո՞վ կը հարցընէ:

ԶԱՅՆԸ.— Հողէն է, որ կը խօսիմ քեզի, Նիկեֆոր

կա՛յսր. Ղրկեցի՛ր, որ մեռնի:

ԿԱՅՍՐԸ.— Սատծու ձմոքն է ամենուս կեանքը: Եթէ մեռնէր՝ Սատծու կա՛մ շը:

ԶԱՅՆԸ.— Ինչի՞ են պէտք սին խօսքիրը, Նիկեֆոր կա՛յսր. Հողէն է, որ կը խօսիմ քեզի:

ԿԱՅՍՐԸ.— Սուրբ է այն հողը, ուր գուն կը հանգչիս Հսիր, որ ձեռք չտամ իր կեանքին: Ահա՛ կ'ապրի ու սպրդիլ կ'ուզէ իմ ու բանակիս մէջտեղը, սպրդիլ կ'ուզէ իմ ու յաղթանակներուս մէջտեղը... իմ գէմս է ան, որ կողմ ալ դառնամ, ինչ ալ որ ընեմ: ամեն տեղ իր անունը իմ անունիս ետեւէն, իր քայլերը իմ քայլերուս ետեւէն, իմ չար գեխս պէս, աև ստերիս պէտ (Աւրուկ) թող ըլլա ո՞վ, թող ըլլա առո՞վ, քանի որ այդպէտ կ'ուզիս: բայց մնացած դուն չարզիլեցի՛ր ինծի... և պէտք չէ՛, որ արգիլս... (Քիչ մը ատեն լուռ և ու կ'ըսպասէ) Լուեցի Հեռացա՛ւ: Հանգոտացաւ... (Քերբա դեսի խնկամանի, կը չոփի, կը խնարինի) Ամեն տարի հօթը պատարագ քու հողիկ վրա. տաճարին մէջ միշտ վառ կանթե՛զ մը հոգիիդ լոյսին: աղօթքներուս մէջ միշտ անպակա՛ս քու սուրբ անունդ. թող հաշտ ըլլա հոգիդ...

4

Կամաց կը բարձրացնէ գլուխը, կ'ելնէ ոտքի ու կը դառնա դեսի աջ. կը մեն Օհան Գուրգէն: Երկուքն ալ կու գան բայլ մը իւրա դեմ, կը կենան լո՛ւռ ու օփասկ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Ինծի կանչեր է կայսրը:

ԿԱՅՍՐԸ.— (Չարնելով բունցքը գանի բազուկին) Հոէ՛ տեսնեմ, ո՞վ է վլրջապէս տէրը այստեղ ե՞ս թէ դո՞ւն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.— Ի՞նչն է քեզի զայրացուցերը:

ԿԱՅՍՐԸ.— Ի՞նչ խըրառում է, ի՞նչ մութ շարժում Սկլերոսի գնդերուն մէջ:

— 63 —

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Առ ո՞վ ըստւ քեզին

ԿԱՅՍՐԸ. — Դուն պատասխան տուր ինծի, ո՞չ թէ  
հարցում:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ո՞չ մէկ խլըրտում և ո՞չ մէկ  
շարժում: Գիտե՛ս, որ Սկլերոսը շատ ունի թշնամին:

ԿԱՅՍՐԸ. — Եւ բարեկամ, ինչպէս կ'երեա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Այո՛, կա՛յր, որոնցիէ մէկը ես  
եմ և միւսը, շատ կ'ուզէի, որ ըլլայիր դուն: Բայց որ  
տարտամ ու դժգո՛ տրամադրութիւն մը կա պահներու  
մէկ մասին մէջ, ատիկա ճի՛շդ է, և ո՞չ միայն Սկլերոսի  
գնդերուն:

ԿԱՅՍՐԸ. — Մի՞թէ... Քիչ մը ուշացած չի՞ս գոներ  
սակայն քու յայտնութիւնդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ընդհակառակը, քիչ մը կանուխ,  
որովհետև պարզիւն է հիմա ասոր մասին խօսիլը: Կը  
խօսինք վերջը, երբ բանակները ցրւած կ'ըլլան ու կրնանք  
խորհիր աւելի պատ ու անկիրք, պատգայի՛ համար:

ԿԱՅՍՐԸ. — (Խիս) Թող պարապ խօսքերը ու պա-  
տասխանէ՛: Ի՞նչ տրամադրութիւն է ատիկա:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Դժգո՞ն են, որ կը վերադառնանք  
առանց Հալէպը լրիւ տիրելու, առանց Անտիոքը նւաճե-  
լու, այսպէս ամեն ինչ անկայուն ու թերի:

ԿԱՅՍՐԸ. — Անկայո՞ւն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Մեր տղա հասակէն միշտ նոյնն  
ենք տեսեր: ամեն ամառ կա՛մ արաբները մեր սահմանէն  
ներս, կամ մենք անոնց սահմանէն: Քանի մը զերի, պա-  
տառ մը հող, քիչիկ մը աւար ու ձմեռան հետ ամեն  
մարդ իր տունը: Ի՞նչ զարմանք, որ շատերը արդէն  
կուշտ են կութ այս ձեէն:

ԿԱՅՍՐԸ. — Պատառ մը հո՞ղ ամբո՞ջ կիւիկիան, ամ-  
բո՞ջ հիւախային Սիրիան, ամբո՞ջ կրտէն, որ ես խլեր  
եմ արաբներուն ճանկէն, պատառ մը հո՞ղ ու իմ այս-

քան տարիներու աշխատանքս «Քանի մը զերի», «Կտար  
մը աւար»:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Եթէ համեմատենք զալիքին հետ:  
Զէ՞ որ այդ բոլորը պատրաստական քայլերն են միայն  
այն մեծ զորձին, որը ըլլալու է խոկոպէ՛ս մեծ ու հիմ-  
նական և որուն ծայրը կը հասնի մինչև Բաղդատ, մինչև  
Բասրա, մինչև Մոըր:

ԿԱՅՍՐԸ. — Բազդա՞տ... Մոըր...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Ինչո՞ւ ոչ Մեծ կայսրէ մը մի՞ծ  
պահանջ: Եւ ատիկս կ'ըզգան բանակիդ ընտիրները, Կ'ըզ-  
գան ու ծարաւ են այդ լայն ու խիզախ շարժումին, Կ'ըզ-  
գան ու գարձեր են անհամբեր: առա՞ բոլորը:

ԿԱՅՍՐԸ. — (Կըսախի խնդալ բարձր ու բռնազբանիկ):

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կայսրը կը ինդա՞:

ԿԱՅՍՐԸ. — (Յանկարծ կը կտրէ ծիծաղը) Միթէ խըն-  
դացի՞ չեմ յիշեր: Ո՞չ, չեմ խնդար, այլ կը ցաւիմ, շատ  
կը ցաւիմ, որ... որ այսպէս պղտիկ կայսր մըն եմ ես,  
հասարա՞կ ու միջակ: պղտիկ կա՛յր մը, պղտիկ ծրա-  
զիրներ, պղտիկ արշաւներ... Մինչդեռ անո՞նք, այդ իմ  
բանակիս ամենէն ընտիրները, այդ իմ բանակիս  
ամենէն ավանդ մեծամիտները...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կայսրը իզուր կը բարկանա-  
խակ բարկութիւնը անիրաւ է միշտ: Անո՞նք հին, փորձ-  
ած մարդիկ են վաստակաւոր:

ԿԱՅՍՐԸ. — Գիտե՛մ: այդ ծառին վրա է, որ կը բու-  
նի քու ու անոնց բոլոր յանդզնութիւնը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Կա՛յր...

ԿԱՅՍՐԸ. — Ի հարկէ՞ չէ՞ որ չեմ համարձակիր, այս  
օրինա՞կ, քեզի պէս նշանաւոր գօրավարի մը ձեռք դպջը-  
նելու: Զէ՞ որ բանակներուդ սիրեկին ես դուն, Սկլերոս-  
ներու նեցուկը և այդ բոլոր գաւածան խլըրտումներու  
հոգին:

ՕՀԱՆ ԳՈՒՐԴԻԵՆ. — Կա՛յսր...

ԿԱՅՅԱՐԸ. — Ա՛չ, ո՛չ, սիալ է սակայն հաշիւդ: Ես կը կարեմ այդ ծառը, կը կարեմ արմատէն: Լա՛ւ լոէ: Դուն նշանաւոր զօրավար մըն ևս, այս՝ որովհետեւ ե՞ս իմ կեցած քու կոնակդ. գուն տաղանգաւոր կազմակերպող մըն ես, այս՝, որովհետեւ իմ հրամաններս կը կատարիս: գուն յաղթեր ես ու կը յաղթես կուի դաշտին վրա, այս՝, որովհետեւ իմ մասս կը զեկավարէ քու շարժումներդ: Այս մէկը աղէ՛կ հասկըցիր: գուն միծ ես ու անւանի, որովհետեւ այդպէս ևմ կամեցիր ե՞ս: կը կամենա՛մ ու դուն կը դաւնաս ոչի՞նչ մը: կը հասկընա՞ս, ոչի՞նչ մը: ոչի՞նչ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԴԻԵՆ. — (Բիշ մը ետքը) Շնորհակա՛լ եմ: Իսկ ի՞նչ է հիմա քու միտքդ:

ԿԱՅՅԱՐԸ. — Իսկ ի՞նչ է հիմա քո՛ւ միտքդ, քո՛ւ: կը կարծես չե՞մ տեսներ, հա՞, կը կարծես չե՞մ հասկընար, թէ ուր կը ծուխ գուն նաւիդ զեկը: (Մատեանիւ ընելով գանձ) Ահա՛, հրամէ՛, ելի՛ր, ու զնա տիրէ՛ Սիրիան ու Բասրան, զնա՛ տիրէ աշխարհքը, ամբո՞ղջ աշխարհքը... Ահա՛ կը թողնեմ քեզի քու գահիդ հետ առանձին առանձին քու մեծ-միծ խռներուդ հետ, քու հակա՛ ծրագիրներուդ... (Խոպիս ծիծաղով կ'ել են ձափեն դուրս):

5

Օհան Գուրգէն կ'եցած է վայրկեան մը խոժոս ու լարւած. յանկարծ բափի կու տա ինքը ինքը ու արագ կը դիմէ դեպի ազի մուտքը: կը բացւին մուտքին փետքը եւ Օհանի դեմք կ'ել են պատրիկ Ապամեաս, տանեան: մը թիկնապահներ ետեւեն, որոնք կը օսրւին մուտքին առջեւը:

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ. — (Զինւորական բարեւով) Ներէ՛: Կայսեր կամքն է: սուրդ յանձնես պիտի ինծի:

ՕՀԱՆ ԳՈՒՐԴԻԵՆ. — Ընդ այդպէս ուրիշն է կարծեաւ:

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ. — Իզո՞ւր է, զօրավա՛ր: Յանւած են մուտքերը, պաշարւած է վրանը, հակողութիւն տակ են բոլոր արեւելան ու հայկական զնդերդ: Կեանքիդ ձեռք տւող չկա: մեր կայսրը ողորմած է ու անյիշաչար նզի՛ր խմասուն և գուն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԴԻԵՆ. — (Ար բաւ պատեանեն սուրը ու կը նետէ պատրիկի ոտերուն տակ):

ՊԱՏՐԻԿ ԱՊԱՄԲԱՍ. — Այս՛, խելացին ատելիս է: Կեանքը կեա՞նք է միշտ (Յուրը զետեն վեցընելով) եւ վերջապէս անարժան ձեռքի մը չէ, որ կը յանձնես քու սուրդ: Եթէ գուն տարիներով կը հաշւես աղնւականութիւնդ, ես կը հաշւեմ դարերով:

6

ՄԵԾ ԼՈԿՈԹԻԴԻԸ. — (Կը մտնէ ձափեն սասփիլ խաւ անցած) Այս ի՞նչ սարսափելի դէպք, այս ի՞նչ անակընկալ պատահար և ի՞նչ գժբաղդութիւն: Ա՛, ո՛չ, ո՛չ անապատճառ որևէ թիւրիմացութիւն մը կա մէջը: ես կը պարզեմ, կո՞մո: բարեկամութիւնս վրա կ'երգնում քեզի, կ'ուղղենք, կը հարթենք: Բայց առայժմ պէտք է քաշւաք կալաւածներդ: Իհարկէ՛, բոլորովին ազատ ես քու կալաւածներուդ սահմանին մէջ: Լախտի հարւած մըն էր ասիկա, որ ինկաւ մեր ամենուս զիսուն, կարկուտի առարափ, մը անսամպ իրկընքին: Եթէ գիտնայիր, ինչպէս եղոցւած է հոգիս, ինչպէս...

ՕՀԱՆ ԳՈՒՐԴԻԵՆ. — Այդ ճարտասանութիւնը գուցէ կարելի էր և զեղծել այս անգամ, իշխա՞ն:

ՄԵԾ ԼՈԿՈԹԻԴԻԸ. — (Սառն) Յայս ունիմ չի՛ մերժեր կոմը մէկ-երկու ժամ հիւրու ըլլալու վրանիս տակ: Մինչեւ պիտի կարգագրուի հարկ եղածը իրեն վայելուշ ուղերութեան մը համար:

— 67 —

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— Կը ցաւիմ, իշխան, որ մհրժե-  
լու հնարաւորութիւնը այլ ևս խլւած է ինձմէ:  
ՄԵԾ ԼՈԿՈԹԵԴԻԸ.— Խոնարհ ծառա՛դ:  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ.— Կը հեռէի՛մ:

## ԵՐՐՈՐԴ ԱՐՎԱՐ

### Ա. ՏԵՍԱՐԱՆ

ՊԱՐԱՏԸ. ԾՈՒԱՀԱՅԵԱՑ ՊԱՏՃԱՄ

Տեսարանի առջեւի մասը առատակ ունի եւ բանի  
մը սիւներով կը բանելի ետեւի մասն, որ բաց է բոլո-  
րդին եւ խորք կը եզերի տամաւոր ցած որմով:  
Յատակը, առատապը, սիւները, որմը՝ բոլորը մարմա-  
րեղ կողմը բարէ նատան մը, վրան գորգ, ու մօքը բա-  
րակ ու բարձր ոսերով եռոտանի մը երազ դնելու հա-  
մար: Հեռուն կ'երեւա ծովը: Իրիւան լոյսի ու մուրի  
կոփեն է:

1

Վասիլ Լեկապէն եւ ուրիշ ներքինի պալատական  
մը կեցած են կից իրաւու ու կը խօսին զգուշ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ.— Մըս Ամեն բան չեն ըսկը, ա-  
մենուն չեն ըսկը, մանաւանդ ժամանակին առաջ:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ.— Դուն արգէն մի՛շտ իրաւունք  
ունիւ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ.— Անոնք ի՞նչ կը հասկընան քու-  
րածիդ խորովթիւնը:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ.— Բայց մենք կը հասկընանք,  
մենք, որ ներքինի ենք:

— 69 —

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Իսկ անոնք ներքինի չե՞ն. գեռ  
չե՞ն հասած այդ բարձրութեանը, այդ խեկախն բարձր  
մարդուն. Անոնք գեռ մարդ չե՞ն, այլ արու ևն միայն:  
Դեռ չե՞ն ըմբռնած, որ մարդ ըլլալու համար՝ նախ պէտք  
է զադրին արու ըլլալէ: Անոնք իրենց ուժերուն լուա-  
գոյն մասը կ'ըսպառն սերնդելու վրա. մնացածն ալ կը  
վատնեն իրենց սերունդին վրա: Էզին սորուկն են անոնք  
ու իրենց զաւակներուն ճօրտը: Անոնք անպէտք են ափ-  
րելու համար, անպէտք են աշխարհը զարձնելու համար:  
Տիրելք մե՛րն է, մե՛ր կոչումը, մե՛ր իրաւոնքը, ներ-  
քինիներու իրաւոնքը: Մե՛նք պիտի վարենք, պալատը  
մե՛րը պիտի ըլլա և բոլոր պաշտօնները մե՛ր ձեռքը:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — Բոլոր, բոլոր պաշտօնները:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Գահը իրենց, կարմիր կօշիկ-  
ներն ալ իրենց, բայց զահակալը պէտք է ըլլա բռունց-  
քիս մէջ և կայսրութեան բոլոր թեկերը: Հիմա կը հաս-  
կընա՞ս՝ ինչո՞ւ կ'ատեմ հս այդ մարդը: Ուրիշ երկու  
կայսեր օրով հս նորէն հոս եմ եղած, ու եղած եմ իսկա-  
կան տէրը այս մէկը շա՞տ է պինդ:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — Իսկ Ապամբա՞սը. կարելի չէ  
վրան յի՞նիլ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Քամւած արու մը. զիփիւսները  
որ իշն իրենց հասը կը տանին:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — Ուրեմն պէտք է ուրիշ անուն մը:  
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Համբերութիւն: Ժամանակը յզի  
է Վերին խաւերը դժորն, ժողովուրդը կը մոլոս, հար-  
կերը կ'աւելնան, աչքի իշնող մարդեկը կը ստապալն,  
բանակներուն մէջ խլըրառմ, պալատին անկիւնները  
փափուք... Ես կը ճանճնամ այդ հիւանդութիւնը. կը  
փերջանա կարմիր կօշիկներու ստափոխումով: (Խորհրդա-  
ւոր) Կա՞ն աշխատացներ գուն հանգիստ եղիր:

ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — Ուրեմն պատրաստ ըլլանք նոր

փնտայի գալուստին:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Եւ լապտերիդ իւզը լի:  
ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — իմաստան կոյսերուն նման:  
ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Եւ լո՛ւս:  
ՄԻՒԾ ՆԵՐՔԻՆԻՆ. — Ի նքը, ի՞նքը... (Արագ դուրս):

2

Քիչ մը եսք կ'երեւա կայսր խորքը, աչեն: Ման  
խալերով կ'առաջանա՞ ձեռքը որմին ու հայեացք ծո-  
վուն: Դանդաղ կը դառնա ետին ու կը նկատէ Վասիլը:

ԿԱՅՍԵՐԸ. — (Մօտենալով) Ի՞նչ կ'ընեմ հոս:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Կը մտածէիր, չուզեցի խանգարեմ:  
ԿԱՅՍԵՐԸ. — Եւ զիտե՞ս ինչ կը մտածէիր: Զարժա՞նք  
է: Ինձի այնպէս կը թւի որ վերջին անգամ Պօլսէն մեկ-  
նելէս իվեր՝ կարծես պալատը մնացեր է, մնացեր ու պար-  
պըւեր: Աւելի գատա՞րկ, աւելի լայն, աւելի լուս, թէն  
զիտեմ, որ մարզիկը նո՞յն են, ինչպէս և կիանքն ու  
երթեւեկը Ուրկէ՞ կու գա ինձի այս ատրօրինակ զգացումը:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Ինչքան գուն կը բարձրանաս,  
աէ՛ր, ու ինչքան հոգիիդ մեծութիւնը կ'աճի, այնքան  
չուրջգ եղաղ մարգիկը կը գառնան մանր ու փոքրիկ, և  
այլ ևս չի՞ն լցըներ պալատներուդ ընդարձակութիւնը:

ԿԱՅՍԵՐԸ. — Եթէ ըսածդ չիտակ ըլլար՝ իմ սրաններս  
նեղ պիտի զային իմ մեծութեանս, ո՛չ թէ լայն ջէ,  
վասիլ՝ պալատականի քու փորձեած հաճոյախօսութիւնդ  
այս անգամ ծակ ունի իր վրան:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Բաած խօսքս գուցէ ծակ ունէր  
իր վրան, աէ՛ր, բայց քեզի ուրախ տեսնելու ցանկու-  
թիւնս ծակ չունի իր վրան:

ԿԱՅՍԵՐԸ. — Զէ, ատոր ալ չիմ հաւտար:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Տէ՛ր, ինչո՞վ եզա արժանիք:

ԿԱՅՍՐԸ.— ՄԵ՛ հաւտար ո՛չ-մէկուն: Քեզի կ'ըսեմ՝  
մի՛ հաւտար ո՛չ-մէկուն:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Մանր խաչ է, Տէր մի՛ առներ  
ուսիդ:

ԿԱՅՍՐԸ.— (Օպղով) Հապա՞ս, կ'ուզես, որ հաւտառմ  
և որո՞ւ օրինակ, քեզի՞ս...

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— (Խիս վիրաւորւած) Տէ՛ր...

ԿԱՅՍՐԸ.— Լա՛ւ Կ'ուզեն փորձենք: Արդէն կ'ուզէի  
խօսիմ քեզի հետ:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Հրամայէ՛, տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ.— Եկո՛ւր, մօ՛տ եկուր, աւելի՛, աւելի՛.  
այդպէս եւ հիմա պատմէ՛ ինչ որ գիտես... բոլո՛րը ինչ  
որ գիտես:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Ինչի մասին, տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ.— Օհան Գուրզէնի... և քու կայրուահիդ:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— (Խարսխած) Կայրուահին...

ԿԱՅՍՐԸ.— Այդ ի՞նչ շատ զարմացար: Գո՞ւն, որ  
զարմանալու սովոր չես բնաւ: Գէշ նշան է, վասի՛ր

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Բայց կայրուահին... Ո՞վ է ըսեր  
քեզի ատիկա, ո՞վ է լոեր, ո՞վ է տևսեր:

ԿԱՅՍՐԸ.— Ե՛ս, ի՞նքս:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Դո՞ւն: Դուն տեսն՞ը հա...

ԿԱՅՍՐԸ.— Ա՛յս, տևսո՛: Երբ թողի ինքը առանձին  
գափիս ստքը ու հեռացա, երբ ան գեռ կեցած էր իմ գա-  
փիս ստքը, խորակւած ու ամբարտաւան: Տեսա, կարծես  
իրականին մէջ, բոլոր մանրամասներով պարզ, յաստակ  
ու զգւելի եթէ շիտակը կ'ուզես՝ ևս գեռ կանուխէն, շա՛տ  
կանուխէն գիտէի ատիկա, կ'ըզգայի հոգիիս խորերէն,  
զիտէի որ օր մը զալու էր ատիկա, այդ երկուքի մեղա-  
ւոր կազը, կ'ըզգայի ու կ'ըսպասէի:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— (Խասիկ ցաւած) Ի՞նչ կը խօսի  
իմ կայրը:

ԿԱՅՍՐԸ.— Այնքա՞ն աշխատեր եմ, որ խեղին,  
արմատախիլ ընե՞ այդ անպիտան զգացումը բայց, կը  
տիսնե՞ս, որ իրաւունք ունէին:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Տէ՛ր, ևս ամեն բան կ'ըսպասեն  
այդ յանդուզն միծամիտ մարգէն: բայց ինձի կը թւի,  
որ անիրաւ ևս թագուհիս հանդէպ:

ԿԱՅՍՐԸ.— Իսկ եթէ քեզի ըսեմ, որ այդ մարգը ե-  
ղած է կանանցաւ:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Ատիկա՞ ալ գուն ևս տեսեր,  
ի՞նքդ: Ու հոգիիդ մէջ:

ԿԱՅՍՐԸ.— Ո՛չ տեսեր են ուրիշները:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Ուրիշնե՞րը...

ԿԱՅՍՐԸ.— Այսինքն տեսնելը ճիշդ խօսքը չէ: Երբ  
արշաւն վերադարձիս սկսա քրքրիւ, գուրս եկաւ, որ կան  
կամկածներ, հատքեր... Դէ՛, խօսէ՛: Խօսքը հիմա քաւկդ է:

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Ի՞նչ ըսեմ, տէ՛ր: Կի՞ ըսածդ  
ինքնին անօթ մըն է խարդաւանքի ու երկպատկութեան:  
Բայց որու մասին, որ կը խօսիս այս պետութեան տի-  
րունին է և քու կեանքիդ ընկերունին: Ես իր մասին գէշ  
մտածել չեմ կրնար:

ԿԱՅՍՐԸ.— Ա՛յս, գո՞ւն, ողնի, մտար արդէն փշոտ  
պատեսանիդ տակը: ալ քեզի բոնել ինարկէ չըլլար: Եւ  
կ'ըսէիր որ օգնել կ'ուզիս ինձի...

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Տէ՛ր, ի՞նչո՞ւ կը մեղադրես ինձի:  
Միթէ ի՞նքդ կը հաւտաս քու ըսածիդ, կրնա՞ս հաւտար:

ԿԱՅՍՐԸ.— (Խարւած) Ո՛չ, չեմ կրնար: ու չեմ ու-  
զեր, չեմ ուզեր: կը խորտակի բազզս, հպարտութիւնս,  
յաջողանքս: ինչպէ՞ս հաւտամ: Բայց ի՞նչո՞ւ, ի՞նչո՞ւ հա-  
մար մէջս այդ գարշելի միտքը: ի՞նչո՞ւ, ի՞նչո՞ւ կու զան  
միշտ այդ երկուքը միասին: ա՛, այդ կոկոզալիդ կնա-  
մուլ, կնոջս հետ, իմ կնոջս հետ...

ՎԱՍԻԼ ԼԵԿՈՂԵՆ.— Տէ՛ր, կը տեսնեմ՝ գուն աքսո-

բեր ևս հետու իր մարմինը, պահեր ևս մօտք իր հոգին  
ԿԱՅՍՐԸ.— (Մոայլ կը կախէ զլուխը):

ՎՈՍԻԼ ԼԵԿԱՊԷՒՆ.— Արժանի չէ այդ պատւին Մի՛  
հաւար, արհամարէ՛, աքսորէ՛ մէջէդ և իր հոգին:

ԿԱՅՍՐԸ.— Գուցէ և իրաւ ես Ա՛, ես չպահեցի իմ  
ուխտա: Որոշեր էի, որ ալ չըլլա՞մ կնոջ հետ Արդար  
պատիժն է: Ես չպահեցի իմ ուխտա:

3

Կեցած են լուռ իրարու դեմ, երբ խորհն կ'երեւա  
քագունին ու վեհափառ կ'առաջանա դեպի զոյզը:  
Վասիլ կը խոնարին:

ԹէօֆԱՆՕ.— (Կենալով սիւներուն մէջ) Գուցէ խան-  
գարեցի: Կը խօսէիք:

ԿԱՅՍՐԸ.— Ո՛չ եկո՛ւր: Ուրախ եմ, որ եկար:

ԹէօֆԱՆՕ.— Դէմքէդ չերևար: Ինչո՞ւ ես այդպէս  
գժկամ: Ի՞նչ կը խօսէիք:

ԿԱՅՍՐԸ.— Հարցո՛ւր վասիլին:

ԹէօֆԱՆՕ.— (Հարցական կը դառնա անոր):

ՎՈՍԻԼ ԼԵԿԱՊԷՒՆ.— Կասկածի վայրկանները, կայս-  
րութի, յասուկ է բոլոր մհծ հոգիներուն:

ԹէօֆԱՆՕ.— Կասկածի: Ինչի՞ կասկած:

ՎՈՍԻԼ ԼԵԿԱՊԷՒՆ.— Բնը... ընդհանրապէս: Իր մե-  
ծութեան, իր կոչումին, յաջողանքին ու բաղդին:

ԹէօֆԱՆՕ.— (Անուսնուն) Դուն կասկած ունիս և  
քու բաղդէ՞ւ:

ԿԱՅՍՐԸ.— Կարելի չէ:

ԹէօֆԱՆՕ.— Զէ՞ որ ե՛ս եմ քու բաղդէ: Դուն ի՞նքդ  
ինձի այդպէս ես ըսեր:

ԿԱՅՍՐԸ.— Ըսի՞ եմ: այս:

ԹէօֆԱՆՕ.— Ուրին ալ ի՞նչ երկմոռում, երբ ես հո՛ս

եմ, քու քո՛վդ, քեզի հե՛տ, քու կի՞նդ:  
ԿԱՅՍՐԸ.— (Յաւած) Զէ՞, թէօփա՞նօ, գուն հո՛ս ես,  
իմ քո՛վս, ինձի հե՛տ, իմ կի՞նս...  
ԹէօֆԱՆՕ.— (Վասիլին) Զդէ՛ մեղի առանձին:

4

ԹէօֆԱՆՕ.— (Կը մօտենա ամուսնուն) Ի՞նչ ունիս  
Նիկեփո՛ր: Երեկի մանր անյաջող լուրեր, ամեն բան սրախ  
չեն առներ: Նայէ՛ աչքերուս խորքը, նայէ՛ քու բաղդիդ  
աչքերուն խորքը ու եղի՛ր վատահ: յաջողութիւնը քեզի  
հետ է միշտ: Շուտով կ'երթաս ազատելու սուրբ գերեզ-  
մանը:

ԿԱՅՍՐԸ.— (Բոնելով անոր քեւեն ու զերդ) Այս՛,  
թէօփանօ, պիսի աղատեմ Փրկչի գերեզմանը: Իրա՛ւ ես,  
բաղդն ու յաջողութիւնը ինձի հետ է միշտ: Այս աչքերը  
ինձի խարել չե՞ն կրնար, այս խօսւածքը ինձի խարել  
չե՞ կրնար: Եկո՛ւր, եկո՛ւր նստինք: (Մերբան նստարանը):  
Ի՞նչ լաւ է, որ եկար, թէօփա՞նօ, ինչքա՞ն ուրախ եմ, որ  
եկար:

ԹէօֆԱՆՕ.— Սեւլի աղէկ: Հիմա աւելի գիւրին է  
ինձի նպատակիս հանիլը: Դուն որ այդպէս ուրախ ես,  
եկո՛ւր ուրախացնենք և ուրիշները:

ԿԱՅՍՐԸ.— (Զւար) Ի՞նչ է ուզածդ:

ԹէօֆԱՆՕ.— Գիտե՞ս, Նիկեփո՛ր, ես հիմա քեզի  
խնդիրքով եմ եկեր:

ԿԱՅՍՐԸ.— (Բարեհան) Խօսէ՛:

ԹէօֆԱՆՕ.— Բայց չի՞ պիտի մերժես:

ԿԱՅՍՐԸ.— Ես քեզի ե՛րբ եմ մերժեր: Խօսէ՛...

ԹէօֆԱՆՕ.— Ե՛տ կանչէ աքսորէն օհան Գուրզէնը:

ԿԱՅՍՐԸ.— (Խայթածի պէս) Ի՞նչ... ո՞վ... ո՞վ...

ԹէօֆԱՆՕ.— Դուն խոստացար, որ չե՞ս մերժելու:

— 75 —

**ԿԱՅՍՐԸ.** — Դուն կը ինդրես ինծմէ, որ հա... որ հա-  
Յանլարձ կը նետի գեղի սիւները՝ պոռալով) է յ., ո՞վ  
կա հոտ, ո՞վ կա հոտ:

**Թէօֆիլսնօ.** — Ի՞նչ կ'ուզես. ինչո՞ւ կը կանչես:

**ԿԱՅՍՐԸ.** — (Ներ մենով սենեկապեսին) Լո՛յս, լո՛յս  
կ'ուզես, լո՛յս (Կնոջը) լո՛յ. կ'ուզեմ տեսնեմ քու գէմքդ,  
քու այդ Տիրամօր սիրուն գէմքդ. իսկ հոս արդէն մութ  
է գրեթէ, մութ, կը հասկընա՞ս: Զէ՞ որ մութը ինձի ու  
քեզի համար չէ ստեղծւած. մութը յանցանքի համար է  
ստեղծւած, մեղքի ու դաւի... (Կ'ըշապէ իրկին ներ և  
կող սենեկապետին դէմք, կը խլէ ձեռքին եւստել աւ-  
տանիկ, ինքը կը դնէ եւստանիին վրա ու կը նայի իր  
նախորդ տեղը) Ա՛յ, այսպէս: Դէ՛, հիմա խօսէ: Խօսէ՛,  
տեսնեմ, ի՞նչ կ'ըսես:

**Թէօֆիլսնօ.** — Ի՞նչո՞ւ ես այդպէս տարօրինակ: (Կա-  
տակով) Բայց միւնոյն է. գիտցի՛ր, մինչև որ քու հա-  
մաձայնութիւնդ չառնեմ, ես հոսկէ հեռացողը չեմ: Հէնց  
այդպէս ալ խստացե՛ր եմ աղջկանը:

**ԿԱՅՍՐԸ.** — Զգիտեմ՝ հ՞ս եմ յիմարացեր, թէ՞ դուն  
այսօր սաստիկ յիմար կը խօսիս:

**Թէօֆիլսնօ.** — Օրիորդներուս մէջ, գիտե՞ս, չէ՞ կա-  
զիան:

**ԿԱՅՍՐԸ.** — Ո՞վ ի՞նչ կազիան  
**Թէօֆիլսնօ.** — Բարդասի քոյրը:  
**ԿԱՅՍՐԸ.** — Է՛, ես չը՞:  
**Թէօֆիլսնօ.** — Ետքը արդէն ըսի: Դուն պատմեր ես  
քու զօրավարդ, քու գործդ է: բայց դուն իրաւունք չու-  
նիս իմ օրիորդս ալ պատմելու: Զգիմանար խեղճը. իրա՛ւ  
կ'ըսեմ: կը մեռնի:

**ԿԱՅՍՐԸ.** — Պա՛րզ խօսէ, կի՞ն.  
**Թէօֆիլսնօ.** — Ասկէ պարզը ի՞նչպէ՞ս կ'ըլաւ: կը սիրէ՛:  
Ես այր չեմ, կը ների՛ս, միայն քաղաքականութեամբ

կշտանալ չեմ կրնար. չեմ կրնար տեսներ խեղճ աղջկան  
յուսանատ վիշտը թէն ինծմէ կը թւի, որ հոտ քաղաքա-  
կանութիւնն ալ կը չահին Հրամանատարութիւնը, որ ա-  
սեր ես Գուրգէնին ձեռքէն, շխոա՛կը ես ալ շատ խելացի  
կը գոնեմ: բայց միթէ աւելի աղէկ չէր ըլլար, միէ ի-  
րեն հո՛ս որեէ տակը պարապ պաշտօն մը տայիր: Ան-  
վտանելի մարդը հոս աւելի զիւրին է հոկիլը, քան հո՞ն  
իր կալւածներւն վրա, կայսրութեան միս ծայրը Եւ  
վերջապէս ես կազիան կը հանչնամ: ան շատ շուտով  
ձեռքը կ'առնէ իր մարդուն սանձերը և քու ըմբոսա Գուր-  
գէնդ, պիտի տեսնես, որ կը ինչոքնա:

**ԿԱՅՍՐԸ.** — (Մածկոս) Բարդասի քո՞յրը... կ'ըսես:  
Եւ անսնք եղած են իրար հետ կանանցիս մէջ: հո՞:

**Թէօֆիլսնօ.** — Չեմ կարծեր: կազիան լու գիտէ պա-  
լատիս խիստ կարգերը: Սակայն ինչո՞ւ հարցուցիր:

**ԿԱՅՍՐԸ.** — Որովհետեւ... որովհետեւ տափկա կը պար-  
զէ խնդիրը: Որովհետեւ... Բարդասի քոյրը... զուցէ՛, կա-  
րելի՛ է... Ուրիմն Բարդասի քոյրը:

**Թէօֆիլսնօ.** — Զէ՞, մեղք է: չէ՞ գժբաղդ աղջիկը  
ըսէ քառ մը, երջանկացո՞ւր: (Ատի ելենելով) Ուրիմն յայտ-  
նեմ իրեն, որ նշանածը շուտով գտննա պիտի:

**ԿԱՅՍՐԸ.** — (Յանկարձ կը փախի, կը դառնա դա-  
յան ու պինդ բոնելով կնոջը բեւեն) Կեցի՛ր, կեցի՛ր:  
շատ կ'ըշտապիս: կեցի՛ր: իսկ միէ՞ այս բոլորը կոպիս  
թակարդ մըն է միայն... ծաղիկներով ու աւոյտով ծած-  
կւած, էշիր բռնելու համար:

**Թէօֆիլսնօ.** — ի՞նչ:  
**ԿԱՅՍՐԸ.** — (Հետզինեկ գրգռելով) Այդպէ՞ս ուրիմն...  
կը խնդիրս, որ ետ կանչեմ Գուրգէնը... երջանկացընեմ:  
եկեր ես հոս յատուկ խնդրելու... եկեր ես, որ երջանկա-  
ցընեմ... (Վայրի ու հիւանդ ծիծաղով մը կնոջ բեւը կը  
նետ: անդին):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Ի՞նչ եղաւ քեզին ինչո՞ւ համար է այդ տպել ծիծառ:

**ԿՈՅՑԱՐԸ.** — Իհա՛րկէ, ե՛ս տգել, ծիծա՛ղս տգել, ամե՞ն ինչո տգելու գեղեցիկ ևս միայն գուն ու քու լրբութիւնդ: Յանդուգն է, կի՞ն, խաղած խաղդ ու հրեշային. արդէն լկտութիւնը յանդուգն է միշտ: Ինչո՞ւ այդպէս սպուշտապուշտ երեսս կը նայիս: Զէիր սպասեր, հա՞, այս ելքին կարծեցի՞ր, որ կանչեմ պիտի աղջկելը, հարցընիմ: ան ալ պիտի խաղա իր վարպետէն սարված գերը, իշնա սարերս, լս ու պաղատի: ևս ալ մեղքնամ ու զիջեմ: Դուն կարծեցիր, որ այս անգամ ալ կը յիմարացընես ինծի քու անուշ երգերովդ, ա՛, գո՞ւն, Սիրենաս կը յիմարացընես, կանչել կու տաս սիրեկանդ աքսորէն, գիշերները ծածուկ կ'առնես կանանցա ու միասին կը նստիք ու կը խնդաք վրաս: Զէ՞ այդպէս չէ՞ խոստովանէ:

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — (Անոր խօսելու միջոցին նետքնեսէ կ'ուղդի ամբողջ հասակովը ու մարմարէ սիւնին առշեր կ'արձանանա ժիպ-ժիտակ, հապար ու հանգիս):

**ԿՈՅՑԱՐԸ.** — Ի՞նչ ևս պապանձեր. չխօսի՞ս: Ինչո՞ւ ես քար կարեր այդ քարին տակը: Հօէ՛, խօէ՛, եթէ գեռ հարս ունիս խօսելու, եթէ գեռ կրնաս քեզի պաշտապաներ, եթէ այդ անամօթ շրթունքիդ արդարանքի խօսք մը ունիս...

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — (Առանց ոչինչ բսելու կամաց մը կը գատի սիւնեն ու նոյն հապար, ժիտակ դիրքովը կը դիմէ դեպի դուրս):

**ԿՈՅՑԱՐԸ.** — Ո՞ւր, ո՞ւր, ո՞չ: Կեցիր: (Ա՛ռուզէ բռնէ):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — (Սարսափելի բարկութեամբ) Քաշէ՛ ձեռքդ ես: Ճի գովիս ինծի: Ուղրմելի՛... (Եւ դէպի դուրս):

**ԿՈՅՑԱՐԸ.** — Կեցիր: մի՛ երթար՝ կ'ըսեմ քեզին

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Դեռ չսպառեցի՞ր լուտամքդ:

**ԿՈՅՑԱՐԸ.** — Կեցիր: (Կոտրած) Նախ լոէ՛... (Վ' ընդիասէ):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — (Ար մնա անօւած, կիսովին ես դարձած):  
**ԿՈՅՑԱՐԸ.** — Քեզի ծանր վիրաւորեցի: ճի՛չդ է: զուցէ... իզուր: Բայց ե՞ս հապա ե՞ս: Այս ամբողջ երեք ամիս է, որ ամուր խրւեր է հոգիս այդ սարսափելի բանը: առաջ հունդ մըն էր, հիմա մեծացաւ, ուռնացաւ ու լիցուց հոգիս ուր կ'երթամ ինծի հետ է, ինչ կ'ընեմ ինծի հետ է: կերաւ հոգիս այդ վերքը:

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — (Խուլ) Երե՞ք ամիս...

**ԿՈՅՑԱՐԸ.** — (Լուռ է):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Երեք ամիս գուն կասկածով կը նայի՞ս վրաս, երեք ամիս կը պապտիս բոլոր խօսքերս, կը հետեւիս ամեն շարժումիտ:

**ԿՈՅՑԱՐԸ.** — (Լուռ է):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Կը տեսնեմ, որ ստիլած իմ մնալու, ու ինչքան ալ ծանր ըլլա ինծի, խօսելու:

**ԿՈՅՑԱՐԸ.** — Խօսէ՛:

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Գուրզէնը պէ՛տք է որ գա:

**ԿՈՅՑԱՐԸ.** — (Աշերը լայն բացած կը մնա ապած):

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Եւ ան պիտի գա ո՛չ թէ իմ մէկ սպասուիսիս համար, այլ ինծի համար, ինծի, կը հասկընա՞ս, ինծի:

**ԿՈՅՑԱՐԸ.** — Զե՞մ հասկընար քեզին

**Թէ՛ՅՑԱՆՈ.** — Ուզեցի ինչայն պատիւդ, ուզեցի շվիրաւորմ հապարտութիւնդ: անա՞ ինչպէս գնահատեցիր: Գուրզէնը պէ՛տք է, որ գա: Եւ զիտե՞ս ինչու: Որովհետև ամենքը մէկ բերան կը կրկնեն, որ զուն կը վախնա իրմէն, որ զուն կը նախանձիս իր տաղանդին, որ զուն քեզի նւաստ կ'ըզզաս իր ներկայութեանը իսկ ատիկա տանջանք է ինծի: ատիկա կը զարնէ իմ կայսերական կոչումիս, ատիկա կը զարնէ իմ կանացի հպարտութեանս: Ես հազար հազարներուն մէջէն ընտրեցի քեզի, ձեռքս ես հազար հազարներուն մէջէն ընտրեցի քեզի, բարձրացուցի գանիս, անունդ կապեցի երկարեցի քեզի, բարձրացուցի գանիս:

իմինիս, որովհետև յաղթող էիր, քաջ էիր, միծ էիր: Ես  
այդպէս կ'ուզեմ քեզի:

ԿՈՅՍՐԸ.— Ո՞վ կընա խցկեր սինլքոր մարդոց ան-  
գուսն բերանը. ատիկա վե՛ր է և կայսեր ուժէն:

ԹէօֆԱՆՕ.— Ո՛չ վեր չէ: Արդէն միջոցը ես ըսի  
քեզի կը կանչես այդ քու Գուրգէնդ, կը դնես աշքի  
իշխող պաշտօնի մը զլուխը, բոլորովին անփոյթ ու ան-  
տարքեր, որ տեսնեն ամենքը, թէ անկէ վախցողը չես  
դուն. գուն կայսր ես, իսկ ան քու ծառադ. քէփդ ուզեց  
աքսորիցիր, քէփդ ուզեց՝ կը նսերես: Նիկեփո՛ր, ասիկա  
կը պահանջե՞մ ես քեզմէ. ասիկա պէտք է կատարես դուն  
քո՞ւ անունիդ համար, պէտք է կատարես իմ անունիս  
համար: Ես կ'ուզեմ նպարտ նայիմ ամենաւն աչքին մէջը  
և հեղնութիւն չկարդամ անոնց շրթունքին անսիւնը:  
Դուն գետ այս վայրկեանիս տաքի տակ տւիր իմ ամենէն  
սուրբ սրբութիւնս. խնդրե՞մ, խնայէ զոնէ հպարտու-  
թիւնս:

ԿՈՅՍՐԸ.— Բայց, թէօփանօ...

ԹէօֆԱՆՕ.— Մէկդի՛ բոլոր բայց-երը: Կամ այս,  
կամ ո՛չ:

ԿՈՅՍՐԸ.— Կ'ըմբոնիմ, որ պէտք է կատարւի քու  
կամքդ: (Լուռ) Գո՞ն ես:

ԹէօֆԱՆՕ.— Գո՞ն: (Խիս վճացած, հազիւ զսպե-  
լով ացունեները): Դեռ կը ծաղրե՞ս ալ: Ա՛, երջանի՛կ հմ,  
անոանմա՞ն, այս քնքուշ տեսարանէն հաքը...

ԿՈՅՍՐԸ.— (Չեռք մեկնելով) Թագուհի՛...

ԹէօֆԱՆՕ.— (Ես բաւելով) Խնդրե՞մ, խնդրե՞մ...  
(Հպարտ ու վիրաւոր սիներուն մէջէն դուրս):

5

ԿՈՅՍՐԸ.— (Խախ կեցած է պատկառոս մինչեւ կնոջ  
հեռանալը. վերջը կ'երբա դեպի աջ ու նեղսիր) Կան-

չե՛լ վասիլը: (Եւ ֆիշ մը եսքը լեկապէնին, ծամր-ծամր,  
կարծես թէլարելով) Սուրհանդակ կը հանես Օհան Գուր-  
գէնին. կը զրես իմ անունէս՝ անմիջապէս ճամբա իյնա  
դէպի Պօլիս. հոս կարեռը պաշտօն ունիմ իրեն յանձնե-  
լու: Այսափի:

ՎԱՍԻԼ. ԼԵԿԱՊԷՆ.՝ Հրամանդ, տէ՛ր:

ԿՈՅՍՐԸ.— Կեցի՛ր: (Քիշ լուռ) Լածդդ չզարմացո՞ւց  
քեզի:

ՎԱՍԻԼ. ԼԵԿԱՊԷՆ.՝ (Ժպտուն) Դժւար չէ ենթադ-  
րելը, տէ՛ր, թէ այդ տեսակ մարդը ինչ'ու կը կանչեն  
այսպէս յանկարծ:

ԿՈՅՍՐԸ.— Ինչո՞ւ կը կանչեն:

ՎԱՍԻԼ. ԼԵԿԱՊԷՆ.՝ Ազատելու իր հոգին երկրային  
ամեն հոգերէն: Եւ իրաւունք ունիս, տէ՛ր: Բաղդը իր հետն  
ունենալը լաւ բան է: Բայց և պէտք է գիտնալ բաղդը  
պինդ բոնել, և պէտք է գիտնալ իր բաղդին տիրել: (Կը  
խոնարիս ու դուրս):

ԿՈՅՍՐԸ.— (Աշեմը զոց) Պէտք է գիտնալ իր բաղ-  
դին տիրել...



## Բ. ՏԵՍԱՐԱՆ

Ա. Կ. Լ. Բ. Ե. Բ. Դ. Բ. Ա. Կ. Ը.

Խորք հաս պարխազ ու բերդի գարպար: Դար-  
պասի երկարէ վեղկերը զոց են, բաց է միայն վեղկի  
վրայի փոքրիկ դռնակը: Պարխազներուն վրայէն ձիւնա-  
պատ լեռներ: Աշ կողմը բարէ սանդուղ, խարխլած ու  
մամուապատ, որ լայն ատինաներով դեպի բնակարանը  
կը տանի: Զախ կողմը երկու հինաւուց ծառ, սակը

նիւղերէ օխնած հասարակ փասած նոտարան մը: Ամեն դի  
թափած գոյնզգոյն տերեւ ու խօփր: Ուժ առուն է, ովայ-  
ծառ արեւ օր:

1

Զորս սպա խմբւած միտսին՝ լարւած ուշագրու-  
թեամբ կը հետեւին, մինչ Հաննա աղեղը ձեռքը նօան  
բռնելու վրա է: Քիչ մը ատեն լուռ, ու յանկարծ ները  
կը բռչի: Ընդհանուր շարժում:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Հրաշնք է:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Պատահմունք:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Պատահմունք, երկու անգամ իրար  
կրա:

ԹՈՐՈՍ.— (Չորրորդ սպան, բարմ տղա մը) Հրաշալի  
է, Հաննա:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Պատահմունք է, ինչ կ'ուզէք  
ըսէք:

ՀԱՆՆԱ.— (Թորոսին) Տուր նե ա մըն ալ:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Ո՛չ պայմանը երկու էր. թող ա-  
ռաջ զա մրցով:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Եթէ մեր բոլոր գորալարներուն  
աղջիկները այսպէս նետ քաշել գիտնային՝ ալ ինչի՞ էին  
պէտք նիկեփոր կայսեր իր բանակները:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Բարեկամ, սրախօսութիւնդ գի՞ր  
կագարձը ու փոխարէնը նետ մը վերցուր, եթէ քաջ նու:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Եզրայր սիրելի, նետ է ու չդի-  
պաւ. հ'առքը յալթւինք աղջիկէ մը:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Ես ինձի կը յայտարարեմ յաղթւած:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Այո՛. մենք ալ, մենք ալ:

ՀԱՆՆԱ.— Ուրիմն կախեմ աղեղը:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Կախէ՛, օրիո՛րդ, ու յայտնէ՛ կամքդ:

ԹՈՐՈՍ.— Հրամանը քուկդ է, Հաննա:

ՀԱՆՆԱ.— Կը հրամայեմ, իսկոյն պատրաստ ըլլաւ:  
պիտի ելնենք, այս, հո՞ն... ձիւնէ գագաթները:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Ձիւնէ գագաթնո՞րը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Ատոր համար երկու թև է պէտք  
ամեն մէկուս ուսին:

ՀԱՆՆԱ.— Ինչո՞ւ: (Տարիքոտ սպան մատնանիք) Զէ՛  
որ նոր է բարձրացիր, ամբողջ խմբով:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Նախ՝ ան ուրիշ խումբ էր, օրիո՛րդ,  
լեռան վարժ մարզիկ: Երկրորդ՝ մենք հասանք միայն  
մինչև պատուածքը և շատ ալ գժւար: Ըսի, որ գագաթը  
ենողը Դուրգէնն էր միայն:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Զօրավա՞րը. և ինչո՞ւ:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Ա՛յսպէս, քմահաճո՛յք, և մեր բոլորիս  
ստիպումին հակառակ: ահա ժայռ, փուխը ձիւն, տակն  
ալ անդունդ:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Ուրիմն, օրիո՛րդ, ուրիշ հրաման մը:

ՀԱՆՆԱ.— (Հանգիս ու յաման) Հո՞ն, ձիւներն ի վիր...

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Բայց լսեցիր՝ գժւար է, վասնդաւոր:

ՀԱՆՆԱ.— Ըլլար գիւրին ու անվանդ՝ ելած կ'ըլ-  
լային ամենքը:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Իսկ հա՞յրդ. թոյլ կու տա՞:

ՀԱՆՆԱ.— Այդ հոգը թող ինծիւ:

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Աղէկ, երթա՞նք մինչև լանջի գիւ-  
ղը, ձին կը բարձրանա: Քիչ մը կը հանգստանանք ու կը  
փորձենք աւելի վիր՝ որքան հսար է:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Մինչև գիւղը կարելի է, իհարկէ, թէկ...

ՄԻՒՄ ՍՊԱՆ.— Դէ՛, ամեն մէկը իր ձիւներն հոգը:

ԵՐԿՐՈՐԴ ՍՊԱՆ.— Ուրիմն գէպի ձիւներն ու ան-  
դաւնդները:

ՏԱՐԻՔՈՏ ՍՊԱՆ.— Այդպէ՛ս է, աղա՛ս, երբ աղեղը աղջկան  
մը ձեռքը կը մնա:

Երեք սպամերը կը նեռանան. Հանճան կը մօտենա  
Թորոսին, որ կեցած է երազկոս յինած նաւաբին:

**ՀԱՆՆԱ.** — Դո՞ւն ինչ ես մոլորեր:

**ԹՈՐՈՍ.** — Հա՞նճա, ի՞նչ լաւ է հոս, ի՞նչ լաւ է ձեր  
այս բերդը. Քանի եկեր եմ արև է հոգիիս մէջ, ինչպէս  
և շուրջս, ինչպէս և երկինքը, այս ամբո՛վլ շաբաթը  
Զգիսմա ի՞նչ ձանձրալի է հո՞ն մեր ամրոցը, ձորերուն  
ու մասախուղնիրուն ծոցը. Օդը գորշ, մարդիկը գորշ,  
ապրուստը գորշ. Հոս շարժո՛ւմ կա, Հա՞նճա, թարմոթիւն  
կա հոս. Իու հա՛յրէ ալ ուրիշ է, գո՞ւն ալ ես ուրիշ:

**ՀԱՆՆԱ.** — իրա՞ւ:

**ԹՈՐՈՍ.** — Այ, քիչ մը առաջ, որ ըսկը՝ ելնենք այն  
վերի ձիւնոտ արերը, այնպէս խորունկ, այնպէս աղւոր  
բան մը կար ձայնիդ մէջը... (Յանկարծ ու խորհրդաւոր)  
Ես կու զա՞մ քեզի հետ, Հա՞նճա. Ես ու դուն կ'ելնենք  
միասին մինչև ձիւները, մինչև գագաթը...

**ՀԱՆՆԱ.** — Մինչև գագաթը՝ ո՞չ. մինչև պատուա՛ծքը:

**ԹՈՐՈՍ.** — Չե՞ս հաւատար խօսքիս:

**ՀԱՆՆԱ.** — Կը հաւատամ, բայց չեմ ուզեր Ես մի կ  
պիտի բարձրանամ գագաթը:

**ԹՈՐՈՍ.** — ի՞նչո՞ւ:

**ՀԱՆՆԱ.** — (Կատակելով) Այդպէ՞ս է ճակտիս զերը:

**ԹՈՐՈՍ.** — Ես լուրջ կը խօսիմ, Հա՞նճա:

**ՀԱՆՆԱ.** — Իգո՞ւր լուրջ խօսելուդ պէս՝ կը տիրիս.  
Կայէ՛ արդէն ունքերդ կախ ինկան. իսկ տիրիլ ան-  
քի ամենէն անմիս բանն է զուցէ:

**ԹՈՐՈՍ.** — Բայց ինքդ բնա՞ւ այդպէս ուրախը չես:

**ՀԱՆՆԱ.** — Ստոր համար ալ կ'ըսեմ քեզի՝ մի՛ ըլլար,  
լուրջ:

**ԹՈՐՈՍ.** — Հանճա, շիտա՞կ ըսէ, երբեք ո իր ա

**ՀԱՆՆԱ.** — (Եթէ նայելով անոր աչերուն) Դիցուք...  
այս՛:

**ԹՈՐՈՍ.** — Եւ ո՞վ է այդ աստւածային բաղդաւորը:  
ՀԱՆՆԱ. — Է՛, ինչի՞դ է պէտք աստւածներու գործը:

**ԹՈՐՈՍ.** — Անւանել չե՛ս ուզեր: Բայ՛ գոնէ, ո՞ւր է,  
հո՞ս, բանա՞կը:

**ՀԱՆՆԱ.** — Ո՛չ հոս, ո՛չ բանակը:

**ԹՈՐՈՍ.** — Հապա՞:

**ՀԱՆՆԱ.** — Ա՛յ, հո՞ն, վե՛րը, ձիւնոտ գագաթներն  
իվեր, ուր ես հմա երթալ կ'ուզեմ:

**ԹՈՐՈՍ.** — Է՛, գուն վրաս կը խնդաս:

**ՀԱՆՆԱ.** — Ինչո՞ւ դուն գիտես, որ ես քեզի միշտ  
սիրեր եմ գետ մանուկ օրերէն:

**ԹՈՐՈՍ.** — Ա՛յս, այն ուրիշ...

**ՀԱՆՆԱ.** — Ինչո՞ւ ուրիշ: այնպէս միշտ այնպէս:  
Դէ, գնա՛ թամբել առւր ձիւրը, ես ալ երթամ հագւիմ:  
(Զարենանով) Պիտի տեսնես, որ երեքն ալ մնալու են  
կէս-ճամբան: Կը ճանչնա՛մ երեքն ալ:

**ԹՈՐՈՍ.** — Բայց կը շարունակե՞նք ես ու դուն բանի  
որ ախոյեանս լսուան քաջք մըն է՛, ոչի՞նչ. ես քաջքերէ  
վախցողը չե՞մ, Հա՞նճա: (Աշխուժ ձախէն դուրս):

Աղջիկը կը մնա իիշ մը մինակ ու մտածիոս, վերշը  
կը դառնա որ երբա դեպի սանդուղները, երբ խորհին կը  
մնէն Օհան Գուրգէն ու ձայն կու տա:

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.** — Հա՞նճա:

**ՀԱՆՆԱ.** — (Կը բարան՝ առանց ես նայելու):

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.** — (Մօտենալով) Հանճա, չե՞ս լսեր:

**ՀԱՆՆԱ.** — (Կապւած շարժումով մը կը դառնա անոր):

**ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԿՆ.** — Անշուշա գիտէիր, որ այս կող-

մերն էի:

ՀԱՅՆԱՅ. — Լսա՛ծ եմ. եկեր ևս կալւածներդ, եղեր ես  
և մեր Հաշտենքի հողը, հոն, վերը, մեր լիոնները...

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Այս՛. և չե՛մ եկած քեզի:

ՀԱՅՆԱՅ. — (ՊԼՈՒԽԱՐ կախելով) Յանցանքը ի՞մս է:  
Ըսի քեզի բաներ, որ Կրթեք պէտք չէ ըստ ըլլային Հի-  
մա ճնշում կ'ըզգաս ինձի հանդիպելիքն:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Այնպէ՛ս որ աւելի կը զարմա-  
նաս գուցէ հիմա եկած ըլլալուս:

ՀԱՅՆԱՅ. — Այդպէ՛ս է:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Եկեր եմ հրաժեշտ առնելու: Կը  
հեռանամ այս կողմերէն և երեկ երկա՛ր ժամանակով:

ՀԱՅՆԱՅ. — Հապա աքսօրդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Անցաւ: Հիմա կ'երթամ Պօլիս:  
Եւ զիսե՞ս ինչու:

ՀԱՅՆԱՅ. — Բաէ՛:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Կ'երթամ կայսր դառնալու:

ՀԱՅՆԱՅ. — Կա՞յսր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Այս՛, բարձրանալու բիւզան-  
դական կայսրներու գահը:

ՀԱՅՆԱՅ. — Եւ ստեղծելու նո՞ր պետութիւն մը, որուն  
հոգին ըլլալու է մեր Անատոլին: Ստեղծելու միծ լինա-  
տոլի մը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — (Նախ զարմացած կը նայի):  
Ա՛խ, հա՛յր: Այս՛, Հանճա՛, այդպէս է: Կը տարակուսի՛ս:

ՀԱՅՆԱՅ. — Տարակո՞յս Դուն ունեցե՛ր ես, ինչ որ  
սիրոդ ուզեր է: Դուն հասե՛ր ես, ուր ցանկացեր է հոգիդ.  
Դուն եղե՛ր ես, ինչ որ կամքդ վճուր է:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Կայսր դառնալը, այս՛, վճուր եմ.

ՀԱՅՆԱՅ. — Եւ ո՞վ է աւելի արժանի, քան դուն, ո՞վ  
է աւելի կարող, քան դուն: Գնա՞, եղի՞ր կայսր, զնա՛-  
տիրէ՛ ու ստեղծէ՛ քու պետութիւնդ: Դուն ստեղծւած ես

տիրելու համար, գուն ստեղծւած ես ստեղծելու համար:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — (Յափէսակուրեխամբ) իսկ գո՞ւն  
իսկ գո՞ւն ինչու համար ես ստեղծւած, Հա՞նսա:

ՀԱՅՆԱՅ. — Թո՛ղ, թող ինձի: խօսէ՛ քեզմէ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Խաչպէ՞ս թողնեմ, երբ եկած եմ  
հոս ճիշդ ասոր համար: Երթալէս առաջ գուն պէտք է  
գիտնաս ամե՞ն ինչ: Ես այլ ես լմել չեմ կրնար, Հա՞նսա,  
ես այլ ես լուն չեմ ուզեր:

ՀԱՅՆԱՅ. — Ի՞նչ բան է ատ, որ չե՞ս կրնար, որ չե՞ս  
ուզեր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Հա՞նսա ես չուզեցի աւելի խոռ-  
վեմ քու հոգիդ, չուզեցի աւելի հրահրեմ քու զզացումներդ:  
Մտածեցի՝ քու մէջդ դէպի ինձի եղածը աղւոր ու քնքուշ  
երազ մըն է, ձիւնէ փափուկ ու ճերմակ կերաւածք մը,  
որ հալի պիտի ու ցնդի՛ տաք շունչ մը քեզի դիպածին  
պէս: Իսկ ինչ որ իմ մէջս սկսեր էր խլրախի՝ կարծեցի  
քու անքիծ հմայքիդ մէկ սուրբ շոյանքը, մէկմ ու վա-  
ղանցուկ: Ու չեկա, չզրեցի, որ մարի, հասնիո

ՀԱՅՆԱՅ. — Զգէ՛, զօրավա՛ր, գուն արդարանքի պէ՛տք  
չունիս ես անշա՞փ, անշա՞փ շնորհակալ եմ քեզմէ: Շնոր-  
հակա՞լ եմ և ա՛յս այցիդ համար և նախո՞րդ հանդիպում-  
ներուդ: Շնորհակա՞լ եմ քեզի քու պատճառած բոլոր ու-  
րախութիւններուդ համար, քու տւած վշտիդ, քու ներ-  
շնչած հպարտութեանդ, մտածումներուդ: Շնորհակա՞լ եմ  
քեզմէ եկած ամեն բանի համար: Թո՛ղ այդ մասին ալ  
չխօսինք:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻԵՆ. — Չհասկըցա՞ր: Լսէ, խօսիմ քեզի  
բոլորովին մերկ ես առե՛ր եմ կեանքէն ինչ որ աշխարհի  
հոսանքը բերեր է ինձի, փրցուցե՛ր եմ կեանքէն, ինչ որ  
ուժու պատեր է: Բայց հոգիս միշտ մնացեր է գժոռն, մնա-  
ցեր է կարօտ: Ու խուլ կերպով, կարծես ինձմէ իսկ ծա-  
ծուկ, որոներ է ուրիշ բան մը, ուրիշ կեանք մը, որ

վե՛ր ըլլա առօրեայէն, որ չժանջնա սովորականի գոհեկութիւնը։ Հոգիս ծարաւեր է ուրիշ տեսակ էակի մը, աղնաւացնող, զտող, բարձրացընող։ Ալօս ու հեռաւոր մշուշի մը յածող շունջն էր այդ էակը ինծի համար. և ես անրջել իսկ չէի կրնար, թէ օր մը ան պիտի կինար դէմս մարմին առած, խո՛ր, առ'ւրբ ու հմայիչ, ինչպէս հիմա դուն կիցած ես իմ դէմս կիցած ես այդպէս պարզ ու բնական, ու լաւ ալ չես հասկնար, թէ ի՞նչ կ'ըսեմ քեզի, թէ ի՞նչ ես դուն և թէ ի՞նչ արժիս։

ՀԱՅՆԱ. — Ո՛չ, զօրավա՛ր, լաւ զիտեմ՝ ի՞նչ եմ ես, զիտեմ՝ ի՞նչ ես դուն։ Քու ազնւական հոգիս կը մեղքընա ինծի, սիրտս առնել կ'ուզէ. իզո՞ւր. չե՞մ ուզեր։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — իսկ եթէ ըսեմ քեզի, թէ դուն հիմա հե՞տո ես մի՛շտ ու ամեն տեղ։ Դուն հետո էիր վերջին կոիւներուս ատեն, դուն հետո էիր դարձիս, որսիս և հո՞ն, վե՛րը, ձիւնոտ լիսներուն վրա։

ՀԱՅՆԱ. — (Մեծ բերկանենվ) Հետդ էի, հա՞, հետդ էի և հօն, վե՞րը, ձիւնոտ լիսներուն վրա…

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Նեղ ու ծանր վայրկաններուս քու կերպարանքդ է, որ կը կենա դէմս, կարծես քեզի հետ է որ կը խորհրդակցիմ. քեզի է, որ կը դիմեմ, երբ թե առնել կ'ուզեմ, երբ վարիրէն վե՛ր կը ձգտի հոգիս, դէպի վե՛ր։

ՀԱՅՆԱ. — Հերի՞ք է. լոէ՛. Հասկցի՛ր, որ չեմ կրնար… ար չեմ կրնար բոլորը մէկ անգամէն։ Արե՛ւն է, արե՛ւը, արե՛ւը, որ կը թափանցէ էութիւնս, որ կը զրկէ հոգիս… Ալ, ալ ինչո՞ւ կ'ապրիմ…

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — (Մեղմով կը մօտենա, նպարացնիւ շարժումով մը կ'ուզէ բռնէ անոր ձեռքը) Հա՞ննա…

ՀԱՅՆԱ. — (Կամաց ես կը բառէ ձեռքը ու տարօրինակ խօսւածով) Մի՛, մի՛, մի՛ դպիր. կը փշրես. կը կորչի, կը ցնդի, երջանկութեան չե՞ն դպիր, կը ցնդի…

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — (Պարզելով ձեռքը) Բոնէ՛ ամուր ձեռքս, Հա՞ննա, ո՞չ կը կորչի, ո՞չ կը ցնդի։  
ՀԱՅՆԱ. — Ձեռքդ…

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Այո՛: Բոնէ՛ ու բարձրանանք միսախն կայարներու գահը։

ՀԱՅՆԱ. — (Մոլոր) Գա՞ճը… բարձրանանք գա՞ճը…

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Կամ գուցէ կ'ուզէիր, որ նախն երթամ տիրեմ գահներու, ժողովուրդներու, երթամ տիրեմ աշխարհներու ու ետքը գամ տոքդ, հպա՛րտ աղջիկ, քեզի կայսրներու գահը տանելու։

ՀԱՅՆԱ. — (Հատու շեշտով մը, գուշակի մը պէս) Դուն տիրեմ պիտի գահներու, ժողովուրդներու, դուն տիրեմ պիտի աշխարհներու. այդ բոլորը ըլլա՛ պիտի։ Բայց դուն ինծի քու գահդ չե՞ս տանելու. այդ մէկը պէտք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Ինչպէ՞ս։

ՀԱՅՆԱ. — Այդ մէկը պէ՞տք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Կը մերժի՞ս։

ՀԱՅՆԱ. — Այդ մէկը պէ՞տք չէ, որ ըլլա։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Ինչո՞ւ։

ՀԱՅՆԱ. — (Բիշ լուռ) Կ'ուզիմ արժանի ըլլամ քու այդ միծ սիրուզ, կ'ուզիմ ըլլամ արժանի քու հոգիիդ որոնումին, կ'ուզիմ ըլլամ քեզի հաւասար։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Մերժիլո՞վ. երբ իմ հոգիս միայն քեզի կը ձգտի, երբ ամքողջ էութիւնս սիրուզ կը տենչա ու քեզի է ծարաւի։

ՀԱՅՆԱ. — Ճի՞շդ ատոր համար. Պէտք է, որ դուն անգամ մը գոնէ տենչա ու չունենաս, ձգտիս ու չհասնիս, ծարաւիս ու չյազենաս. Կ'ուզիմ որ զո՞նէ անգամ մը չհասնիս. Պէտքար լիսան գագաթը։

ՕՀԱՆ ԳՈՒԻՐԳԻՆ. — Պէտքար լիսա՞ն…

ՀԱՅՆԱ. — Որ շուրջդ միայն դիակ չտեսնեմ, որ

տիրութիւնը չխեղդէ հոգիդ, որ չըսես՝ «ինչո՞ւ համար»,  
որ չխորհիս՝ թէ խեղճ բան է այս բռլորը և չի արժեր  
ոչինչ»:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Դուն ո՞ր աշխարհէն իջած հոգի  
եա, Հա՛ննա, ո՞ր երկինքներէն կը թափանցէ շունչդ իմ  
հոգիս:

ՀԱՅՆԱԼ. — Թող մի՛շտ, ընդմի՛շտ, այդպէս հոգիդ  
լիցուն ըլլա ինձմոլ և մի՛շտ, ընդմի՛շտ, ինքդ հեռու,  
հեռու ինձմէ...

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Հա՛ննա, քու ընարածդ ցաւն է.  
անվերջ կարօտ ու տւայտանք:

ՀԱՅՆԱԼ. — Զգիտե՛մ անունը, բայց ա'տ է, որ չի  
անցնիր, որ չի՛ հատնիր, որ չի ցամքիր, կայսր քու  
գա՞հիդ վրա, ո՛չ ես կ'ուզեմ ըլլամ կա՛յսր քու հոգիիդ  
վրա:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Զարմա՞նք է: ինչ որ կ'ըսես՝  
այնքա՞ն անքնական է ու հակառակ կերանքին, բայց և  
այնքա՞ն հարազատ կարծես ձայնդ հոգիիս խորհրէն կու  
զա, էութեանս գեռ անձանաչ ու մշտայոյզ ալիքներէն:  
Դէպի անհասն ու անչչը, որ այնպէս կը քաշէ մեզի....  
Քու ձայնդ, Հա՛ննա, կը քաշէ ինձի: իրաւունք ունիս  
մենք պէտք է բաժնւինք: (Ար լոհ): Ալ չգիտեմ՝ ինչ  
ըսեմ քեզի:

ՀԱՅՆԱԼ. — Ըսինք ամեն ինչ:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Կը մնա... որ հեռանամ:

ՀԱՅՆԱԼ. — Կը մնա... որ հեռանամ:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Ալ չենք հանդպիր մենք իրարու:

ՀԱՅՆԱԼ. — Ալ չենք հանդպիր մենք իրարու:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — Չունի՞ս վերջին խօսք մը ըսե-  
լու ինձի:

ՀԱՅՆԱԼ. — (Ազ ձեռքը վեր) Երթաս-բարո՛վ, զօրավա՛ր:

ՕՀԱՆ. ԳՈՒՐԳԻԳԵՆ. — (Նոյնպէս) Մնաս-բարո՛վ, Հա՛ննա:

Գուրգէն արագ կը հեռանա: Աղջիկը կեցած է պահ  
մը անօարձ իր հպատ-օփատի դիրքովը, վերջը կը բուլնա,  
բայլ մը-երկու կ'երբա ես-ես, դեմ կու զա ծառին, զոյզ  
քեւերով կը գրկէ ետեւն ծառին բունք, որ վար չիյնա-  
ու կը մնա այդպէս խաչւածի պէս:

---

## Չորրորդ Արար

### Ա. ՏԵՍԱՐԱՆ

ԿԱՅՍԵՐՈՒՀԻՒՆ ՆՆՉԱՐԱՆԸ

Ճակատը, չափազանց հաս պատին մեջ բառակուսի լուսամուտ մը երկարէ ծանր փեղկերով։ Զախ կողմը լայն ու բարձր անլողինն է ամպովանին տակ։ Աշի պատին մեջ ահազին մարմար բուխարիկը, որուն գեմք սենեակին մէջտեղը, ցած ու փափուկ բազմոց մը ամբողջովին կորած գորգերու ու բարձերու տակ։ Բազմոցին մօտիկ արաբական փոքր սեղաններ՝ վրան զարդի ու յարդարանի իրերով։ Ազի դուռը կը տանի կանանցին միւս սենեակները, ձախը դէպի կապսերական բաժինը։

1

Դիւեր է։ Տեսարանը վայրկեան մը պարապ ու մուր միայն վառարանին կարմիր-դեղին լոյսը յատակին վրա։ Դուրսը ուժեղ բուք ու բամի, որ կը ցնցէ փեղկերը ու ներս կը սուլէ լուսամուտներէն։ Եթբ դուրսի աղմուկը կը մեղմի, կը լսի կրակին աշխուժ հարճարը։

Ազէն կը մտնէ Կուզ պառաւը՝ ձեռքը մոմ։ Միաժամանակ ձախ կուսունքի Արկիրա։

ԿՈՄՄՈՒՀԻՆ. — (Վրա վազելով ու կիսաձայն) Չեկա՞ւ.

ԿՈՒԶ ՊԱՌԱՀԻՆ. — Դեռ ո՞չ, կոմսուհի։

ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Վեր առի՞ք ելարանը։  
ԿՈՒԶԻ. — Ներս մտան թէ չէ։  
ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Ուրիմն քանի՞ հոգի եղան հիմա։  
ԿՈՒԶԻ. — Բուրցէսը, այս հաստ բեխերովը և ուրիշ մը քու սենեակդ են։ ծովի կողմէն եկողներն ալ իմ քովի սենեակու։  
ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Նշմարող ոչո՞ք կասկածելի ոչի՞նչ։  
ԿՈՒԶԻ. — Թող հանգիստ ըլլա կոմսուհին։  
ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Իսկ ներքինապի՞աը։  
ԿՈՒԶԻ. — Անիկա այսպէս հրաշալի անյայտանալ գիտէ, երբ կը տեսնէ որ աւելորդ է իր ներկայութիւնը։  
ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Եթէ կը համարձակի՝ թող չանյայտանա։  
ԿՈՒԶԻ. — Սուր քիթ ունի. իսկոյն հասկըցաւ, թէ հոտերը ուրկէ կու գան։  
ԿՈՄՄՈՒՀԻՆ. — Քաշւէ՛. եկա՞ն եղի՛ր նշանակած տեղս ու աչքերդ չորս բաց։  
ԿՈՒԶԻ. — Կոմսուհին կը ճանչնա ինծի Պառաւեր եմ, շիտա՞կ է, բայց գիտեմ թէ գործերը ինչպէս կը դառնան։ (Դուրս ձախուն)։

2

Ազէն կը մտնեն երկու պալատական օրիորդ՝ ձեռքերն մեյ-մեկ մոմ։ Անոնց ետեւեն կայսրութին օրջապատւած քանի մը պալատական կիներով։ Մեկը կ'առնէ անոց վերնոցը, միւսը բողը բեւերէն ու փեսերէն բոնած կը նսեցընեն եւ իրենն յարգալից կը կենան դէմը։

ԹԵՇՅԱՆՈ. — Ծնորհակա՛լ եմ Գիշեր բարի բոլորիդ։  
ՄԵԿԻ. — Զունի՞ ուրիշ հրաման մեր երջանիկ թագուհին։

ԹԵՇՅԱՆՈ. — Հանգիստ քո՛ւն ձեզի։

— 93 —

ԽՈՒՄԲԸ. — (Միաբերան) Դիշեր բարի, աստւածամինդ բաղիլի՛աս: (Խոր երկրպագումով կը բաւին աջէն):

3

Թէօֆիլնօ. — (Խոլոյն դեպի կոմսունին) Ի՞նչ լուր: ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Սարսափիլի ծով է, թագուհի՛: Քաղկետոնէն մինչև հոս, հոսանքին ու հիւսիսին բերանը, ընկույզի կեղեկի մը վրա: ուղղակի անկարելի բան է, թագուհի՛: Զի՛ պիտի զա:

Թէօֆիլնօ. — Ժամը չլրացած հո՛ս է ան:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Եթէ չեկառ՝ կորսւած ենք բոլոր, թագուհի՛: Լոյսի հետ կը բացւի ամեն բան: Բերաններ կան, որ հիմա կարկամած են, առտուն այլես խցել չե՛նք կրնար:

Թէօֆիլնօ. — Ժամը չլրացած հո՛ս է ան:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — (Վերբա կը բանա նակի մեկ վեղիը) Եկո՛ւր. եկո՛ւր նայէ: Նայէ՛ ի՞նչ ծով է, ի՞նչ ալիք, ի՞նչ թիփի: Ա՛, խաչեալ Յիսուս, գո՞ւն օգնես մեղի:

Թէօֆիլնօ. — Գոցէ՛ փեղկը Այլակէ՛ս լոէ՛: Ո՛չ ծովը ո՛չ հովը, ո՛չ մըրիկ, ո՛չ տարերք, ո՛չ, արգիլի չեն կրնար: Ի՞նչ որ ես ու ան վճուր ենք, որ պիտի կատարւի այս պիշեր: Ժամը չլրացած հոս է ան: Խոկ ոտքը հոս գրաւ թէ չէ՝ ալ մենք ենք տէրը: Մարէ՛ մոմերը: Թող մնա մէկը: Բա՞ց է իր ճամբան:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Բա՞ց է, թագուհի՛: Մեր ներքինին է հան:

Թէօֆիլնօ. — Խոկ կայսեր դժո՞ւռը:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Կը հսկեմ ի՞նքս: Կարծես ոտքի ձայշեր...

Թէօֆիլնօ. — Ի՞նքն է, ի՞նքն է:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Ա՛, Յիսո՞ւս փրկիչ... (Խուրս ձախէն):

Թէօֆիլնօ. — (Կը նետի Գուրգենին ընդառաջ) Իմ քա՛ջս, իմ քա՛ջս, որ իր դէմը արգելք չի՛ ճանչնար: Այս հովերուն, այս ծովերուն գիմազրաւողը, այդ կամքն ու վճուականութիւնը ունեցողը իրաւունք ունի՛ բոլոր գաներուն, բոլոր դիրքերուն Ա՛, եկա՛ր, եկա՛ր:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔՆ. — Կեցի՛ր, կեցի՛ր, բան հասկնամ: Ես եկե՛ր եմ, բայց միւսնե՞րը:

Թէօֆիլնօ. — Այո՛, այո՛, եօ՛թն ալ, բայց նախ նատէ, չո՞ւնչ առ: (Կը բաւէ դեպի բազմոցը ու կը նասեցնէ եովլը) Ա՛, ինչպէ՞ս յանկարծ յազնութիւն մը եկաւ վրաս... Խոկ դո՞ւրսը, գուրաը ի՞նչպէ՞ս է:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔՆ. — Համակիր անթիւ, մասնակից քիչիր: Շատ աշխատեցա թիկնապահներու գունդը զրաւեմ: Հրամանատարներէն մէկն է միայն մեղի հնամիւններուն մօտենալլ շա՞տ էր վտանգաւոր: Բայց մի՞ւնոյն է՝ ի՞նչ կրնան ըներ այդ վարձկանները կստարւած իրողութիւն հանդէպ: Թող ինծի՛ այդ ամենուն հոգը: Քու վրադ է միայն, որ բաց պահես մեր առջեր անջարանին մուտքը:

Թէօֆիլնօ. — Թիչ մը ետքը կ'երթամ մօտը ու պիտի խնդրիմ, որ իր սենեակը զիշերեմ: Սոսկալի հով է, անսովոր փոթորկի, ամեն ծակէ կը սուլէ՛ չէ՞ որ կը վախնամ: Քնացաւ թէ չէ՝ բա՞ց է գուռը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔՆ. — (ՈՏՖԻ ԵԼՆԵԼՈՎ) Ուրիմն վերջացաւ: Կէս զիշեր չեղած՝ ալ Ֆոկաս չկա:

Թէօֆիլնօ. — (ԻՖԲԻ ալ ԵԼՆԵԼՈՎ ՈՏՖԻ) Այլ իմպիրատոր, աւտոկրատոր, կայսր ու բաղիլես Օհան Գուրգէն: Ի՞նչ ալ աղոր կը վայլէ անունիդ:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՔՆ. — Թո՞ղ հիմա այդ բոլորը:

Թէօֆիլնօ. — Ո՛չ Դաւի չպիտիս՝ ի՞նչ սքանչելի զոյգ

Ենք ըլլալու ես ու դուն Այրպիսի զոյզգ գեռ չէ տեսած  
այս պալատը. այդպիսի զոյզգ գեռ չէ նստած ո՛չ բիւզանց  
դական և ո՛չ աշխարհի որեւէ գահին Երեակայէ՛ ինձի ու  
քնզի քով քովի, ա՛յ, այսպէս, մեծ դահլիճի ամպովաւ-  
նին տակը, մեր կայսերական բովանդակ շուքովը, շրջա-  
պատած ու պաշտած ամենքէն. մեր ոտքերուն տակ  
ինուժական ամբողջ աւագանին, ամբողջ աղնւականու-  
թիւնը և քու բալոր յաղթական բանակներդ: Ատիկա՛ է  
միակ արդարը. աշխարհը պիտի երկրպագէ արիին ու գե-  
ղացիկին: Ո՞վ աւելի արի՝ քան դուն, ո՞վ աւելի գեղեցիկ՝  
քան ես: Պէտք էր, որ զար այս օրը:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Իսկ ես ինչքա՞ն, ինչքան ջանք  
եմ թափիր, որ այդ մարզը դառնա կայսր:

ԹէօֆԱՆ. — Հապա ե՞ս:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Իրաւ է:

ԹէօֆԱՆ. — Ես ու դուն բարձրացուցինք անիկա-  
վեր, ես ու դուն ալ հիմա կը զարնենք զետին:

ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — Իսկ ո՞ւր են աղաքը: Կ'ուղէի  
ահսնեմ:

ԹէօֆԱՆ. — Ա՛խ, ինչո՞ւ չբացւեցան մեր աչքերը  
ասկէ վից-եօթը տարի աւելի կանուխ իզուր կորած ու  
ձմռուած տարիներ: ափսո՞ս... որոնց վրէժը սակայն  
պէտք է լուծւի այս գիշեր: (Յանկարծ կատաղի բոլոնի)

Չորցո՞ւց իմ կեանքս այդ չոր ճիւազը, մաշե՛ց երիտա-  
սարգութիւնս: Ա՛, ես կ'ատեմ իր այն աղէսի աչքերը,  
իր հաստ շրթունքը, կ'ատեմ իր զզւելի ձեռքերը, այն  
թաց ձեռքերը...

5

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — (Ներս վազելով) Կա՛յսրը, Կա՛յսրը,  
թագո՞ւհի:

ԹէօֆԱՆ. — Հանզի՞ստ Առաջնորդէ՛ կռմոը քու մեն-

— 96 —

հակդ: Եւ ոչ-ոք չարժի իր տեղէն մինչև ձայն չտամ:  
ԿՈՄՍՈՒՀԻՆ. — (Անհանգիս եւ օտապեցընելով) Տէ՛ք...  
ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ. — (Տեսակ մը ակամա կը հետեւի  
անոր):

6

ԹէօֆԱՆ. — (Արագ կը նայի՝ կոնակը դարձուցած  
դեպի կայսեր դուռը, արմուկները ծունիերուն ու դեմք  
ձեռներուն (մեց):

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — (Արագ կը նայի իիշ մը) Ի՞նչ կ'ընեմ հոս:

ԹէօֆԱՆ. — (Ընդուն) Վա՛յ, ինչպէս վախցուցիր ինձի:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Ո՞ւր են կիսերդ, ինչո՞ւ ես մինակ:

ԹէօֆԱՆ. — (Տխուր) Նոր ճամբու դրի: Կ'ուղէի  
պատկի՞մ, քունս չի տանիիր: Ի՞նչ զարշելի գիշեր է: Ինչ-  
պէ՞ս եղաւ, որ յիշեցիր իմ գոյութիւնս պալատիդ մէկ  
անկինելը:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — (Յալու մալիսով) Կարօտե՞ր ես: Զէ՞ որ ես  
կ'ըպպամ՝ զուն գժզոն ես միշտ, երբ ես կուզամ քեզի:

ԹէօֆԱՆ. — Ինչպէ՞ս կ'ուղես, որ զոն ըլլամ, երբ  
մեր յարարերութիւնն մէջ մնացնիր է միայն քարացած  
սովորութիւնն մը, անհոգի ու անմտերիմ:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Մատերի՞մ Ատ ի՞նչ շայլութիւն է ինձի  
համար: Բայ է և ան, որ զեռ հաւատաքի կաոր մը մնացեր  
է մէջու և ան ալ գիտե՞ս ինչու:

ԹէօֆԱՆ. — Բաէ:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Որովհետեւ շատ կը պնդեն, որ չհաւատամ  
քեզի: Կ'ուղե՞ս ամենէն վերջին նմուշը (Ծոցէն ծալլած  
բորի կտոր մը հանելով) Ա՛ռ կարգա՛:

ԹէօֆԱՆ. — Ո՞չ, ո՞չ: Ի՞նչ բան է: Կարդա ի՞նքդ:

ԿՈՄՍՈՒՀԻՆ. — Լա՛ւ, կարգա՛մ, մեծ հաճո՞յք է: «Այս  
գիշեր պատկելէզ առաջ անպատճառ խուզարկել տուր կա-

— 97 —

նանոցիդ բոլոր անկիւնները. ամբողջ բանակ մը պիտի գտնես թաքնւած. չաւտա՞ս կնոջդ հնարքներուն Ահա կ'ըզգուշացնէ քեզի քու անկեզծ բարեկամդ»: Է՛, ի՞նչ կ'ըսես իմ անկեզծ բարեկամիս խորհրդին:

ԹէօֆԱն0.— (Կեցած է լուռ ու հանգիս) Ի՞նչ պիտի ըսեմ. ի՞նչ կրնամ ըսեր: Հետեւ՝ իր խորհրդին, և խնդրեմ, մի՛ հաւտա՛ր ո՛չ ինծի, ո՛չ իմ խօսքիս, ո՛չ իմ հնարքներուս: Ինծի պէտքը չէ քու հաւտարդդ, որ այդ տեսակ սառըին աղբիւրներէ կը ըխի: (Հետզինեւ անող կատալութեամբ) Ահա ես, ահա քու կանանցդ. կանչէ՛ ներքինիներդ, կանչէ՛ թիկնապահներդ, կանչէ՛ բոլոր զօրավարներդ, բանակներդ: Թող գան, խառնի՛ն, սոքի տա՛կ տան, թող գան մերկացնե՛ն, պատու՞ն, պղծեն, խորտակեն ամե՞ն բան ու ամե՞ն սրբութիւն, միայն թէ ալ ազատի՛մ, ազատի՛մ, ազատի՞մ...

ԿԱՅՍՐԸ.— Իզո՞ւր. չըսի՛, որ յուզւիս. ըսի՛, որ հասկընաս:

ԹէօֆԱն0.— Ի՞նչ կ'ուզեն ինծմէ, Աստւած իմ (Ալով) ինչո՞ւ կը տանջեն, ինչո՞ւ կը հալածեն, ես ի՞նչ եմ ըրեր անոնց:

ԿԱՅՍՐԸ.— Զգիտե՞ա Յաղթե՞ր ես, բարձրացեր ես գագա՞թը, դուն կա՛յսր ես: Մ'արդկային ծածուկ ու խորունկ ատելութիւնն է ատիկա ամե՞ն բանի դէմ, ամե՞ն մարդու դէմ, որ յաջողեր է, որ հասեր է, որ գագաթն է: Զյաջողածներու վրէմն է ատիկա, ե՛տ մնացողներու անքուն ատելութիւնը: Հանգիստ չե՞ն տալու, խայթելու են և մութին մէջ արմատները կածելու: Նայէ՛, դուն զայրացա՞ր, լացի՞ր, պոռացի՞ր ու թեթեցա՞ր: Խսկ ե՞ս, ե՞ս ինչ ընեմ, թէօֆա՞նօ, ո՞չ կին եմ, ո՞չ լալ կրնամ, ո՞չ ալ մնալ անտարբեր: Կը կարծես դիւրի՞ն է ինծի: Երբեմն այնպէս ծանր վայրկիաններ կու գան վրաս, նե՛րոը, այն ընդարձակ ննջարանիս առանձնութեան մէջ: Այս, մա-

նաւանդ այսպէս խոլ ու դիւահար գիշերները, պատերուն ցայտերն ու քիւերն անդամ կարծես կեանք կ'առնեն մոմիս դողդոջ լոյսին տակ և մոլեգնուս հովը պատուհանիս ճեղքերէն զիտե՞ս ինչ սե գաւեր կը պատմէ ինծի:

ԹէօֆԱն0.— Ի՞նչ ըսել կ'ուզես... Նիկեփո՞ր:  
ԿԱՅՍՐԸ.— Թէօֆա՞նօ, կ'ըզգա՞մ, որ չուրջն բան մը կը դառնա. կ'ըզգա՞մ, որ գաւ մը կը նիւթւի մնելի դէմ: Թիչ մը առաջ էր՝ նսաեր էի ներսը մտածումներուս հետ՝ յանկարծ այդ նախազգացումն այնպէս սարսափելի սուր կերպարանք առաւ, որ կամքիս հակառակ ներսը մնալ չկրցաւ Այս, ելեր եկեր եմ քեզի, հո՛ս, շիտա՛կ հոս, ինքս ալ չզիտեմ իսկապէս՝ ինչո՞ւ:

ԹէօֆԱն0.— (Ահասած) Նիկեփո՞ր... Նիկեփո՞ր...  
ԿԱՅՍՐԸ.— Եկեր եմ ու այս բոլորը կը պատմեմ քեզի: Ուրիշ որո՞ւ երթամ, ուրիշ որո՞ւ ըսեմ: Խսկ լսել չեմ կրնար. կ'ըզգամ, որ չեմ կրնար:

ԹէօֆԱն0.— Խօսէ՛, խօսէ՛... ինչ որ զիտես ի՞նչ դաւէ ատիկա և արդիօք ո՞վ: Այս, եթէ զիտնայինք:

ԿԱՅՍՐԸ.— (Եեւ կենջը նայելով) Ես զիտե՞մ:  
ԹէօֆԱն0.— (Ակամա բայլ մը ես բաւելով) Դիտե՞մ...  
ԿԱՅՍՐԸ.— Այս:

ԹէօֆԱն0.— Ո՞վ:

ԿԱՅՍՐԸ.— Գիտե՞մ:

ԹէօֆԱն0.— (Հազիւ լսելի, ակւաներուն մեջեն) Բուլ՛...

ԿԱՅՍՐԸ.— Բուլ՛ դուն ինքդ:

ԹէօֆԱն0.— Ե՞ս: Բսեմ ե՞ս...

ԿԱՅՍՐԸ.— Ո՞վ կը կարծես:

ԹէօֆԱն0.— Հազար անուն կ'անցնի մտքէս:

ԿԱՅՍՐԸ.— Ո՞րն է առաջին անցածը:

ԹէօֆԱն0.— Առաջինը պիտի զարմանա՞ս. Գուրեէ՞նը:

**ԿԱՅՑՈՒԾ.** — (Խնկալով) Ձե՛մ զարմանար. ուսր է և զեղբ մի՛շտ քու հոսառութիւնդ:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — Նորէ՞ն այդ մարդը. նորէ՞ն այդ մարդ գը կ'ենէ իմ դէմա:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Վարպե՞տ է և զգուշ. բայց կոյք չեմ և ես Հիմա ինձի համար պարզ է. թէ այս ինչ պատճռութիւն էր Բարդասի քրոջը հետ. (Կորուկ ու Պատմուի կիութ մօտենալով) Ան կ'ուզէր իրեն համար դաւակից մը կանանցիս մէջ. ան կ'ուզէր մէկը, որ ներսէն բանար դուռը...

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Սարափանար) Ի՞նչ կ'ըսիս, Նիկեփո՛ր բնչ կ'ըսիս...

**ԿԱՅՑՈՒԾ.** — Ես գիտե՞մ, կը հոկե՞մ: Անոր մատն է այս ամենուն տակը. անոր մատն է և այս նամակին մէջ: Կ'ուզէ խափ տա մէկ-երկու հեղու որ երբ որ մը ճշմարիս որ գա, ևս անոզ ըլլամ ու չնաւահ:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Յանկար խիս յանդիմանութեամբ) Ինչու չեր ըսեր ինձի այդ բոլորը, ինչու էիր լսեր: Եւ վերջապէս հիմա՞ ինչու ես կիցեր. ելի՞ր, զա՞րկ, սառակեցո՞ւր:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Ինչու... չըմ, ինչու... (Քննրզինք ծալքելով) Որովհեան... որովհեան ա՞ն է կապիր առաջին անգամ առքիս այս կարմիր կօշիկները:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — Ի՞նչ միամիտ տիմար բաներ կը խօսիս:  
**ԿԱՅՑՈՒԾ.** — Զէ: Բայց ալ վերջացա՞ւ: Թող զա՞ ինչ որ գալու է, թող ըլլա՞ ինչ որ ըլլալու է: Անիկա... պէտք է մեռնի:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — Միայն թէ շուտա: Դուն վախ դրիր իմ մէջս:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Ան կ'ուզէ այդ վախը գնէ և ի՞մ մէջս բամանակ չե՞մ տար իրեն: Հիւսած եմ արդէն իր մահը:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — Ե՞րբ, ե՞րբ:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Վազը պիտի երթա որսի Գիտեմ, որ որսը շատ կը սիրէ. թող մեսնի որսի ատեն: Շնորհ մընէ, որ կ'ընեմ իրեն: Դժբաղգ պատահմունք մը: Վերջը կը նուիրիմ իրեն փառաւոր թաղում մը արքունի գանձէն և թող ո՛չմէկը չանցընէ մտքէն, թէ Նիկեփոր կայսրը վարձատրել չգիտէ իր ծառաները:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Մեծ ուրախութեամբ) Հիմա հա՞նգիստ եմ, հիմա կը հաւատմ: Լաւ է, ինչ լաւ է: Տրաշալի են կարգադրեր:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Կարգագրողը ես չեմ: Կարգագրողը ի՞նքը եղաւ: Ի՞նքն էր, որ կը պատմեր, թէ այս ամբողջ շաբաթը որսի է երթալու: Դեռ կը խօսէր, որ ես վճիռ տաճ էի արդէն: Ճակատազրի վժիւն է ասիկա: Վերջը վերջը ըլլա՞ր պիտի, ուշ կամ կանուխ ճակատազրին զէմ երթալ կարելի չէ:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Խորհրդաւոր ու սարափով) Այս՛ Նիկեփո՛ր, այդպէս է: Ճակատազրին զէմ երթալ կարելի չէ:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Ա՛, ճակատազրի զի՞րը: Եթէ գրւած է, որ պիտի մեռնիս այս զիշեր, հիմա, պահիկ մը հաքը՝ կը մեռնիս, ոչինչ չի փրկեր: Կարծես աշքերդ կը փակւին ու չես նշմարեր ինչ որ շուրջէ կը կատարւի:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Միւս նոյն սարափով) Այս՛, Նիկեփո՛ր, այդպէս է: չես նշմարեր ինչ որ շուրջէ կը կատարւի:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Կարծես բանականութիւնդ կը կողպէ: Կու զան կ'ըսեն երեսիդ ու չես հասկընար:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — (Նոյն եղանակով) Այս՛, Նիկեփո՛ր, այդպէս է: Կու զան կ'ըսեն երեսիդ ու չես հասկընար:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Կախանեցան ու մեռան մէջս ամեն հաւատք, վատահութիւն, մնաց ճակատազրիը: Փաթթւեր ևմ անոր:

**ԹԷՅՖԱՆԵՐ.** — Լաէ՛, Նիկեփո՛ր, թող այս զիշեր զամ

սենեակդ պառկելու: Հոգիս ցունց ելաւ ըսած խօսքերէդ,  
հոյն ալ դուրսը զէշ-զէշ կ'ոռնա.... Զե՛մ կրնար մինակ:

ԹէՅՄՍՐԸ.— Եկո՛ւր: Անկողինս ազատ է: Գիտե՛ս, որ  
ես Կը պառկիմ բազմոցին...

ԹէՅՄՍՐՆՕ.— Այո՛, փաթթւած սուրբիդ վերաբկուին  
մէջ:

ԿԱՅՄՍՐԸ.— Իմ ուխտո է: Կ'ուղեմ իր շուքին տակ,  
իր սրբութեան երբ կը փաթթւամ իր վերաբկուին, կար-  
ծես ճակատազրին է, որ կ'ապաւինիմ: Քալէ՛ երթանք:  
Ցողնած ու քնատ եմ ես ալ Ա՛, շա՛տ եմ յոցնած:

ԹէՅՄՍՐՆՕ.— Փոխիմ հագուստս, կու գամ: Դուն զնա՛:  
(Կ'երքա աշխ մուսքը) Մելա՛նիան:

ԿԱՅՄՍՐԸ.— Աղէ՛կ եթէ քնած ըլլամ, չմոռնաս դնե-  
լու դուան մեծ նիզը: (Զախէն դուրս):

ԹէՅՄՍՐՆՕ.— Ա՛, ճակտիդ զէ՛րը: Ալ չի՛ փրկեր քեզի-  
ո՛չ-մէկ դուս, ալ չի փրկեր քեզի ո՛չ-մէկ նիզ...

7

ԿԱՅՄՍՐԻՀԻՆ.— (Կը մտնէ ու կը կենա դեմք վախով  
ու հարցական):

ԹէՅՄՍՐՆՕ.— Գնա նե՛րս, յայտնէ՛... որ բա՛ց է դուռը...

ԿԱՅՄՍՐԻՀԻՆ.— (Ակամա ես-ես կ'երքա ու կը կենա):

ԹէՅՄՍՐՆՕ.— Չի լսեցի՞ր:

ԿԱՅՄՍՐԻՀԻՆ.— (Դողալով) Այո՛, իսկո՛յն, իսկո՛յն...  
Յայտնե՛մ, որ բա՛ց է դուռը...

Կումառւին օսապ կ'ելնէ դուրս: Թէօֆանօ կը յար-  
ակւի, կը մարէ մուլը: Մենեակը լուսաւորւած է միայն  
կրակի կարմրաւուն դողդոջ լոյսովը: Թէօֆանօ նավի-  
անը խանի մը խալ կ'ընէ այդ լոյսին մէջ, կը կենա ու  
կ'ըսկսի հանւիլ: Նորէն անշարժ կեցած՝ կը լսէ պան մը,  
հագուստին մէկ կտորը ձեռքը: ու կը շարունակէ հանւիլ:

Վերջը կիսամերկ ու բոբիկ խալ մը կ'ընէ դէպի ձախի  
դուռը ու բովընդի վար ծռած, ականջ դնելու դիրեով  
կը բարանա ամբողջ մարմնով.

Ներս կը վազէ կոմսուհին օնչահեղց: Թէօֆանօ իս-  
կոյն կը օտիւի ամբողջ հասակովը ձիգ ու պրկւած: Կու-  
սուհին կը նետի անոր ոսքը՝ ձեռքերովը դէմքը ծածկած:

ԹէՅՄՍՐՆՕ.— (Խուլ ձայնով) Խօսէ՛:

ԿՈՄՍՈՒՀՀԻՆ.— Վերջացաւ Տիսա՛... սարսափելի է...

ԹէՅՄՍՐՆՕ.— Ել՛ր, գոցէ՛ ներս տանող դուռը, կող-  
ակէ՛ ձգէ՛ վարագոյրները: Բա՛ց անկողինս Շո՛ւտ, շո՛ւտ,  
գնա՛ սենեակդ, հանւէ՛ գուն ալ ներսէն աղմուկ լսելուն  
ուէս կը վազէք հոս ինծի արթնցնելու: կը լսե՞ս... կը վա-  
զէք հո՞ս, ինծի արթնցնելու... բոլորդ միասին ինծի  
արթնցնելու... (Նսապ կը սպրդի անկողինը):



## Բ ՏԵՍԱՐԱՆ

ԳԱՀԻՆ ԳԱՀԼԻՃՐ:

Դահլիճը խոր, բարձր ու բնդարձակ: Ճակատը զանն  
է սեղ ամպիովանիին տակ, խանի մը աստիճան բարձր  
պատւանդանին վրա: Ազ ու ձախ սինաւար է, համակ  
ուկեզօծ, կարմիր-մետաքս կտորներով տօնագարդած:

1

Օհան Գուրգէն կեցած է ամպիովանիին տակ կայ-  
սերական լրիւ հանդերձաներով: Գահին երկու կողմք  
խոնւած են բազմարի բարձրաւասինան պատօնեաներ՝  
պալատական, զինուորական, հոգեւորական: Բոլորն ալ  
հարուստ պատօնական զգեստաւորումով:

**ԱՐՔՈՒՆԻՇԻ ԴՊԻՐԸ.** — (Դանի ստորին աստիճանին վրա կեցած, իր մը կողքով, աւարտելու վրա և ձեռքի երկար մազաղարին ընթեցաւմը) ... մասուածանդ ա'յն վայրկեանին, երբ Ասուածային Անքննելի Նախախնամութիւնը ինձի յանձնեց այս միակ քաղաքակիրթ ու համարիս քրիստոնեա պետութեան գարաւոր սրբազն գանց Յաղթանակ' ու յաջողութիւն բանակներուս, վայն' լք ու առատութիւն ժողովրդիս, փա՛ռք ու բարձրացում կայսերութեան և Ասուածային օրնութիւնն ու իմաստութիւնը բոլորիս Տւած է անդրանիկ հրովարտակս Տէրն Մեր Յիսուսի Քրիստոսի մարդկութեան ինն հարիւր վախուն և ինը թւականին և մեր երջանիկ գանձկալութեան առաջին տարին կայսր Օհան: (Իր գալաք մագաղաքը ու կ'իջնե պատւանդանին):

**ԱԻԱԳ ԱՐԱԲՈՂԱԳԵՑԸ.** — (Առաջ կու զա թնդանուր լուռեան մեջ եւ խոր զլուխ տալով կայսեր) Օհան կայսր, երկար արե քեզի. երկար արե ու երջանիկ թագաւորութիւն, ո'վ գուշ, արի և իմաստուն ինքնակալ: (Դառնալով բազ լուրեան) եւ գուշ, որ պայծառ ասուզերն էք մեր այս փասայիկ պետութեան չքել երկնակամարին, եկէ՛ք խոնարհինք ու երկրպագնք մեզի ծագած այս նոր արեղակին, մեր ասուածընտիր նոր գանձկալին:

**ԲՈԼԱԲԸ.** — (Խոր կը խոնարհին միջնե մեջը):

**ԿՈՅԱՐ ՕՀԱՆ ԳՈՒՐԳԻՆ.** — Վե՛ր բարձրացուցէք ձեր խոնարհած զլուխները, ձեռքերնիդ զրէ՛ք ձեր սուրբին ու ձեր ճակատը հաղարտ ուղղեցէ՛ք երկինք: յնձի պէտք չեն խոնարհ զլուխներ: Ես խրախս հոգիներու կ'ուզեմ թագաւորեմ: Ձեր խելքն է, որ կը վարէ այս տէրութիւնը ու ձեր բազուկն է, որ կը պաշտպանէ. զուշ իրաւունք ունիք հաղարտ ըլլալու: Ես ալ եկեր եմ ձեզի հետ միասին հաղարտ զօրծ տեսնելու: Պարզ ու շիուակ կը խոստանամ

ձեզի՝ քչե՛մ Սվեատոսլաւը իր ոռւսներուն հետ ո՛չ միայն մեր քաղաքի գոներէն, ուր ան հասած է հիմա զրեթէ, մե՛ր սիմալովը, այլ և բուլկարական սահմաններէն ալ անդին, Մեծ Դանուբի հոսանքէն ալ անդին, մինչև իրենց վայրի ու անհամբոյր տափաստանները: Կը խոստանամ ձեզի՝ հպատակութեան բերեմ արաբներն ու մահմետականութիւնը և բարձրացնեմ այս գահին հմայքն ու իշխանութիւնը ա'յն բարձունքները, ուր ան դեռ չէ հասած երբեք մինչև օրս: Հոկա զործ ունինք կատարելու, ես ու գուշ, մենք բոլորս միասին: Պէտք կա մեր ամենուս ուժերուն, մեր ամենուս տաղանդին: Ծննդունեցէ՛ք իմ կայսերական ողջազուրանքս, զացէ՛ք ու եղէ՛ք պատրաստ: (Վ՞իշնե ու կ'անցնի դեպի աջի սիւները):

**ԲԱԶՄՈՒԹԻՒՆՆԸ.** — Կեցցէ: Կեցցէ մեր կայսրը: Կեցցէ Օհան կայսրը: Կեցցէ՛ մեր նոր կայսրը:

## 2

Մինչ բոլորը կը ցրին աջի ու ձախի սիւներուն մեջնին, Սենատոր Պանծիս կամաց մը կը մօտենա Կարեւոր պալատականին, որ մախոն կեցած է մեկդի:

**ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՄ.** — (Դոհ) Հը, բարեկա՛մ, ի՞նչ կ'ըսեա:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԸ.** — Ի՞նչ ըսեմ:

**ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՄ.** — Դեռ երկու շաբաթ չկա: աե՛ս ինչպէս շուռ տւառ ամենուն զլուխը: զինովցեր են:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԸ.** — Շատ է թռնդ զինին: Ամենուն կը ցրէ եր զրամը, հողը, ամենուն կը բաժնէ իր իշխանութիւնը, ամենուն պատիւ ու պաշտօն:

**ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՄ.** — Ցրւեն ալ արւեստ է, ի՞նչ զիտցար: Նախորդը գնաց, որովհետեւ տալ չզիտէր:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԸ.** — Տեսնենք, տեսնենք: գեռ մեղրալուսինն է:

**ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՄ.** — (Դառնալով դեպի Վասիլ Լեկապենը, որ շիտակ անոնց կը մօտենա) Ա՛յ, յախտենական մարդք կայսրներ կու գան, կայսրներ կ'երթան, իսկ սա՛, միւնոյն է, հո՛ս է միշտ, պալատը և միշտ ալ ժիր ոտքերուն վրա կատեի ցեղէն է ինչպէս ալ նետե՞ ոտքերուն կ'իյնա:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ.** — (Աշերը կծկելով) Ա՛յն զիշերը միայն պալատը չէր, ո՛չ ալ ոտքերուն վրա. Թէե արդէն առառուն կանուի...

**ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ.** — (Խելնանալով) Հա՛, այն գիշերը... տկար էի քիչ մը գացեր էի ճար խմելու:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ.** — Տկա՞ր...

**ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ.** — Սոսկալի խիթեր որովայնիս մէջ:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ.** — Այնպէս որ... դարձուցին քեզի պալատին տէրը, որովայնիդ խմաստուն խիթերը:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Ա՛, ինչպէս մարդիկ չար են: Ինչքան որ մանր ու մունր սև աշխատանք կա, բոլորը նետեր են վիզա, ետքն ալ թէ...

**ՍԵՆԱՏՈՐ ՊՈՆՏԻՄ.** — Ինչզ վասիլ. բոլոր մանր ու մունր, սև աշխատանքը...

Յանկարծ բափով կը բացէի խորբ մասնաւոր դուռ մը ու ներս կը վազէ Թիօթանօն, կատաղի կրակ մը աշերուն մէջ, կը նայի ուրեզը պարապ դահլիճին ու կը նետի դեպի երեք, որոնք յարգանքով կը խոնարին:

**ԹԷՕՖԱՆԸ.** — (Պոռալով, անոնց երեսին) Ո՞ւր է կայսրը:

**ԵՐԵԲԸ.** — (Եփոր ու շւար կը նային իրար):

**ԹԷՕՖԱՆԸ.** — Ո՞ւր է. ո՞ւր է կայսրը՝ կը հարցնեմ ձեզի:

**ԿԱՐԵՒՈՐ ՊԱԼԱՏԱԿԱՆԸ.** — Զը զիտեմ, կայսրուհի: Կարդացին հրովարտակը ու գնաց ներս:

**ԹԷՕՖԱՆԸ.** — Հա՛, գնաց ներս... ներս: Պահել կ'ուզէք ինձմէ, փախցնել կ'ուզէք ինձմէ, հա՞, ձեր կայսրը: Կը կարծէք ես չե՞մ հասկընար: (Ուժը զարնելով գետին) Ես կայսրը կ'ուզեմ, կը հասկընա՞ք: Հո՛ս, ա՛յս վայրկեանիս: Կայսրը, կայսրը...

**ԱԳԻՆ ԱՐԱԳ ՆԵՐՍ** կը մտնէ Օհան Գուրգեն: Հանած է զգեստին պահօնական մասերը ու գլխաբաց: Ետեւէն մէկ-երկու պալատական:

**ԹԷՕՖԱՆԸ.** — (Կը վազէ վրան խենք ուրախութեամբ) Ա՛խ, դո՛ւն ահա՛ դուն: Ա՛, վե՛րջապէս, քու աշքերուդ դէմը, քու թեերուդ տա՛կը: Աւ չեմ վախնար, ալ ոչինչէ չեմ վախնար: Առ'ւտ են, սուտ, կ'ուզէին խափեն ինձի:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Հանդա՛րտ, հանդա՛րտ: (Կը դառնա միւս-եերուն ու ձեռքով կ'ընէ, որ հեռանան):

**ԿԱՅՑՈՒԾ.** — Ինձի տեսնել էիր ուզեր և ես համաձայն էի: Բոլորովին աւելարդ էր այս անտեղի տեսարանը:

**ԹԷՕՖԱՆԸ.** — Վախցա, որ խափանեն:

**ԿԱՅՑՈՒԾ.** — Խափանե՞ն. ո՞վ, ինչւէ: Քանի ո՞ր արդէն եկած ենք դէմ դէմի՝ խօսէ: Գիտեմ որ անխմասու ու անախորժ բան մը պիտի ըլլա մեր այս տեսակցութիւնը, բայց քու վերջին ցանկութիւնդ էր, մերժել չեմ կրնար:

**ԹէՕՅԱՆՈ.** — Ի՞նչ բարի եաւ Ռւրեմն այդպէս, ուրեմն իրաւ է՝ ինչ որ կ'ըսն, ինչ որ ինծի յայտնեցին քու անունէդ... կայսեր անունէն:

**ԿԱՅՍՐԸ.** — Այո՛, թէօֆանո. պալատին մէջ մնալդ այլ և կարելի չէ:

**ԹէՕՅԱՆՈ.** — (Կը խնդա կարն) Հա՛, ըսի՞ն, ըսի՞ն իհարկէ, չէ՞ որ ժողովուրդը հակառակ է, չի՞ հանդուրժեր, որ ինծի նման մէկը համարձակիս գահիդ վրան պահելու և ևսիցի, որ տիեզերական պատրիարքը ա՛տ է դրեր քեզի առաջին պայման, եթէ կատարւածը սրբազրիւ կ'ուզես, եթէ օծւիլ կ'ուզես:

**ԿԱՅՍՐԸ.** — Ճիշդ է, Բայց ատիկա ամբոխին դարձած երեսն է գործի:

**ԹէՕՅԱՆՈ.** — Գուցէ կը վախնա՛ս Զէ՞ որ հիմա ամենքը կ'ոռնան փողոցներուն մէջ, թէ ես եմ սպաններ առաջին ամուսինս, ինչպէս և երկրորդը: Որ երկրորդը ես սպաննել աւի, ասոր կարծե՛մ գոնէ դուն կասկած պիտի չունենաս: Բայէ՛, մի՛ քաշւիր, կը վախնա՛ս միւնայն բաղդէն: Կախներու մէջ քաջերը վախկոտ կ'ըլլան այս պատերուն մէջ: Դո՛ւն ալ քաջի համբաւ ունիս:

**ԿԱՅՍՐԸ.** — Ես քու թոյնէդ չէ, որ կը վախնա՛մ, ո՛չ ալ քու գաւէդ:

**ԹէՕՅԱՆՈ.** — Հապա՞: Զըլլա՞ թէ այն միւսի ուրականը յանկարծ եկաւ ու կեցաւ մեր մէջաեղը: Քանի ողջ էր ան՝ գուն էիր անոր ուրւականը, հիմա որ մեռաւ: Ինքը դարձաւ քու ուրւականդ: Այն տիսմար քաւթառը քու ուրւականդ:

**ԿԱՅՍՐԸ.** — Այդպէս չեն խօսիր դժբաղդ ու ինկած մարդու մը մասին, որը քու ամուսինդ է եղած:

**ԹէՕՅԱՆՈ.** — Ատիկա նո՞ր ինկաւ միտքդ: (Հետզինետ անզուսպ բարկութեամբ) Ա՛խ, գուն, զզէ՛լի գարիսցի: պաշտպանէ՛, պաշտպանէ՛ իմ ամուսինս, արդարա-

ցո՛ւր քեզի աշխարհի աչքին, բոլոր յանցանքը նետէ՛ իմ վրաս, քչե՛լ տուր ինծի մենաւոր անկիւն մը և գուն անմե՛դ ու սո՛ւրբ նստէ՛ գանդ ու վայլէ՛: Ցորե՞ն թափել տուր ումժիկ ամբոխի զլխուն, մտի՛ր պատրիարքի փէշերուն տակը, նետէ՛ սոկոր մը ամեն չան բերանը, որ անոնց օգնութեամբ գուցէ պահես քեզի յափշտակած գահիդ վրան:

**ԿԱՅՍՐԸ.** — (Հանգիս ու Տիգուր) Միայն իղուր կը պոռաս: Կը տեսնես, որ լսեմ պիտի քեզի մինչև վերջը:

**ԹէՕՅԱՆՈ.** — Իզուր իզուր կը պոռամ, հա՞: Իհա՞րէ՛, կ'ուզէիր սուսիկ-փուսիկ արորես ինծի, ոչնչացնես ու ագառախիս Ո՛չ պոռամ պիտի պոռամ պիտի, որ աշխարհք իմանա: (Պոռալով) Ո՞վ ես գուն, ո՞վ ես գուն: զետինը սողացող ճիճու մըն էիր գուն, քաշեցի թևէդ, առի ծոցս, տաքցուցի, զրի այս գահին: օձ, օձ, օձի վարձատրութի՞նն է, որ կու տաս: Բայց գուն գեռ չե՞ս տեսած իմ կատաղութիւնս: շատ զլումներ եմ ես ճզմեր այս գարշապարներուս տակը, կը ճզմեմ և քո՛ւ զլուխդ:

**ԿԱՅՍՐԸ.** — Կը հասկընամ քու բարկութիւնդ, կը հասկընամ և քու ասելութիւնդ: Բայց ինչի՞ են պէտք այդ անզօր սպառնալիքները: թո՞ղ ասոնք:

**ԹէՕՅԱՆՈ.** — (Լուր ու շետ կը նայի պահ մը ու հետզինետ կը կորչի իր խրոխս կեցւածքը) Իրաւունք ունիս: Ես ի՞նչ եմ որ հիմա քու առջեւու: Անզօր ու անատամ հալածւած շտւն մը: Ես ինչպէ՞ս կը համարձակիմ քու վրադ հաշելու: Դուն հիմա գահերու բարձունքին, ես... ես հո՞ս... (Կամաց-կամաց կ'իջնեկ, կը չոքի, կը նատի ու կուն կու գա) զետինը... փոշիներու մէջ... քու ոտքերուդ տակը... (Լացլոս) Աքացէ՛... աքացէ՛... հալածէ՛...

**ԿԱՅՍՐԸ.** — Ելիր ոտքի՛, աղայութիւն պէտք չէ՛: (Արոռ մը հենով առջեւը) Ելի՛ր, նստէ՛, թագուհի՛:

**ԹէՕՅԱՆՈ.** — (Դառն) Թագուհի՛... ո՞վ ըսաւ քեզի:

Անցաւ ևս թագուհի էի, ինչքան ատեն, որ իմ գեղեցկութիւնս զէնք մըն էր ձեռքս էրիկ-մարդիկը ինծի ծառայեցնելու։ Մ'յն օրը, որ այս տխմար կիրքը բւընկեակեցաւ մէջս դէպի քեզի, այն օրը զէնքերս յանձնեցի քեզի։ Իմ զէնքովս զարկիր ինծի. կիրքս շինեցիր քեզի սուր ու մարմինս պատւանդան Հիմա, ինա՞րկէ, ալ պէտք չեմ քեզի։ (Փաղաքուց) Օհա՞ն, մտածէ՛. Զէ՛ որ մենք կապւած ենք իրարու, կապւած ընդմիշտ, մեր մարմնովը, մեր բաղդովը, մեր իդառվը. յիշէ մեր անցած ճամբան և այն... զիշերը։

ԿԱՅՍՐԸ. — Մեր հոգիներու մէջ երթք ոչ-մէկ կատչէ եղեր ու չի պիտի ըլլա իսկ այն կապը, որ եղեր է մեր մէջը, ո՞չ, ալ չեմ ուզեր, պէտք է փրցըւի. պէտք է պատուի անցեալի այդ էջը մեր մէջէն։

ԹԷՅՖԱՆՈ. — Բայց, անսասաւած, ա'պերախտ, ի՞նչ վաս բան է ըրեր մեր անցեալը քեզի. Եւ ինչ որ ըրեր եմ՝ քեզի համար եմ ըրեր, քեզի՛, քեզի՛...

ԿԱՅՍՐԸ. — Կարծեմ ըսի՞նք, ինչ որ պէտք էր, գուցէ նոյնիսկ աւելին. Ասկէ անդին դժւար պիտի հասկընանք իրար. Բաժնւի՞նք։

ԹԷՅՖԱՆՈ. — (Վախով առաջ կը նետւի) Կեցի՛ր, կեցի՛ր գեռ Աղէ՛կ, թող ըլլա քու ըսածդ, միայն ժամանակ տուր, որ զանեմ ինքինքս. մէկ-երկու շաբաթ. թող որ հասկընամ եղածը, որ համոզւիմ...»

ԿԱՅՍՐԸ. — Ո՞չ, չի՞մա, իսկո՞յն. հոսկէ շիտակ երթաս պիտի Պրինկիպո կզզին. Կեանքիր ու հանգստիդ պակաս չըլլար ոչինչ։

ԹԷՅՖԱՆՈ. — (Վայրի ծիծաղով) Հա՛, հա՛, հա՛... Հացա կը շնորհես ինծի, հա՛ցս... դո՛ւն... դո՛ւն... (Ներքին գալարումով) Գողի մը պէս եկար մտար սիրոս, մտար անկողինս, մտար պալատս. գողցար ու յափշտակեցիր ամեն ունեցածս, գողցար փարթամութիւնս, փառքս, զահս Գո՛ղ,

գո՛ղ, գո՛ղ... Ա՛խ կ'ուզէի՛ փակչիմ կոկորդիդ, կ'ուզէի խածնեմ, փրցընեմ, կ'ուզէի ծծեմ արիւնդ. կ'ուզէի ճանակեմ, հանեմ աչքերդ, որոնք այդպէս սառն ու ճանձրացած կը նային ինծի. ճանկըռտե՛մ, հանեմ այս եղունկներովս...»

ԿԱՅՍՐԸ. — Կը տեսնեմ՝ գուն այլես քու տէրդ չես վասի՛ր.

ԹԷՅՖԱՆՈ. — (Կը լոե, կը սառի ու կը բարանա):

## 7

ԿԱՅՍՐԸ. — (Վասիլին) Առաջնորդէ՛ թագուհին նաւը։ ԹԷՅՖԱՆՈ. — (Կը նետւի կայսեր ոսքերը ու փարելով) Ներէ՛, Օհա՞ն, ներէ՛. չգիտեմ ինչ կը խօսիմ, չգիտեմ՝ ինչ կ'ըսեմ։ Ա՛խ, զէշ երազ մըն է ասիկա. Օհա՞ն, մեղք եմ Օհա՞ն, սիրուհիդ եմ եղած, կը ինզըրեմ, կ'աղաչեմ քեզի, մի՛ քշեր ինծի պալատէն. չե՛մ կրնար, չե՛մ կրնար. Պահէ՛ ինծի հո՞ս, իբրև քու աղախինդ, իբրև քու հարճդ...»

ԿԱՅՍՐԸ. — (Վասիլին չոր) Հեռացո՞ւր այս կիսը հոսկէ։ ՎԱՍԻԼԻ ԼԵԿԱՊԵՏԻՆ. — (Կամաց մը ձեռքը կը դպցնէ անոր ուսին) Ելի՛ր, թագուհի՛, Լաեցի՛ր հրամանը։

ԹԷՅՖԱՆՈ. — (Մեկ ոսիւնով կը ցատկէ ոսքի) Քաշէ՛ ձեռքդ, լի՛րբ, սկի՞ւթ, ստրուկի՞ ծնունդ. Ինչպէ՞ս կը փայլին աչքերդ, ինչպէ՞ս ուրախ ես. հասար, հա՞, նպատակիդ. յաղթեցի՛ր. հիմա քու ձեռքդ է ամբողջ պալատը, հա՞... Այս բոլորը քու սարքած բաներդ են, քո՞ւ, քո՞ւ. (Կը յարձակի վրան ու բռունցիներ տեղալով անոր դիմիցին ու կրծքին) Շո՞ւն, շո՞ւն, կոտա՛ծ շո՞ւն, կոտա՛ծ շո՞ւն...»

ՎԱՍԻԼԻ ԼԵԿԱՊԵՏԻՆ. — (Ես-ես, ազատիլ ջանալով):

ԿԱՅՍՐԸ. — Քաշէ՛ ձեռքդ ե՞տ:

ԹԷՅՖԱՆՈ. — (Կը դիտէ ակնքարը մը եւ յանկարծ կը

վազն գահը) Ո՞չ, երբե՞ք, երբե՞ք. չըլլա՛ պիտի ատիկա,  
չըլլա՛ պիտի՛ ձեր նիւթածը. Ե՞ս եմ այս պաշտամին տէրը,  
Ե՞ս եմ այս գահին տէրը, Ե՞ս, Ե՞ս իմու է այս գահը, Կը  
հասկընա՞ք՝ ի՞մս, ի՞մս...

8

Նոյն միջոցին Վասիլ կ'երա դէպի սիւները, նուն  
կ'ընէ, Վեցեօրը ներքինի կ'արձանան մուտքին մօ:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Օգնեցէ՛ք թագուհին ու փո-  
խադրեցէ՛ք վա՛ր, նա՛ւը:

ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ. — (Վարանած կը նային ու չեն  
շարժիր):

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — ԶԼՄԵՑԲ'Ք:

ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ. — (Կը մօտենան գահին, ոս դնել  
կ'ուզեն):

ԹԷՌՖԱՆՈ. — Հեռու, ստրուկներ. չէ՞ք տեսներ՝ ով  
է կեցած ձեր դէմը: Ե՞տ. Ռումէական կայսերութեան թա-  
գուհին է, որ կը հրամայէ... (Կայսեր) Ո՞ւր պիտի զանհա  
ինծմէ աւելի զեղեցիկը, ո՞ւր ինծմէ աւելի վայելուշը  
այս գահին: Չե՞ս ըմբռներ, որ ևս ստեղծած եմ այս գահը  
զարդարելու և որ այս գահը ստեղծած է ինծի՛ զար-  
դարելու:

ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ, որ պահ մը ես իին խուած ակամա,  
կը բարձրանան վնուապէս պատւանդանը ու բոնել կը  
փորձեն բագուիթին բեւերը: Թէօխանօ բոլոր ուժովը կը  
փարբւի գահին: ՆԵՐՔԻՆԻՆԵՐԸ կը խուեն, գահիր կը տա-  
պալի: Վերջապէս կէս մը իրելով, կէս մը բեւերուն տա-  
կէն բարձրացուցած կ'իջեցընեն ու կը հանեն դուրս:

ԹԷՌՖԱՆՈ. — (Այդ միջոցին, ընդհատող ու կոպիտ  
պոռոցով, դիմադրելու շաներուն զուգընթաց) Ա՛... ա՛...  
ո՛չ: Այլքողջ գունդեր ալ, որ բերես, ո՛չ, ես հոսկէ հեռա-

ցողը չեմ...: Ո՞վ ես որ գուն... ո՞վ ես գուն... ի՞մս է այս  
բոլորը... Թողէ՛ք թևերս, թողէ՛ք... կը խածնեմ, թէ չէ կը  
խածնեմ... կարիճնե՛ք, կատղա՛ծ կարիճներ... Ա՛յ, օգնե-  
ց'էք, օգնեցէ՛ք, տարի՛ն, տարի՛ն ձեր թագուհին..., Զի՛  
մար Օհա՛ն, քեզի ալ չի մնար, չի՛ մնար...

9

Կայսեր, որ ամբողջ այդ վայրագ տեսարանի միջո-  
ցին կեցած է մեկ ձեռնովը աշերը փակած, այդպէս ալ  
անօսած կը մօս միւսներու նեռանալէն ետքը:

Թիշեիշ Շուրջը կ'ըսկսի մրնել, միայն գահի եղած  
տեղը մօւսուս լոյս մը, որ հետզնետէ կ'ըսկսի պարզիլ ու  
կ'երեւա կուսանցի խուցին մեկ անկիւնը: Մէջեղը հա-  
ռակուսի լուսամուս մք. Էովը սեղանի մը մեկ մասը,  
վրան պզնէն մեծադիր խաչելուրին, Լուսամուսի տախ-  
ակէ միակուր փեղկը բաց է: Այդ բաց փեղկին բիկն  
տած կեցած է Հաննա՛ կոյսի ներմակ հազուսներով.  
ինք դալուի: վիզէն ըղբայով կախւած է սեւ խաչե-  
լուրին մք. Զեռքը դրած լուսամուսի եղերին՝ երազկոտ  
աշերով կը նայի նեռուն ձիւնապատ լեռներուն, որոնք  
կը ցալան դուրսի պայծառ լոյսին տակ:

ԿԱՅՍԵՐԸ. — (Դանդաղ շարժումով ձեռքը վար կ'առ-  
նէ դեմէնին ու կը խօսի հատիկ հատիկ) Ահա՛ կեցած եմ  
նորէն, Հա՛ննա, Պետքար լեռան զլուխը. ահա՛ նորէն ես  
յաղթական, նորէն հտիս մահ ու խորտակում. նորէն  
ոիրատ թուխապ ու հոգիս խոռով...

ՀԱՆՆԱ. — (Հանդար խօսւածքով) Մի՛ կենար ու մի՛  
հայրի ետ. հտիգ անգունդ է:

ԿԱՅՍԵՐԸ. — Անդո՛ւնդ, գա՛ժան ու մթին:

ՀԱՆՆԱ. — Վե՛ր, մազլթէ վեր:

ԿԱՅՍԵՐԸ. — Արժէ՛: Եւ ո՞ւր Ահա զագա՛թ մը:

ՀԱՆՆԱ. — Անոնց համար, որոնց շունչը կարծ է:  
ԿԱՅՍՐԸ. — Բոլոր զագաթներուն ալ աս է եղածը:  
ՀԱՆՆԱ. — Բայց և այնպէս, քալէ՛, քալէ վե՛ր:  
ԿԱՅՍՐԸ. — Ո՞վ դուն, իմ հոգիիս անվերջ ձգտումը,  
իմ անհանգիստ, իմ անյագ հոգիիս անզուսազ ու թեաւոր  
ձգտումը. բայց ինչո՞ւ, ինչո՞ւ դուն, ինչո՞ւ այս ձգտու-  
մը. և մինչեւ ե՞րբ և մինչեւ ո՞ւր...

ՀԱՆՆԱ. — (Մատնանիթ լեռները) Մինչև ճերմակ բար-  
ձաւնքները, մինչև միզոտ կատարները, մինչև անհաս  
տենչանքները, մինչև մահուդ սահմանները...

ԿԱՅՍՐԸ. — (Տիրուր եւեցընելով զլուխը) Մինչև  
անհուն տենչանքները... մինչև մահուն սահմանները:

ՀԱՆՆԱ. — Վե՛ր, մազլու վե՛ր...

ԿԱՅՍՐԸ. — Այո՛... մասցածը բոլորովի՞ն ոչինչ է:

ՀԱՆՆԱ. — Վե՛ր, մազլու վե՛ր...

Կայսր դանդաղ շարժումով նորէն կը ծածկէ դեմք:  
Լոյս է: Նախորդ դանլինը նախորդ դիրէով:

10

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — (Կը վերադասնա, իլու մը շւար  
ու ձափլիկ կը մօտենա կայսեր) Ես քեզի ըսի, տէ՛ր, որ  
պէտք չկար այս աւելորդ աղմուկին. իզուր ընդունեցիր:  
Կանայք այդպէս են. մի՛ վշտանար, տէ՛ր: Այս պատերը  
շա՞տ են տեսեք նման կոլնչներ. տեսեք եմ ես ալ բա-  
նի՞-քանի կին զրկեր է հէնց ի՞նքը թագուհին, ա՞ն, որ  
կմա զնաց իր հերթին: Մի՛ վշտանար, տէր:

ԿԱՅՍՐԸ. — (Բացած է դեմքը ու մոլար նայւածով) Ի՞նչ կ'ուզես. ինչի՞ մասին է, որ կը խօսիս: Ա՞ն... ա՞ն  
ալ մնաց վա՛րը, հեռուն, Պետքար լեռան հաւեր:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Պետքա՞ր: Հա՛, քու յաղթանա-  
կիդ լեռը:

ԿԱՅՍՐԸ. — (Մասով) Յաղթանա՞կ, թէ՞ պարտու-  
թիւն. ո՞վ կրնա ըսեր: Ելքի՛ լեռը, կուբի՛:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Այն օրէն ժողովուրդը կ'ըսէ՝  
«արեան լեռը»:

ԿԱՅՍՐԸ. — (Յանկարծ) Լսէ՛, Վաս'իլ ես գիտեմ քու  
վարչական չնո՞րհքդ, գիտեմ շա՞տ կանուխէն:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — (Համես) Տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ. — Կը յանձնեմ քեզի, քու փորձառութեանդ  
այս անհանգիստ քազաքը:

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — (Համես) Տէ՛ր:

ԿԱՅՍՐԸ. — Սւելի ուշ՝ գուցէ և ամբողջ երկրին  
վարչութիւնը Գարունը բացւելուն պէս պէտք ունիմ իմ  
բոլոր ուժերուու:


ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — Դէպի... Բուլկա՛րիս:

ԿԱՅՍՐԸ. — Դէպի... «արեան լե՛ռը»: (Դուրս):

11

ՎԱՍԻԼ ԼԵԿԱՊԵՆ. — (Քիչ մը լուռ կը նայի տնոր-  
եսեւեն, վերջը նեզնան կը շարժէ զլուխը) Կա՞յր... աս՞...  
մեր այս հնաւանդ պետութեա՞ն... Դուն կը մնա՞ս իմ  
զօրավարո, իմ գործի՞քու Կոբւն ու յաղթանակը քեզի՛,  
բայց տիրելը քու բանդ չէ: Դուն զաներ կը տապալե՛ս,  
բայց զաները պահպանել չե՛ս կրնար: Ատիկա ե՞ս... ե՞տ  
կա՞յրը... ե՞տ (Զգուց կը մօտենա զանի պատւանդանին  
կը նայի տուրջը, աստիճան-աստիճան կը բարձրանա, կը  
տևի տապալած գանը, կը յարդարէ: Իր ծուած դիրէովը  
կը նայի ես, կը դիտէ մուսերը, որ տեսնող չըլլա, կա-  
մացուկ մը կը նախ զանին եզերք ու հանոյէն ձեռերը  
իրաւ տիելով կը ծիծաղի) Հի... հի... հի... հի...

Լոգան, 1914 մարտ



## ՄԱՏԵՆԱՇԱՐ «ՅՈՒՍԱԲԵՐ»

### ԼՈՅԾ ՏԵՍԱԾ ԵՆ

- 1.— ԼՌԱԾ ԶՐԱԴԱՑՀ , Հ. Զուտերման 2 Եփլին  
Թրգմ. Գ. Մխիթարեան
- 2.— ԻՆՉ ԶԵՐ ԵԻ ԻՆՉ ԶՊԻՏԻ ԼԻՆԻ  
ՄԵՐ ՈՒՂԻՆ Վ. Նաևասարդեան 1 Եփլին
- 3.— ՀԱՅ-ԹՐՔԱԿԱՆ ԿՆՁԻՌԸ Ռուբեն 6 ե. դ.  
Նախարարան՝ Վ. Նաևասարդեան
- 4.— Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՆԵԼԻՔԸ Վ. Նաևասարդեան 8 ե. դ.
- 5.— ԵՐԿՈՒ ԱՄԻՄ ԲՈԼՇԵՎԻԿԵԱՆ  
ԲԱՆՏՈՒՄ Բախչի Խշանեան 10 ե. դ.  
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳՃԵՐ՝ Վ. Նաևասարդեան
- 6.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ «ԼԻԿԻԻԴԱՑԻԱՆ»  
(Բոլշևիզմի սնանկութեան առիթով)  
Վ. Նաևասարդեան 7 ե. դ.
- 7.— ԷԶԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԵՆ Գ. Նժդեհ 5 ե. դ.
- 8.— ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵԻ  
ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ Վ. Նաևասարդեան 2 ե. դ.
- 9.— ԹԵՐԵԶ ՌԱՔԵՆ Էմիլ Զօլա  
Թրգմ. Գ. Մխիթարեան 15 ե. դ.
- 10.— ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ  
ՈՒՂԻՆ Վ. Նաևասարդեան 7 ե. դ.
- 11.— ԿԱՅՍՐԸ Լ. Շանք 10 ե. դ.
- 12.— ՀԱՅ ՄԻՏՔԸ Ն. Ֆրանգեան 3 ե. դ.
- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ Գին 3 ե. դ.  
Վ. Նաևասարդեան

ԳԻՆ 10 Ե. Չ.

Համբ

24090

2013

